

Արքայի գործեալ

ԱՐԳԵՍԻ ՄԱՍԻ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт искусств

АВЕТИК
ИСААКЯН
ОБ ИСКУССТВЕ



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1977

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ո. Պ. Գ. Ե Ս Բ Ի Շ Ո Ս Ե Տ Ո Ւ Տ

ՎԿԵՏԻՔ
Ի Ա Ա Վ Ա Վ Ա Վ
ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ


Հ 58786



5

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻ ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԵՐԵՎԱՆ

1977



7
Բ 75 ի


Կազմեց և տեսառը պատրաստեց
Ա.ՐԱ.Մ ԽնձիկՅԱՆ

Մանորագրույունները
Ա.ՐՄԻԿ ԽնձիկՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝
ԷԴՎԱՐԴ ԶՐԱՅՇՅԱՆ

Խ. 80101
703(02) — 77 74—77

© Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 1977



Աղ. Իսահակյան, զորձ՝ Մ. Սարյանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԻՄՈԽՈՎ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Մեծ գրողի, Ակարչի կամ երաժիշտի տեսական-քննադատական ելույթները արվեստի հարցերի վերաբերյալ՝ մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում ինչպես հետազոտողի, այնպես էլ ընթերցող լայն շրջանների համար: Դրանք ոչ միայն ամրողացնում են արվեստագետի թողած ժառանգության պատկերը, այլև մեծապես օգնում ավելի խոր հասկանապես նրա բուն ստեղծագործության հույսունելի ու գեղագիտական սկզբունքները: Բայց ոչ միայն այդ. մեծ արվեստագետի (որեւէն նաև՝ ինքնատիպ և խոր մտածողի) տվյալ գնահատականներն ու ասույթները լուսավորում և ընդլայնում են արվեստի ըմբռնման մեր ոլորտը, օգնում են ճիշտ կողմնորոշվելու գեղարվեստական երևույթների բարդության և բազմազանության մեջ: Ինարկե, գրողը կամ Ակարիչն արվեստի փաստերին մտնելուն է իր գեղագիտական սկզբունքների, ճաշակի և նախասիրությունների տեսանկյունից, և դա կարող է որոշ միակողմանիության կենք դնել նրա դատողությունների վրա: Բայց այդ հնարավոր միակողմանիությունը, գնահատականների սուրբեկութիվությունն անգամ յուրովի հետաքրքիր և ուսանելի են ընթերցողի համար: Չե՞ որ մենք գործ ունենք մեծ արվեստագետի և մեծ անհատականության հետ, որի մտքի ընթացքին ու ելևէջներին հաղորդակից լինելու ինքնին նոգելան հարստացման ու բավականության առլիցոր է:

Ավետիք հասհականն աղբախի մեծ արվեստագետ-

մտածող էր: Սպելի քան վեց տասնամյակ տևած իր առևզ-ձագործական կյանքի ընթացքում նա մշտապես խորհրդածել է արվեստի եռթյան և խնդիրների մասին, իր ըմբռնումներն արտահայտել նորվածների, հուշերի, նամակների, ինչպես նաև «իր համար» կատարած անթիվ գրառումների՝ հիշատակարանի կամ սեղմ ասուլյոնների (բանատեղծի խորով ասած՝ «խտացումների») մեջ:

Իսահակյանի գրական ժառանգության այդ՝ բավական պատկառելի ծավալ կազմող մասը, դժբախտաբար, սինչև այժմ քիչ է ծանոթ ընթերցողին և նույնիսկ նրա ստեղծագործության հետազոտողներին: Այն հանգամանքը, որ մենք սույն չունենք մեծ բանաստեղծի երկերի լիակատար (այսպես կոչված ակադեմիական) հրատարակությունը, բացասաբար է անդրադարձել հատկապես նրա ժառանգության «ոչ-գեղարվեստական» մասի՝ նորվածների, նամակագրության, մեծ ու փոքր գրառումների հավաքման և ոսումնափրառության վրա: Ծիստ է, որոն Իսահակյանի կենուանության ժամանակ նրա երկերի ժողովածուներում սկսեցին տեղ գտնել գրականության և արվեստի խոչորագույն գործիչների մասին գրած հուշերն ու լավագույն գրական-քննադատական նորվածները: Բայց դրանք առկա նյութի միայն փոքր մոտեն են կազմում և վերաբերում են գերազանցապես գեղարվեստական գրականության հարցերին: Այնուն Իսահակյանի գեղագիտական և քննադատական հետաքրքրություններն ընդգրկել են արվեստի նաև մյուս ճյուղերը՝ ճարտարապետությունը և կերպարվեստ, թատրոնը և երաժշտությունը:

Անա՛ այդ հարցերին վերաբերող նյութերի լավագույն մասը ի մի հավաքելու և ընթերցողին հանձնելու խնդիրն է հետապնդում ներկա ժողովածուն: Մրանով շարունակվում է «Գրողները արվեստի մասին» մատենաշարի հրատարակությունը, որի սկիզբը դրվեց 1969 թ. լուս տեսած «Թումանյանը արվեստի մասին» գրքով:

Այստեղ հնարավոր չէ մանրամասնորեն խոսել Ավ. Իսահակյանի գեղագիտական հայացքների մասին կամ ցուց

տալ ժամանակի ընթացքում նրանց կրած փոխառությունները: Այդ հարցերն առանձին ուսումնասիրության հյութ են: Ինչ վերաբերում է ճարտարապետության, երաժշտության, կերպարվեստի, թատրոնի և դրամատորգիայի գործիչների և երկերի գնահատականներին, ապա դրանք ինքնին աշնչան հաստակ են ու պերճախոս, որ դրանց ընդհանուր ընկրպման համար հասուն մեկնաբանման կարիք չի զգացվում:

Կողեւնը միայն նշել, որ այս գրքում հավաքված բազմազան և հաճախ խայտարդեան թվացող նյութերը միավորվում են մի քանի հիմնական գաղափարներով, որոնց իրականացումը եղել է Խանակյան-արվեստագետի նշանաբանու ու գերագույն նպատակը: Դա, ամենից առաջ, արվեստի մարդասիրական կոչման և ազգային եռյան դրույթների են: Ուշադիր կարդանք նշանավոր արվեստագետների, երաժշտական և գեղանկարչական երկերի, դրամատիկական ստեղծագործությունների ու դրանց բնմադրությունների և, մասնավուն, ճարտարապետական հուշարձանների մասին գրած հոդվածները, հուշերն ու ասույթները, և հեշտությամբ կհամոզվենք, որ Խանակյանն ամենուրեք որոնում և զնանատու է ազգային ոգոյ, բնավորության և պատմության սարմենակրուուն արվեստի տարբեր երևույթների մեջ: Բանաստեղծի դատողությունների հիմքը բոլոր դեպքերում աչք համոզմունքն է, որ՝ «Արվեստը ինքը ազգությունն է, ազգն է. տարբեր ազգեր՝ տարբեր արվեստներ. տարբեր արվեստներ՝ տարբեր ազգեր»: Իսկ ազգային արվեստի մեծության հիմնական չափանիշը Խանակյանի համար այն է, թե գեղարվեստը որքանո՞վ է նպաստու համամարդկային իդեալների իրագործման, մարդկային բնավորության կատարելագործման, գեղեցկացման խնդրին: ԶԼՇ՝ որ «արվեստի եռյանը պիտի լինի՝ մեզ բարձրացնե, վսկեմին տանի»:

Այս ըմբռնումից ելնելով, Խանակյանը հպարտությամբ կարող էր նշել համաշխարհային արվեստի պատմության մեջ հայ ժողովրդի ինքնաստիպ ալանդը՝ ի դեմք մեր միջնադարյան ճարտարապետության և ժողովրդական երգի,

Կոմիտասի և Սպենդիարյանի երաժշտության, Մարտիրոս Սարյանի հոլակապ կտավների: Այդ կողողները, նրա հոդվածներից մեկի վերնագրի խորերով ասած, «ամբողջ աշխարհն ան էն», և միաժամանակ մեր արվեստի անկրկնելի ինքնատիպության վկայագիրը: Հիշենք միայն նայ ճարտարապետությունը—մեր փառքը, մեր գոյության, ազնվության վկայականը, մեր ապրելու իրավունքը: Ու ունեցող ժողովորդները չեն մեռնում»:

Ենք կարող մի քանի խոր շասել, թե ո՞վ և ինչպե՞ս է ստեղծել ընթերցողի ուշադրությանը հանձնվող այս ժողովածուն: Այս գիրքը կազմելու գաղափարը մտահղացել և իրականացրել է ականավոր գրականացես և տերստարան Սրամ Ինճիկյանը, որի ամբողջ գիտակից կյանքը նայ գրականությանը և մշակույթին անձնուրաց նվիրվածությամբ ծառապելու մի գեղեցիկ օրինակ է: Ծորչ չորս տասնամյակ, սկսած 30-ական թվականների կեսերից, նա, ի թիվս նայ գրականության շատ որիշ հարցերի, անխոնջ եռանդով և զարմանալի նվիրությով զբաղվել է նաև Սվետիք Իսահակյանի ստեղծագործության ուսումնասիրության և իրատակությունների գործով: Դրա արդյունքը եղան Սրամ Ինճիկյանի բազմաթիվ մեծ ու փոքր ուսումնասիրություններն ու հոդվածները, բանահրական ճշումները, բանաստեղծի երկերի ժողովածուների օրինակելի հրատարակությունները: Սուանց Սրամ Ինճիկյանի այդ աշխատանքների անհնար է պատկերացնել Ավ. Իսահակյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությունը՝ այսօր և ապագայում: Հատկապես մեծ ծրագրեր ուներ գրականագետը բանաստեղծի ծննդյան 100-ամյակի նախապատրաստության կապակցությամբ՝ մենագրություններ, տեքստաբանական աշխատանքներ, ապագա ակադեմիական հրատարակության նախապատրաստություն: Վաղահաս մահվան պատճեռով (1975 թ. մարտ) այդ ծրագրերից շատերը մնացին չիրագործված կամ կիսավարությամբ:

Բարեբախտաբար, Ա. Խնձիկյանը հասցրեց հիմնականում ավարտել ներկա ժողովածուն կազմելու աշխատանքը: Սմենայն քծախնդրությամբ նա կազմել և դասավորել է ժողովածուի տեքստերը, դրանք քաղելով ոչ միայն տպագիր աղբյուրներից, այլև, մեծ մասամբ, բանաստեղծի ցարուցրիվ ձեռագրերից, որոնց լավագույն և ամենցելի գիտակն էր Արամ Խնձիկյանը: Մնացել էին միայն հասուլենուն ճշգրտումներ, մնացել էր գրել առաջարանը և ավարտել ծանրթագրությունները, երբ վրա հասալ մասն... Եվ ահա այժմ, կատարելով մի քանի անհրաժեշտ լրացումներ, մենք տպագրության ենք հանձնում այս գործը, որը և երա վրա թափված աշխատանքի ծավալով, և՛ իր գրական-հասարակական հշանակությամբ մի ամբողջ գիտական ուսումնասիրության կշիռ ունի: Կատարում ենք այդ բանը այն գիտակցությամբ, որ հրատարակվող ժողովածուն ոչ միայն կնապատի մեր մեծ բանաստեղծի գրական ժառանգության մի շատ կարևոր բաժնի մասապահանցմանը, այլև կլինի երա ստեղծագործությամբ աշներան անձնուրաց կերպով զբաղված գրականագետի վերջին մտահղացումներից մեկի իրականացումը:

ԱՐՏՈՒՐԱԿԵՏՏՈՒԹՅՈՒՆ



ԱՆԻ

Այստեղ երկնել են ճախճիները իմ,
Դարձել է այստեղ նյութը գաղափար,
Հագել է այստեղ երազը մարմին,
Չքնար երազը, որ չունի կոպար:

Ս.Յի՛, դու չես լոկ հողեղեն մի գանձ,
Դո՞ւ, ինքդ ես ոգին—մի ողջ ժողովորդ,
Ամեն ձև այստեղ ոճ է գերազանց,
Ամեն ինչ այստեղ—իմաստ ու խորհուրդ:

Ես հոգոս աշքով՝ անցած ու ներկա
Վիճակդ եմ տեսնում՝ նենված մի սյունի,
Որ մարտնչելով դարեր ոտընկա,
Մեռնում է կանգնած, եթե մահ ունի:

Սաղավարտակիր, ձեռքիս տեգ ու նես,
Կանգնել եմ բարձր բորգիդ կատարին,
Ուտանիկներիդ, ուսինկներիդ նես
Լսում ենք վառված սեգ զորավարին:

Տափաստաններից, խուժանը վայրագ
Հորդել է, եկել—նեղել զայրագին,
Ուզում է, Ս.Յի՛, ընկճել լուծի տակ
Քո ստեղծագործ, թևավոր ոգին:

Խաժամուծ, խուժան՝ անծաղր, անքանակ,
Դարեր խուժում են—խժդուծ, խոլարշավ,
Ծըշում խժաճապն, դնում են բանակ
Քո ցորենաշատ դաշտերում անքավ:

Եվ որոտում է շեփորը ռազմի,
Կովում ենք մտած արյուն ու քրտինք,
Դարեր կովում ենք ատամ ատամի,
Մեռնում ենք կանգնած, եթե մաս ունինք...

Քո հին թշնամին, ԱՅի՛, չե՞ս տեսնում,
Խուժել է նորից քո դաշտերի մեջ,
Բայց վառվում է դեռ մեր ակութներում
Հինավորց ովստի կրակը անշեշ:

Դո՞ւ, հին դրոշակ, դո՞ւ, բագին փառքի,
Հենվել եմ նորից քո անսան պունին.
Եվ սպասում եմ, և դարեր ոտքի
Քո իրավաբեր շեփորիդ ձայնին...

ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ ճարտարապետ Թ. Թորամանյանի
նիշատակին

Հայուննի դաշտում քայլում եմ մենակ.
Սշուն է արդեն, և ձյունը նորեկ
Ծածկել է լանջքը սեգ Սրբատի.
Հողմը սաստկաշունչ՝ հովկա մի քարդի
Նորաթեքել է աղեղի նման
Հայկ նահապեսի:

Սակայն իմ սուազ՝ կանգնել են ահա՝
Պատմության ահեղ հողմերին ընկճած,
Սյուներն հոյակապ հին ավերակի:

Դո՛յք, դարերի մեջ՝ դժար ու դաժան,
Երբ ամենացի ինչ ընկած էր տապատ,
Դո՛յք, ով երկնախտն գմբեթներ ու վեմ
Մնացիք ըմբռստ, մնացիք անսաստ
Բոնակալների շարության ընդդեմ:

Իմ ժողովուրդը՝ զարկված շլյայի,
Նշխարները սորբ, քարերը մամոռս
Պաշտեց, գուղգուրեց՝ հավատով անշեշ.
Դո՛յք, հզոր որմեր, կամարներ խրոխտ,
Նրա հոգու հետ խուցիք հոգով
Մեր քաջակորով նախահայրերի.

Խոսեցիք լեզվով անհուն գեղեցկի,
Եվ Աերդաշնակի, և բացարձակի:
Դո՞ւք, վեճ վկաներ մեր անմահ փառքի,
Մեր ստեղծագործ ոգու, հանճարի.
Բեկորների մեջ ձեր նվիրական
Ինչպես մանուկը՝ աշխարհից լքված,
Մայրական գրկում տեսավ նա իրեն
Պաշտպանված ամուր, պարխապներով կուր:

Ոգով Աերշնչված սուրբ բարերիդ մեջ
Իմ ժողովորդը՝ նիացքով արդար,
Մարմինը տեսավ իր երկնապաց
Վսեմ խոհերի, վեճ գաղափարի,
Եվ իրեն բարձր զգաց ոտխից,
Հպարտ և նզոր. և գոտեպնովեց
Իր անպարտելի, լուսաբաղ նոգու
Հալերժի համար անհաշտ պայքարի:

Հ 52786

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՑԱՆ

Թիֆլիս է դտնվում այժմ ճարտարապետ պ. Թորամանյանը:

Պ. Թորամանյանը հայ ներկա իրականության այն հաղվադյուտ անձնավորություններից մեկն է, որ նվիրված իր գործին, տարիներ անխոնչ, անշշուկ կատարում է իր մեծ գործը:

1903 թ. սկսած, դարունը բացվելուն պես, նա գնում էր Անի, հայկական ճարտարապետության մյուս վայրերը, մամուռ, խորտակված, ցիր ու ցան քարերը, ասես, կախարդական գավազանով, իրար միացնում, կյանք ու շունչ տալիս, լեզու պարգևում և խոսեցնում էր այդ վեհ և հինգուրց բեկորները՝ մի վսիմ, մի հոյակապ բարբառով:

Զինված ճարտարապետական զիտությամբ, և տարիների բազմաթիվ փորձերով, նա ձեռնամուխ եղավ հայկական ճարտարապետության կոթողների ուսումնասիրությանը:

Երբ նա 1903 թ. ելքուպայից եկավ Անի՝ մտադիր էր միայն մի քանի ամիս անցկացնելու, բայց ոգեսրվեց Անիով, խորասուզվեց, կլանվեց ուսումնասիրությունների մեջ և տարիներ՝ կրելով անասելի տնտեսական զրկանքներ—բարձրացրեց, կանգնեցրեց այդ խոնարհված, ընկճված ավերակներից ու դերբուկներից իսկական հրաշակերտ Անին, Անիի սեստավագրիոնը:

Մեկ-մեկ, ուշի-ուշով, խորաթափանց բմբոնողությամբ, համեմատությամբ և բազդատությամբ և մի վիթխարի համբերանը նա ուսումնասիրեց Անիի ամեն մի քարը, ամեն մի

անկյունը, ամեն մի բեկորը... և կերտեց, վերաշնեց, վերաստեց մեր քաղաքակրթության այդ մեծ օրորանը:

Եվ ամենայն իրավունքով ակադեմիկ Նիկ. Մառը ասել է իր ուսումնասիրությունների մի տեղում՝ պ. Թորամանյանի մասին, թե՝ «Այդ քարերի լեզուն մեզ սովորեցնող առաջին ուսուցիչն է այ. թ. Թորամանյանը»:

Այդ տոկուն և համեստ գիտնականին չճանաչեց և չգնահատեց Հայ Հասարակությունը. արդյո՞ք մեր անկուլտուրականությունն է մեղավոր, թե ինքը՝ ապլոմբից զորիկ՝ պ. Թորամանյանը. սակայն փաստը մնում է փաստ, որ նրան ցանկալի շափով շենք Հայկանում և գնահատում:

Այնինչ, երբ 1908 թ. նրա նկարները ներկայացրին Կայսերական Գիտությանց ճեմարանին՝ նա մեծ Հիացմունք պատճենեց գիտության մարդկանց և ստացավ ճեմարանից օբյեկտիվ գնահատումն:

Հայտնի բյուզանդագետ ակադեմիկ Կոնդակովը, որ մինչ այդ Հոռետեսորեն էր տրամադրված գեպի Հայկական ճարտարապետությունը, չէր բնդունում Հայկական անկախ ճարտարապետական ոճ և Համարում էր Հայկականը բյուզանդական արվեստի մի Հարազատ ճյուղը, տեսնելով Թորամանյանի գործը, փոխեց իր կարծիքը և Հայտնեց, թե՝ պ. Թորամանյանը Համաշխարհային գիտության Համար նորություն բերեց, ապացուցեց Հայկական ուրույն ոճ՝ ամենատաղանդավոր կերպով. նույնը վկայեցին և գեղարվեստական ճեմարանի տեսուչ պրոֆ. Սուլթանով, Օլգենբուրգ և Նիկ. Մառ՝ տալով Հայ ճարտարապետին մի պատվո վկայական, ուր քննվում և հաստատվում է նրա գիտական-գեղարվեստական արժեքը: Եվ միևնույն ժամանակ արվում է նրան որոշ դյուրություններ, միջոցներ և իրավունքներ ապագա ուսումնասիրությունների աշխատանքների համար:

Բացի Անիկից, նա նույն մանրակրիտ աշխատանքով և մեծ տաղանդով կատարված ուսումնասիրություններ ունի բազմաթիվ ուրիշ վայրերի մասին. Հոռոմոսի վանքերը, Երեւուրի նշանավոր բազիլիկը, Բագնայրի վանքերը, Խցկոնքի,

Ալամանի, Տեկորի, Մըհնի, Բագրանի վանքերն ու մյուս ավերակները՝ Երվանդաշատը և Երվանդակերտը, Աբարանը, և Էջմիածինը՝ Մայր տաճարը, և Հռիփսիմին ու Զվարթնոցը, Գեղարդա վանքն ու Գառնին (Տրդատա Հովանոցը) և Օլիմի նշանավոր Բանա վանքը: Նա այդ ամենքի հատակագծերն է վերցրել, քանդակներն ու ամեն մի քարը նկարել, վերաստեղծել, նորր հնից բաժանել, զտել, զտել նախնականը, հինը, էականը, զտրու բերել հայկականը, մի քարից, մի բեկորից ստեղծել, կազմել ամբողջը, սինթեզ արել, և միննույն ժամանակ գրել նրանց մասին պատմական-գիտական հետազոտություններ:

Հսկայական գործ է, այդ անխորտակելի, տոկուն մարդու արածը, մի զարմանալի կամք, մի մեծ սեր, որ տարիներ անվերջ ողի և ուժ է ներշնչել այդ գիտնական մարդուն. միննույն ժամանակ իսկական բանաստեղծին, որը հափշտակ-ված իր մեծ իդեալով՝ անցրել է մի շարքաշ, աղքատ գոյություն, և եղել է միշտ զվարթ, միշտ ուրախ ու կատակող և եղել է միշտ բախտավոր...

Հիացմունքի և խորին, խորին հարգանքի արժանի մի մարդ, որ եթե օտար լիներ, հայ չլիներ, չպիտի գտնինք խոսքեր նրան փառարանելու, սակայն, նա համեստությամբ և առանց շառաչի անում է իր սրտի ուղածը, կատարում է իր պարտը և երջանիկ է...

* * *

Պ. Թորամանյանը նկարել-վերստեղծել է 4000 մոտիվ (նկարներ) ոչ թե ֆոտոգրաֆիայով, այլ ձեռքով, տուշով-մատիտով, նորր, մանրաքննին, բազդատական ուսումնասիրությամբ կատարված նկարներ՝ գունավոր և սե:

Իհարկե, հեշտ է ասելը 4000 նկար, և բացի այդ նա գրել է և բազմաթիվ գիտական հետազոտումներ—«Մուրճ», «Գեղունի», «Ազգագրական հանդես», «Մշակ», «Հուշարար», «Անահիտ», «Ախուրյան», «Գեղարվեստ» թերթերում և հանդեսներում:

Պրոֆ. Մաոր թարգմանել է նրա մի աշխատությունը

«Հչումիածնի Մայր տաճարի» ժամանակ, որը տպվել է Գիտության Ակադեմիայի ծաղքով, ապա լույս է տեսել և հայերեն բնագիրը:

Վերջերս լույս տեսավ և «Ո՞րն է իսկական Հռոմուսի վանքը», տպված 1910 թիվ, Ալեքսանդրապոլ: Հիմա տպվում է նրա մի մեծ աշխատությունը՝ «Տեղորի տաճարը», այդ հայկական ամենահաջին կոթողը, որ հարգելի գիտնականը ապացուցում է, որ նա հեթանոսական մեջյան է եղել, որ ԻՎ դարում փոխարկվել է քրիստոնեական տաճարի, և նրա մեջ պետք է որոնել հայկական գեղարվեստի անաղարտ ոճը:

Բացի այս տեսական ուսումնասիրություններից, մեր նվիրական ավերակների այդ բանաստեղծը ամեն ջանք գործ է զրել իրեն հարգողների միջոցով կարկատել, նեցուկներ զնել փլշող ավերակների տակ. նրա ջանքերով կործանումից առաջ դրմ ազատվեցին Անիի Առաքելոց վանքը և Հովվի շքնազ եկեղեցին:

Յանկալի է վաղօրոք լույս ընծայվեն նրա երկերը—նկարները, որոնց համար տասնյակ հազարներ են հարկավոր. այդ նկարները լույս աշխարհ գալուց հետո, աշխարհը կտեսնի. թե՛ ի՞նչ մեծ վարպետների ողին ու ձեռքն են սավառնում դրանց վրա:

Մինչ այդ, մեր՝ հայ գիտակից տարրի պարտականությունն է օգնող և ընծեռող լինել այդ անզուգական, համեստ և մշտեռանդ մարդուն, որ շարունակե իր մեծ գործը, որի պահպանը հայկական ճարտարապետության վերածնունդն է՝ իր ամբողջ հասակով, ինքնուրուցնությամբ և պատկառելությամբ:

* * *

Կենսագրական մի երկու խոսք. պ. Թորամանյանը ծնվել է 1864 թվին, Թուրքա-Հայաստանում, Շապին-Գարաջիսար քաղաքում... նախնական կրթությունը առել է Հայրենիքում, ապա 1884 թվին զնացել է Կ. Պոլիս, ուր մտել է Կայսերական Գեղարվեստից Ճեմարանը, և 5 տարուց հետո հաջող ավարտել. Ապա ճանապարհորդել է Եվրոպայում, տեղն ու տեղը

ուսումնասիրել զանազան ոճերը, հետո Պարիզում շարունակել է իր ուսումնասիրությունները, անցել Եգիպտոս և կլասիկական վայրերը դիտել: Շատ շենքերի նախագծեր է տվել և իր ապրուստը հայթայթել է, մեծ մասով, որպես աղատ արվեստագետ:

Պ. Կարապետ Բասմաջյանի Հրավերով՝ 1903 թվին եկել է Անի, և այդ թվականից սկսվում է նրա մնայուն և անդնաշատելի գործունեությունը:

1911

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐՍՄԱՆՅԱՆ

Թորոս Թորամանյանի հետ ծանոթացա բանասեր Կարապետ Բասմաջյանի միջոցով՝ Ալեքսանդրապոլսմ (Լենինական), 1903 թ. աշնանը: Նրանք այդ նույն թվականին էին եկել արտասահմանից, և ամառը միասին անցկացրել էին Անի քաղաքում հետազոտությունների համար:

Կ. Բասմաջյանը մեծ գովեստով խոսեց ճարտարապետ Թորամանյանի գիտության և կարողությունների մասին և խնդրեց ինձ և ընկերներիս, որ աշակենք նրան, ինչքան կարող ենք:

Քաշված, անշուր ու լուռ մարդու տպավորություն թողեց ճարտարապետը ինձ վրա:

Այս առաջին հանդիպումից հետո, կարծես նա անհայտացավ, մենք էլ մոռանալու վրա էինք նրան, երբ նույն տարվա ձմեռը, պատահաբար, հանդիպեցին նրան: Ես Վաղարշապատի գնում, նա՝ ևս: Միենույն վագոնում, լուսամուտի առաջ, նստեցինք դեմ առ դեմ և սկսեցինք զրույց անել: Ես հարցրի առաջիկա տարվա ծրագրերի մասին:

«Անի քաղաքում պիտի աշխատեմ, նովատակս այդ է...»:

Հանկարծ ընդհատվեց զրույցը: Զյունի ճերմակ գաշտերի վրա, ձմեռվա պարզ, կապույտ երկնքի տակ, ցերեկվա պայծառության մեջ ձգվեց Անիի կարմրավուն պարիսպների կախարդիչ կարավանը, որ շարժվում էր, քայլում, և մոտենաւմ էր մեզ ավելի ու ավելի... բայց երկաթուղին վազեց, անցավ Անին, սուզվեց բլուրների ետև...

— Այո, — շարունակեց Թորամանյանը, — երկար տարիներ պիտի աշխատեմ այստեղ, ողջ կյանքիս ընթացքում. սակայն մի կյանքն էլ կարձ է Անիի անսահման գանձերն ուսումնաւորելու համար:

Ապա ոգևորված խոսեց իր ծրագրերի մասին — մեծ, ստեղծագործ ծրագրեր — մի նոր աշխարհ բանալ մեր արվեստի պատմության մեջ, պանծացնել մեր հոյակապ ճարտարապետությունը:

Ես խանդավառված լսում էի նրան, հոգեփոխվեց նա աշքիս և շատ արժեքավորվեց:

Թ. Թորամանյանը ձմեռները զրեթե միշտ ապրում էր Ալեքսոլում: Այնտեղ զասավորում էր իր հավաքած նյութերը. գրում էր իր ուսումնասիրությունները նրանցից ծագած արդյունքների, եղբակացությունների մասին:

Ալեքսոլում թեև անտեսում էին նրան ճարուստ շրջանները, սակայն մատավորականները հարգում էին նրան, մանավանդ նա շատ սիրված ու գնահատված էր քաղաքի արհեստավորներից, մասնավորապես, որմնագիր վարպետներից, որոնց հոչակը շատ տարածված էր Անդրկովկասում:

Հաճախ տեսնում էի նրան ժողովրդական սրճարաններում համբավավոր վարպետների հետ զրուցի մեջ՝ շինարարական արվեստի վերաբերյալ:

Եվ պիտի ասեմ, որ մեծանուն ճարտարապետը իր դեմքով և շարժուձևերով զրեթե չէր տարբերվում ուսում շառած, այսպիս ասած տնարույս, ավանդապահ՝ վարպետներից՝ մաղուս երես, անխնամ հազուստ, գունավոր մեծ թաշկինակ. ծխախոտի ժողովրդական տուփ ու սարբ...

Մեր վարպետները խորին հարգանքով տեղ էին տալիս նրան՝ վերի զուուը սրճարաններում և իրենց հարկերի տակ, և ճարտարապետ էին կոչում նրան:

«Ճարտարապետն եկավ»;

«Ճարտարապետ, ի՞նչ կուզես»:

«Ճարտարապետին սուրճ բերեք»:

Կային մարդիկ, որ չգիտեին նրա իսկական անունը: Իր կոշումի անունով էին ճանաշում նրան:

Իսկ Անիի և ուրիշ ավերակների մոտ և հեռու գյուղերում կարծում էին, թե «ճարտարապետ» հատուկ անուն է: Եղել են դեպքեր, որ գյուղերում նորածինների անունը ճարտարապետ են դրիլ:

Ճարտարապետը, — ես ել բազմության պես, յուրացրել էի այս ձեր, — 1903 և 1905—6 թվականներից սկսած աշխատում էր Անիի մեջ և շրջակայրում, Կամսարականների Շիրակուո՞յ Մաղասաբերդ, Հոռոմոսի վանք, Տեկոր, Մրեն, Բագնացիր, Բագրան...»

Այդ թվականները և մանավանդ հաջորդող տարիները Անիի պեղումների և հուշարձանների հետազոտման հերոսական շրջանն էր, որ բացել էր ակադեմիկոս Մանսիր ուսուել հայ աշակերտներով, որոնց մեջն էր հետազայի մեր տաղանդավոր ակադեմիկոս Հովհանի Աբգարի Օրբելին:

Ես հաճախ ացցելում էի Անիին, համարյա ամեն տարի, երեմն տարին մի երկու անգամ:

Ճարտարապետը շատ էր սիրում լավ որակի սուրբ և ծխախոտ, ինչպես և Անիի վանահայր սրբանշելի Միքայել վարդապետը:

Սրբազն պարտականություն է, որ դոնե մի-երկու խոսքով պատմության համար արձանագրենք Անիի ավերակների այս անձնվեր պահապանի անունը, որ սրտագին սիրում էր ճարտարապետին, նրա հետ կիսում էր իր հայր, խնամում, հոգում էր նրա կարիքները: Երախտապարտ ենք այս անհայտ, մեծահոգի մարդու հանդես:

Պայման էինք կապել մեր միջն, որ ես ճարտարապետին և վարդապետին սուրբ և ծխախոտ տանեմ, իսկ նրանք կերակրեն ինձ Անիում եղած ժամանակս:

Անմոռանալի գեղեցիկ պահեր եմ ապրել նրանց հետ շրմաղ Անիի մեջ:

Մի տարի այնտեղ էր տաղանդավոր դերասան մեր սիրելի վրուցքը, որ լուսանկարում էր մայրաբաղարիս հուշարձանները:

Երեքով միասին էինք շարունակ թափառումների, դեպքումների բոլոր ժամանակ:

Երկուսն էլ շափաղանց հաձելի ընկերներ էին՝ դվարթւ սրամիտ, կատակասեր:

Մի շարաթաշափ մնում էի նրանց հետ և ցավով բաժանվում էի՝ խոսք տալով նորից զալու, և կատարում էի խոստումը: Այնքան քաղցր էր նրանց ընկերակցությունը նրանց դործերի հմայիչ մինուղրափի մեջ:

Երբ լինում էի Անի, վաղ առավոտից սկսած մինչև կեսօր նրանց հետ այրվում էի բարկ արելի տակ, օգնում էի նրանց դործիքները տանելիս, սարքելիս և ուրիշ բաների մեջ: Կեսօրին զանում էինք տուն ճաշելու: Միքայել վարդապետը պարաւասել էր ճաշը, սեղանը բացել և սպասում էր մեզ: Հանգչում էինք ճաշից հետո և նորից գործի անցնում: Իսկ երեկոները մինչեւ ուշ դիշեր նստում էինք բացօթյա, ծխում, սուրճ խմում և անվերջ զրոյց անում:

Երբեմն լինում էինք ակադեմիկոս Մառի մոտ, երբ նա հանգստանում էր ամբողջ օրվա աշխատանքից հետո և սիրով զրոյց էր անում մեզ հետ:

* * *

Մի օր ճարտարապետը շափում ու դժում էր Անիի ծիրից մեջ զանվոզ «Հովվի» փոքրիկ եկեղեցին, իսկ վրաւը լուսաւ նկարում էր:

—Այս եկեղեցին պատիկ մի գոհար է, նուանը շունի, բացց դժբախտարար շատ է խարխլած և խոպան կործանվելու վրա է, —թախծով ասաց ճարտարապետը, —արդյոք չե՞ս կարող Ալեքսում մի հանձնաժողով կազմել, զրամ հավաքել, որով կարելի լինի որոշ տեղեր կարկատել, նեցուկներ գնել, որ շմեռնի: Ափսոս է, ի՞նչ ես ասում, մի լավ մտածիր: Շատ փող պետք չէ:

Նրա ամենից քաղցր ձայնով ասած այս խոսքը բնակ մտածել շտվեց ինձ: Խոսք ավի կատարել սիրելի բարեկամիս փափաղը: Եվ Ալեքսում քաղաքացիներ նիկողայոս Կարապետյանի և Վալյարշակ Ստեփանյանի հետ իսկույն հավաքեցինը մոտ 1000 ոսւրի: Սա հերթաթաշին նվեր եղավ ճարտարապետի համար, որ անմիջապես գործադրեց պստիկ գոհարի պահպանման նպատակին:

Ասացի, որ երեկոնքը զբուց էինք անում. բնականաբար, մեծ մասով զրուցը Անիի պատմության և Հայ ճարտարապետության մասին էր լինում:

Անհուն ճմտություն ուներ նա ազգերի կառուցողական արվեստի մասին. Համեմատում էր զանազան ոճեր իրար հետ և դուրս բերում ուների ծագումները, բնաշնչումները; փոխադարձ աղքեցությունները: Այցելած, ուսումնասիրած լինելով մեր կոթողները և հուշարձանները բազմաթիվ վայրերում՝ նա սպառի կերպով խորամուխ էր նզել՝ մեր նախնիքների շինարարական արվեստի էության մեջ: Նա ընդհուպ մոտեցել էր Հայ արվեստի արմատներին, որ զանվում են Հայկական բնաշխարհում. նա պեզել, փորփրել էր, հետազոտել էր Հայագույն արմատները, որոնցով սնվել և բարձրացել է Հայ մեծ արվեստի շենքը: Այսպիսով մեր արվեստի միտուիկան, նրա մթամած խորհուրդները մերկացած բին նրա որպառող, թափանցող իմացականության առաջ:

Մեր բնաշխարհի ամեր կամ կիսամեր շենքերը շոշափել էր նա, շափել, գծել, Համեմատել, Համադրել: Եվ գտել, զտել, բուրեղացըրել էր Հայկականը, ինքնահատուկը, աղքալինը, Հայ անհատականը: Եվ տիրապես կուլ-կոփել էր իր հոյակապ տեսությունը Հայ արվեստի նկատմամբ: Շատ կարգացված և լավ մարսված զրբի պես զոց զիտեր նա մեր արվեստի բոլոր էջերը, նույնիսկ տառերը, շենքերի սցուները, պատվանդանները, խոյակները, կամարների և զմբեթների ձեւերը, քանդակները, զարդանկարները և ամեն մի բեկորը:

Եվ ամենը տեղին ու անթերի:

Իսկ Անի՞ն... Անին նրա համար ասպրող, շնչող իրականություն էր: Անիի անցյալը նրա աշքում կենդանի ներկա էր. նա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները: Կում էր անցյալի ձայնը, զգում էր անցյալը:

Անիում նրա համար մեռած կամ կիսամեռ փլատակ բան չկար: Բոլորը պարիսպներով, տաճարներով, բուրգերով աշտարակներով, բոլորը նրա առաջ լրիվ կանգուն էին՝ անթերի և կատարյալ, որովհետեւ բոլորը նա վերակառուցել էր արվեստագետի իր հրաշագործ և ճշգրիտ երեակացության

մեջ՝ Կարծես նա աշքով տեսել էր այս հոյակառ շենքերը կառուցող վարպետներին, խոսել էր նրանց հետ, աշակերտել էր, միասին աշխատել, և այսպիսով որսացել էր նրանց վարպետության գաղանիքները։ Ականատեսը և զործակիցը միայն կարող էր լրիվ այսրան դիտենալ:

Եթե չեմ մոռացել, նա զիտեր, բացի Տրդառ Հանձնարեր Առարարապետից, նաև մյուս վարպետների անունները և նրանց սիմվոլները։

Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա Թորոս ճարտարապետը այդ քարացածը վերածել էր կենդանի երգի։ Նա մեր հոյակառ ավերակների և հուշարձանների նույնքան հոյակառ երգիչն է։

Հիշում եմ մի անմոռանալի, նվիրական պահ։ Ուշ երեկո է, հայկական բարձրավանդակի օգոստոսյան անբացարեկի պայծառ գիշեր, լիալուսին, խակական լուսին՝ արծաթ ու բյուրեղի նստել էինք Մայր Եկեղեցու հանդեպ, քարե մի սեղանի առաջ։ Արծո-Առիք լեռներից (Ալանա) Հոսում է մի զով, մեղմ, կաղզուրիչ հով՝ Շիրակի գաշտերի հոտավետ շոր խոտերի, ծեթրոնի և վայրի ծաղիկների բույրը հետը բերելով։ Շնկշնկում է Հովը ավերակների մեջ, փսփռում է, խոսում է որտեղ հետ։ Հովը շի խոսում, ոպիտացած ավերակների հինա վուրց քարերն են խոսում՝ որտեղ հետ, գաղափարացած, իմաստավորված քարերը, վսիմացած և հավերժական քարերը…

Ծխում ենք անվերջ և լուս ենք բաղաքների մայր Անիի գիշերային լուսթյան մեջ։ Սուզվել ենք մի երազային տրամադրության մեջ։

Անին արդեն ինքնին տրամադրություն է։

Ծեն և աղմկալից աշխարհից կարված, ամայության և լուսթյան մեջ մեկուսացած, նա կախարդում է քեզ, զերում է, աիրապետում է Հովուղ և ոզովում է քեզ մի Հատուկ արամադրությամբ։ Երբ խրսխացող պարփակներից ներս ևս մտնում Հնագարյան քաղաքը, առօրյա իրականությունը հեռանում է քեզնից և ոչնչանում, և տեղափոխում ես վայրկենարար, անցյալի մեջ, Հին տեսիլներին։

Ամեն մի այցելու իր պատճական գիտելիքների և երեակայության ուժի շափով սիրում է պատկերացնել վազուցվաանցյալը, կենդանացնել նրան և ապրել նրա ապրած կյանքով:

Նայում եմ Մայր եկեղեցուն, որը լուսնի անբջացին լուսի տակ ուրու է դառել, գեղեցիկ, անծայր գեղեցիկ, անհյութացած, որ թվում է, թե ահա թոշելու է վերև, երկնքի անշունի մեջ, զնալու Պատոնի գաղափարների-իշեաների աշխարհը, նստելու այնտեղ անմահ, Հավերժական, կատարյալ ձերբի, նախատիպերի կողքին, իր գոհի վրա, որից իշել էր ներքե, չայց երկրի վրա:

Զեռքս մեկնելով տաճարին ասում եմ,

—Գեղեցիկը այսբա՛ն կլինի, ճարտարապետ, ուա ո՞եր Պարթենոնն է:

—Ճշմարիտ է. միայն այն տարբերությամբ, որ Պարթենոնը մարմարիոնից է, իսկ մերը Հայկական Համեստ տոփքարից:


Լուսվյունը խզել էր արգեն, և Թորոս ճարտարապետն իր թափ, անդորր և խորունկ ձայնով սկսեց խոսել մեր արվեստի մասին:

—Մեր արվեստը,—ասաց նա, —անազդար կերպով անտեսված է, բայց նա իր արժանավայել տեղը գրաված է, ուղինան չուղինան: Եվրոպան իրենից գուրս կամ հզոր ազգերի արվեստից գուրս բան չի ճանաչում: Հայն ի՞նչ է, որ արվեստուննա... այսպես են մտածում նրանք: Թող այդպես մտածեն, մենք մեր գործը կտեսնենք:

—Հայերը էն զլխից կասուցող են եղած:

Սրարատն ու Մանու երկրները, որոնց միացումով թերես սերել է Սրբինի, Սրմենի երկրանունը, լի են Յոյշակապշենքը, որոնց մնացորդները տեսնում ենք Վան-Տոսպում, Սևանի ափերում և այլուր...

Հայերը այդ նախահայրերից ժառանգել են շինարարության արվեստը: Քարաշատ Հայաստանը մեր ճարտարաներին և վարպետներին տվել է անսպաս նյութ: Մեր քարակոփները, մեր որմնադիրները իրենց ձեռքի տակ ունեցել են մի կերպ-ընկալ, չլու միջոց՝ մեր Հրաբխային քարերը, որոնց հետ խա-



Ալեքսանդր Հանոնի լուսահանդիպ. Պաղպան լուսահանդիպ, Բաղդադի լուսահանդիպ, Ա. Խաչատրյանի լուսահանդիպ, 1946:



Ազգ. Իսահակյանը Մ. Սարյանի հետ, 1955:

դացել են մերոնք և ցանկացած ձեզ տվել, կաղապարել նրանց:

Մեր ժողովուրդը այդ հլու, հնագանդ նյութի մեջ մարմա-

նացրել է իր հոգին, բաղձանքները, երազները, ճաշակը...

— Ինչպես է ստեղծվել մեր արվեստը:

Դա իր պատմությունն ունի, որ կարելի է պատմել հանգըրվան առ հանգրվան, զար առ զար: Մեր ժողովուրդը տակավին իր նախնական վիճակի մեջ ընդունել է նախահայրերից որոշ հիմքեր, խառնել է նրանց հետ իր տարերքից բխած նորություններ, կրել է նաև ազգեցություններ հարեաններից՝ պարսիկներից և Միջագետքից, յուրացրել է, շաղախել իր ունեցածի հետ՝ ավելացնելով նոր տարեր, նոր զգայություններ: Համաձայնեցրել է շինանյութերի հետ, կլիմայի հետ, ներդաշնակել է բնանկարի՝ պեյզաժի հետ և մտավոր, հոգեկան, կենցաղային պահանջների հետ:

Եվ, այսպիսով, ստեղծվել է զարերի չանքով և կուտակումով հայկական ոճը՝ ինքնուրույն կնիք, որ այլևս անբեկան է:

— Անին հայկական մշակույթի հայելին է: Լավ նայիր. Մայր եկեղեցուն, հայեցարա՞ր նայիր. նա մեր ոճի ողին է: Տե՛ս ինչքա՞ն վասն է, որովհետև պարզ է: Պարզ է, որովհետև նա մաղվել է զարավոր մշակույթի միջից, զավել, թօթափել է վրայից ավելորդ բաները, զառել է բցորեղ:

— Երբ նայում ես Մայր եկեղեցուն կամ Տեկորի, երերութի, Հոփիսիմեի տաճարներին, թվում է թե լուսեղեն տեսիլքի. մեջ տեսնում ես նրանց: Ուրիշ ազգերի արվեստների գեղեցկությունը հուզիչ է, հաճախ զրոյող և խոռվիչ, իսկ մեր արվեստի գեղեցկությունը անզորրող է, հանգստացնող, հայեցողության տանող:

— Այս է հայ ճարտարապետական արվեստի էությունը, նրա փիլիսոփայությունը:

— Երբ արգեն կատարյալ մարմին առավ մեր ոճը, սկսեց ձառագայթել:

Մեր բարբարոս բարձրավանդակից իշան, տարածվեցին մեր արվեստի շնորհները գեղի Բալկանները, Բյուզանդիոն, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա: Մեր զաղթական վարպետ-

ները, մեր թոնդրակեցի հալածական ձարտարները, արշավող աղջերը տարան այդ շնորհները, որոնք եղան ներշնչման, մտածման, նմանության, թելագրման և նորությունների աղջակներ բյուզանդական, գոթիկ, ոսմանական և նույնիսկ արաբական արվեստների համար:

—Սա շատ ծանր խնդիր է, որ Եվրոպան դժվարությամբ պիտի ընդունի, իր պատվին չի կերցնի, անշուշտ, բայց իրողությունը պիտի հաղթանակի:

—Մի բան պարզ է մեծամիտ Եվրոպայի համար, որ Հայաբնական արվեստը բնավ կախված չէ եղել վերև հիշված արվեստներից, որովհետև նրանցից առաջ գոյություն է ունեցել.

—Իմ տեսակետով, ազգեցության հարցը երկրորդական է, բավական է, որ մեր արվեստը իր անժիշտելի տեղն ունի ընդհանուր ազգերի ձարտարապետական արվեստի պատմության մեջ:

—Մրանով ես Հպարտ և մի և միխթարլած:

Թորոս ձարտարապետը այսպես վերջացրեց իր խոսքը:

Երբ ես Հիացած նայեցի նրան, նա գենքը հառել էր Մայր Ֆեղեցուն, կարծես, վերացած, լուսության մեջ, հիմա էլ հոգով խոսում էր Մայր Էկեղեցու հետ, հայոց ձարտարապետության ոգու հետ:

Եվ մտածում էի՝ ինչպես այն բաշված, անշուք Թորոս Թորամանյանը իր սիրալի գործով բոլոր ժամանակների հայ ժողովրդի համար զառավ Թորոս ձարտարապետ, և մեծացավ, պատմականացավ, անմահացավ:

Երբ 1926 թվին Եվրոպայից վերադարձա հայրենիք, մոտ 15 տարի կար, որ ձարտարապետին չեի տեսել: Ժամանակն իր դաժան դործը տեսել էր՝ ծերացել էր նա, սպիտակել, շտուպարատացել էր և սիրաը հոգնել էր, բայց տրամադրությունը բարձր էր. նույն լավատես, տոկուն, համով, պարզասիրտ մարդն էր:

Նոր էր ապաքինվել ավտոյի մի ծանր արկածից, որից կրած սարսափի և ցավերի մասին պատմում էր ծիծաղով: Շարունակ անդրադառնում էր իր ձեռագրերի, նկարների, գծագրությունների մի մասի անդառնալի կորուստի մասին.

որ պատահել է թուրք բանակի Շիրակ և Ալեքսանդր Ներխուժման ժամանակ: Երբ Հիշում էր այդ աղեալը, գեմքը մթնում էր ցավազնորեն, Հոնքերը ավելի էին թանձրանում աշքերի վրա, ուր արցունք էի տեսնում:

Սրդեն ձեռնամուխ էր եղել իր հոյակապ գործին՝ «Նյութեր Հայ ճարտարապետության», որի համար տառապելը նահատակվել էր նա իր ողջ կյանքում, մի մոնումենտալ գործ, ուր պիտի խտանացին իր բոլոր հայտնությունները, մեր արվեստի վերաբերյալ իր պանծալի տեսության հիմնավորումը:

Անսահման նյութ ուներ կուտակած, քառային վիճակի մեջ, որին պիտի հաղթահարեր այդ մեծ մոնումենտը կառուցցելու համար: Սարսափի էր պատում ինձ, երբ նայում էի թղթերի, նկարների, գծագրումների այդ հսկա գեղին, բայց նա եռանգով և սիրով, համբերությամբ օրեցօր կարգի և ձեր էր զնում այդ քառով, միկնույն ժամանակ և միջոց էր գտնում նոր պեղումների մասնակցելու, նոր նյութեր կուտակելու:

Հիշում եմ, 1929 թվին ինչպիսի երիտասարդական ավյունով իր մտերիմ ընկեր, մեծագույն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հետ գնաց երերութի նշանավոր բազիլիկի որմերը ամրացնելու նախապատրաստական աշխատանքների համար՝ «Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեի» կողմից:

1930 թվին, զարնանը, վերստին արտասահման մեկնելիս «մնաք բարեկ» գնացի ճարտարապետին, Վաղարշապատ Գիշերեցի մոտը: Միասին գնացինք Զվարթնոց: Ուզեցի թերեւ վերջին անգամ տեսնել այս անկրկնելի գեղեցկությունը: Երկար գեղերեցինք Զվարթնոցի շուրջը:

Թորոս ճարտարապետը բացատրում էր Հին ու հնագա պեղումների արդյունքների մասին: Խոսում էր, խոսում և չեր հագենում, որովհետև նյութը Զվարթնոցն էր:

Ավաշղ, ոյս վերջին անգամ էր, որ տեսա նրան, եղանքար հիս:

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԹԱՄՍԱՅՑԱՆԻ ՀԻԾԱՏԱԿԻՒՆ

Ամենակսկծալի լուրջը, որ կարելի է ստանալ երեանից—
Ճարտարապետ Թամանյանը մեռել է...

Մեծագույն ճարտարապետը Սովետական Հայաստանի,
ասկավաթիվ մեծագույն ճարտարապետներից մեկը ամբողջ
Միության մեջ:

Ալեքսանդր Թամանյան: Մի ամրող աշխարհ ճար-
տարապետական անսպառ հնագույնների, փորձառություն-
ների, խորունկ տեսությունների և անթերի ճաշակի: Կործան-
վեցավ մի ամրող աշխարհ...

Գլուխող առ ափերիդ մեջ և սուզվիր անջուն վշտի մեջ...

* * *

1928 թվականի հունվար ամսսի մեջ էր: Ա. Թամանյանն
ձննդյան 50-ամյակը տոնում էինք ընտաններար, մի խումբ
ժողովական մեծագույններով, նրա սիրելի ճարկի տակ:
Ներկա էին նաև մեծագույն երաժշտագետներ Ալեքսանդր
Սպենդիարովը և Ռոմանոս Մելիքյանը: Սեղանի թամադայի
պատիվը վիճակվել էր ինձ: Ես իրեն սեղանի պետ, կարգա-
գրեցի, որ թանկագին հորելլարի աջ կողմը նստի Ա. Սպեն-
դիարովը, ձախ կողմը՝ Ռոմանոսը: Ես բաժակս բարձրացրի
և ասացի: «Մեծանուն վարպետ, դու եկար հյուսիսից, դու
եկար մեծ Ռուսաստանում քո տաղանդով և ստեղծագործու-
թյամբ արգեն արժանի հոչակ ստացած, դու եկար մեր աղ-
բատ, ավել երկիրը, որը, սակայն, հարուստ է բարձր արվես-
տի անթառամ կոթողներով, որոնք մեղ աղնվության վկայա-

կան են տալիս, դու եկար այս հին ներշնչարանը, ազատագրված մեր հայրենիքը, որպեսզի տեսնես, յուրացնես հին գանձերը, որպեսզի քո հոգու հետ՝ դիտությամբ և բանաստեղծությամբ լի, խառնես, ձուլես, համարես և տաս նոր գեղեցկությունը, ազգային և Հանրամարդկային արվեստը, որի գաղտնիքը, վարպետ, դու՛ դիտես միայն:

Դու մեր աթենյան երեանի անմահ հկթուսը պիտի լինես, դու պիտի կերտես մեր Պարթենոնը, մեր թատրոնը, մեր թանգարանը, մեր ստադիոնը...

Քեզ Հետ եկան նույն Հյուսիսից մեծ Հայրենարադները՝ Ա. Սպենդիարովը, Ռ. Մելիքյանը և Մ. Սարյանը, արվեստի տարրեր մարգերի հակա վարպետները, քեզ պես, քեզ Հետ ստեղծելու Հայկական մշակությը, միակ անկորչելի պարձանքը մարդկային էակի»:

Ինչքա՞ն ուրախացար դու, սիրելի վարպետ, ինչքա՞ն ուրախացավ Սպենդիարովը, որ մանկական ժպիտը աչքերում, գրկեց և Համբուրեց քեզ:

Նվիրական անուններ՝ Սպենդիարով, Թամանյան, Ռոմանոս, նվիրական սիմբոլներ, դուք չեք մեռել, դուք ապրում եք ձեր ստեղծագործությունների մեջ, սերունդների սրտերի մեջ, դու՛ք մեր զեղեցիկի անմահ փառքերը:

* * *

Ճակատագիրը շատ գաժան եղավ Թամանյանի Հանդեպ: Հները պիտի ասեին, թե աստվածները նախանձում էին նրան և Հարվածեցին: Տարիներ առաջ զեղեցիկ, ծաղկափթիթ աղջրկա կորուստը խորտակել էր նրա սիրտը, և վերքը տակավին շղոցված՝ վրա Հասավ երկրորդ մահացու Հարվածը՝ երկրորդ աղջկա կորուստը՝ նույնքան զեղեցիկ և ծաղկափթիթ:

Ես զարմանում էի, երբ լսում էի նրա մասին, թե տակավին աշխատում է...

Աշխատում է: Աշխատանքն էր արգեն իր միակ մխիթարությունը. իր մեծ տեսիլներով, մեծ հղացումներով բռնված աշխատանքի մեջ մոռանում էր վիշտն ու ցավը: Իր Հանճարը, իր սերը Հայ ժողովրդի Հանդեպ, իր վիշտն ու տառապանքը

առարկայացնել բոլոր մեծ տառապողների պես, իրականացներով, ստեղծագործություններով...

Ես տեսնում էի նրան միշտ քայլայված առողջությամբ, քայլայված մարմնով, սակայն միշտ զործի զլուխ կանգնած: Նրա հզոր ոգին էր, որ տակավին ոտքի վրա էր պահում մաշված ոսկորները, որ ամեն վայրկյան փլուզումի մոտ էին:

Ես տեսնում էի նրան միշտ՝ իր աշխատանոցում, Հանձարեղ գլուխը կախած զանազան նախաղձերի, Հատակագծերի վրա, աշակերտներին հրահանգներ տալիս, կառուցվող շենքերի մոտ, ամեն մի մասին ուշադիր, որմնագիրների, բանվորների հետ խոսքի բոնված:

* * *

Թամանյանը անհագուրդ ուսումնասիրող էր. իր անհուն գիտությունը չէր բավարարում իրեն: Իր բազմազրազ ժամերից պահեր էր գտնում՝ Հետազոտելու հայկական հին ձարտարապետության նորագյուտ նմուշները՝ ուսանելու համար, անդուլ ուսանելու:

Մեր մյուս մեծանուն ճարտարապետ, Հանգուցյալ թ. Թորամանյանը, — նրանք եղբոր պես սիրում էին իրար, — միխճել էր նրան մեր արվեստի մեջ և նրա ուղեցուցը դարձել: Նրանք իրար լրացնում էին, իրար ուսուցանում:

Թամանյանը «Հնությունների պահպանման կոմիտեի» նախագահի հանգամանքով երրեմն գնում էր Հնագարյան ավերակներին այցի, ձեռնարկած նորոգումները ղեկավարելու:

Մի անգամ բախտ ունեցա երկու հսկաներին՝ Թամանյանին և Թորամանյանին ընկերակցելու: Գնացինք Արմավիր: Աշխարհի ամենահին քաղաքներից մեկը, պատմության Աշխարհի ամենահին քաղաքներից, աստվածներից, առասպելներից սկզբներից, մշուշներից, աստվածներից, ուր տեղի վրա ուզում ծագած այս առեղծվածային քաղաքը, ուր տեղի վրա ուզում էին նրանք որոշել պեղումների հարցը: Նրանք դիտում էին, զննում, շափում, գծում, խոսում, վիճում իրար հետ: Լուս էի՝ Խարբի, Խալդի, Ուրարտու, Արմեն... խորհրդավոր անուններ, բայց ինչպես նրանց համար ժամանակն ու տարածու-

թյունը չնշված էր և նրանց աշքերը տեսնում էին, անշուշտ, խարրի, խալզի, Ուրարտուի, Արմենների կանգուն տաձար-ները, բուրգերը, ապարանքները, պարիսպները...

Ինչպիսի՞ նկարագեղ պատկեր,—երկու հսկաներ քեռագրերով խոսող Արմավիրի բազմահազարամյա քարերի առաջ:

Շարաթվա մեջ մի երեկո, որոշ օր, Թամանյանի հարդի տակ հավաքվում էին նրա բարեկամները՝ ճարտարապետներ, արվեստագետներ, մտավորականներ: Այստեղ կհանդիպեինք մայրաբաղարը այցելող օտար անվանի արվեստագետների, որոնք առանց համբավավոր ակադեմիկոսը տեսնելու շեհնմեկնում: Շատ հարգելի տիկին Թամանյանը, ոսւսական գեղարվեստի պատմության մեջ հոչակ վայելող մի ընտանիքի զավակ, իր ամուսնու հետ, իրենց սրտագին հյուրզնկալությամբ իրենց տոնը զարձրել էին երեանի ամենից հարգելի, սիրելի, զրավիչ, բովանդակալից ժամադրավայրը: Գեղարվեստական և մտավորական ի՞նչ մեծ վայելք ճաշակած հեռանում էին հյուրերը—սրտատրովի սպասելով հաջորդ երեկոյին:

Ի՞նչ անմոռանալի պահեր, ի՞նչ քաղցր հիշատակներ:

* * *

Թամանյանին ամենից շատ կիզող, մաշող, նաև թեավորող հարցը ժողովրդական տան կառուցումն էր: Այդ նրան մտապես գնն էր: Տարիների ընթացքում որքա՞ն աշխատեց, տրնեց նա, գծեց, չնչեց, գծեց, չնչեց, բազում անգամ փոխեց շատակագծերը և միշտ գժոռ, փորձերը զանելով անհամաձայն իր ներքին շքեղ տեսիլին, միշտ ձգտելով կատարելության, մինչև որ մի օր, վերջապես, բավարար համարեց և ձեռնամուխ եղավ իրականացմանը:

Երբ Եվրոպա մեկնելիս զնացի նրան հրաժեշտ տալու, գլուխը բարձրացրեց ժողոան անթիվ թղթերի վրայից և ասաց.

— Այս, ինչքա՞ն բախտավոր պիտի լինեմ, որ վերադարձի տեսնես շենքս վերջացած: Պիտի շտապեմ, ժամանակը իմ բարեկամս չէ:

Ես հասկացա նրան և սրտիս մեջ հառաջեցի: Այնուհետեւ երեակացությանս մեջ միշտ տեսնում էի նրան իր հոյակառ

Երազի մարմնացման աստիճանների վրա օրեցօր բարձրանալիս: Ավազ՝ անողորմ ճակատագիրը շթողեց, որ նա հասներ իր գործի կատարին: Բոլորովին թերի մնաց նրա երազը, որ մեր բոլորիս երազն էր: Անհուն ցավը սրտին՝ անջատվեց նա իր մեծագույն ձեռնարկից. այդ ցավը այսուհետեւ մերն է լինելու:

Սակայն ինչ էլ որ լինի ժողոտան ճակատագիրը՝ պիտի ավարտվի՝ հեղինակի կաղապարի համաձայն, թե՝ պիտի այլափոխվի—մի բան անայլայլելի իրողություն է, որ նոր, երեանի անունը հավերժապես կապված է Թամանյանի անվան հետ: Նրա գրոշմի տակ է երեանը: Նրա մհծաթե շունչը ամենուրեք է: Նրա տրամաբանված, կշռված հատակագծի վրա է, որ բարձրանում է մեր մայրաքատղաքը: Զքնազ երեանի պողոտաները պիտի թռչեն դողանջուն Ջանգվի վրայից, պիտի բացվեն Արարատյան դաշտի հրաշքներին ակնդետ, պիտի ձգտին դեպի Մասիսի լուսերը:

Եվ երախտագետ երեանը, սերունդներով, հարգալից գլուխ պիտի խոնարհե մեծ արվեստագետի, մեծ հայրենասերի հիշատակի առաջ:

1936

Ա. ԹԱՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Թորամանյանը հայ արվեստի բեկորները, փշբանքները, ամրողչ Հայոստանում ցան ու ցիր բարերը, հին բարերը, որոնց երեկէ, դարեր առաջ, դիպել է հայ վարպետի ձեռքը, քարտաշի ուրազը, նա ի մի Հավաքեց, բերեց, խմաստավորեց, համազրեց, ներգաշնակեց և կառուցեց Ձվարթնոցը, մեր ճարտարապետության գլուխ գործոցը, ինչպես և մյուս կոթողները, կամուրջ, խոյակներ, կամարներ, սյուներ, զարդեր...

Թամանյանը եկավ և հիմնված Թորամանյանի վրա՝ արդիացրեց մեր հին արվեստը, նորոգեց, բյուրեղացրեց, բարձրացրեց, զարձրեց կենսունակ, ավարտեց և ամրողացրեց մեր ճարտարապետության կլասիկան:

Մեր արվեստը բարձրացավ և իրավահավասար կանգնեց զունական կլասիկայի կողքին...

* * *

Մեր ճարտարապետության վրա ապկել են մեր բարձր լեռները, լերկ ժայռերը, բնությունը, կլիման. մեր արվեստի մեջ մարմնացել է մեր երերի բնությունը և մեր ժողովրդի անցյալը, պատմությունը:

* * *

Հանգույցյալ թամանյանի կառուցած կառավարական տունը զգացված շենք է:

* * *

<...> Ցուց տալով ինձ օպերայի շենքը.

— Եավ նայիր, մոտեցիր.—Հե՞ս լսում, զայոց լեզու շե՞ս
լսում, զայերեն երգ շե՞ս լսում.

Հայերեն շե՞ս լսում այս նկարից.

Հոտ շե՞ս առնում, մոտեցիր, զոտոտիր.

Հայաստանի լեռների հոտը, դաշտերի հոտը, հայ բուշ-
սերի հոտը, Հայաստանի հոտը...

ա ա ա

Նրա շենքերը՝ կառավարության տունը, օպերայի շենքը—
ղղացված շենքեր են:

Մարմին առած երազներ:

Քարացած երաժշտություն:

**<ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՐՎԵՏԱԿԱՆ
ԾԱՌՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄՍՐԻՆ>**

Հարգելի հյուրեր և սիրելի ընկերներ

Բախտավոր եմ զգում ինձ, որ ողջունում եմ Հայաստանի առվետական ճարտարապետների III Համագումարը:

Հայեական ճարտարապետական արվեստը՝ իր ինքնատիփ ոճով և ինքնուրուցն ոգով մեր ժողովրդի կուլտուրայի փառքն է և անհողողակելի գանձը:

Հայ ճարտարապետությունը այնքան հին է, որքան նրան ստեղծով ժողովուրդը: Մեր արվեստը իր կազմավորման սկզբնական շրջանում ուրիշ ժողովուրդներից աղդեցություն է կրել, և ինքն էլ ապա ազգել է ուրիշ ժողովուրդների ճարտարապետության վրա:

Քարաշատ Հայաստանը մզել է Հայ ժողովրդին սիրելու իր Հայրենիքի քարերը, Հասկանալու նրանց, կերպարանք տալու նրանց, և որոնց միջոցով Հայ ժողովուրդը արտահայտել է իր ներքին աշխարհը, զգացմունքները, խիզախումները:

Հայ ժողովուրդը շինարար ժողովուրդ է՝ ամեն տեղ և ամեն ժամանակ: Մեր Հարեան ժողովուրդները շատ անդամ են վկայել մեր այդ առարինության մասին: Միջագետքի արար ժողովուրդները ավանդարար ասում են, թէ Հայ ճարտարապետներն են շինել Բարելոնի երկնաշնուր աշտարակը: Սա արդեն սիմվոլացնում է Հայ ժողովրդի շինարար Հատկությունը:

Այդ շինարար ողին՝ դաժան ու զժար դարերի միջով, մեր ժողովրդի հետ միասին պայքարելով և դիմանալով եկալ, հասավ աղաւագրված Սովետական Հայաստան:

Սովետական Հայաստանում մեր հին ճարտարապետությունը գտնելով լայն ճնարավորություններ և կոմունիստական մեծագործ կուսակցության օժանդակությունը՝ վերածընվեց, վերընձյուղեց հասկապես ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հանձնարի ուժով:

Մեր դարավոր ազգացին ճարտարապետական արվեստը նա նորոգեց, բարձրացրեց, արդիացրեց, դարձրեց կենունակ:

Մեծ արվեստագետի շնորհիվ համադրվեց, բյուրեղացավ և ավարտվեց հայ ճարտարապետական կլասիկան:

Հանձնարեզ ճարտարապետի զաղափարներով և գործուկ ողեշնչված մեր երիտասարդ ապանդավոր ճարտարապետները արդեն շատ փայլուն նվաճումներ ունեն կատարած և գեղեցիկ իրականացումներ: Մայքրաբաղարում, Հայաստանի քաղաքներում, ավաններում, կուրորտներում կառուցել են շոյակապ, մոնումենտալ շենքեր:

Սիրելի ճարտարապետ ընկերներ, սոցիալիստական շինարարության մեծ ասպարեզ կա բացված ձեր առաջ, մեծ և պատվավոր, — դուք պիտի կառուցեք սրտով, սիրով, պաթոսով: Դուք պիտի կառուցեք միշտ աշքի առաջ ունենալով ներկայացներ ժամանակը, ներկա պահանջները: Անհրաժեշտորեն հիմք կա ժամանակը, ինպուտարիալ միջոցները և ոտաշավոր տեխնիկան, որը ինայում է մարդկային ուժերը և ժամանակը, դուք պիտի կառուցեք աշխատավորների համար մանակը, դուք պիտի կամականք ունենակով, բարձր որակով, բնակարաններ, շուտ և էժան, մեծ քանակով, բարձր որակով, գեղեցիկ և հարմար, պարզ, առանց սեթեսթանքի: Դուք պիտի գեղեցիկ և հարմար, պարզ, առանց դարսցներ, հիվանդանոցներ, հասարակական զանազան շենքեր՝ միշտ գեղեցիկ, ճաշակով և հարկական:

Սիրելի ընկերներ, բոլոր սրտով ողջունում եմ ձեր համագումարը, ցանկանում եմ, որ արդյունավետ լինեն համագումարի աշխատանքները:

Յանկանում եմ Ձեզ ստեղծագործական հաջողություններ, ավելի սեր և եռանդ ձեր գործի հանդեպ, ձեր շանքերի պատկում, որ մեզ բոլորիս համար է:

Հավատարիմ մնացեք կլասիկայի անաղարառությանը, հեռանալով՝ մոտեցեք նրան:

Այնպես կառուցեք, որ Հայաստանի ճարտարապետությունը մնա իր բարձունքի վրա և շարունակե լինել Սովետների մեծ Միության ճարտարապետության առաջին կարգի դարդերից մեկը:

ԱՍՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՅ ՇԱՌԱՌԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ ես մանուկ էի, կամ մի քիչ ավելի, այսինքն պատանյակ, շատ հիանում էի մեր հին, ավերակ վանքերի ճարտարապետական գեղեցկություններով: Օրինակի համար, զնում էի մեր դյուղից քիչ հեռու գտնվող Բարոլի գյուղը, նրա հին վանքով, որ եկեղեցի էր գարձրած, տեսնելու և նորից հիանալու: Ինձ զարմանք էր պատճառում նրա կառուցվածքը, զարդերը և այլն: Նույն հիացքը՝ Արգինայի ավեր տաճարի հանդեպ:

Երկար ժամանակ, գեռ 10 տարեկան հասակումս, կանգնում էի Կարապետ Օհանջանյանի Անիի ավերակների պատկերների առաջ և անհազորեն նայում, հիանում, վերանում, հեռանում իրականությունից:

Ես մտածում էի, թե այդ ինչպիսի՞ նախահայրեր ենք ունեցել, այնքան շնորհալի, վարպետ, հնձարքով, ի՞նչ ժողովուրդ է եղել, որ այսպիսի բաներ է սահմանել, և համեմատում էի ներկա հայ ժողովրդի հետ, և ցավով տեսնում էի, որ ընկել ենք, հետ ենք զնացել, հասարակ ենք գառել: Ինչքան որ հիացքս մեծ էր, այնքան էլ վիշտս էր մեծ ներկացի հանդեպ, եվ այդ հասակում ողբեր էի գրում, մանավանդ Անիի մասին, որին զրեթե ամեն տարի այցելում էի և չէի հագենում...

* * *

Հայ ճարտարապետությունը սրանչելիութեն ներդաշնակում է երկրի պեյզաժի հետ. նա կարծեք թե մեր լինների ու ժայռերի իմաստալից շարունակությունն է: Նա խիստ է իր դուսպ ձեերի մեջ, ունի շատ քիչ օրնամենտ...

Ես չերժորեն սիրեցի ձարտարապետության հուշարձան-ները, որոնք, թեև կիսավեր, բայց այնուամենայնիվ հզոր էին, ինչպես հզոր է սարի վրա մեանող ռազմիկը:

Ես տեսել եմ Անին, հրաշակերտ Անին, Բագրատունյաց մայրաբազարը, որտեղ X—XI դարերում ծաղկեց ու իր գագաթնակետին հասավ Հայկական ձարտարապետությունը...

Այնրան խորն էր ինձ վրա հայ երգի և ձարտարապետության աղղեցությունը, որ ուր էլ գնացի ևս՝ Հայսատանն էի կրում իմ սրտում: Նեապոլում ևս լսեցի իտալական ժողովը գական երգեր, բայց ականջիս հնչում էին իմ հեռափոր հայրենիքի երգերը: Նայելով Աթենքի սրանչելի կոթողներին, ևս տեսնում էի միայն գեղեցիկ Անին...

* * *

Հայ ձարտարապետությունը՝ մեր փառքը, մեր գոյության, ազնվության վկայականը, մեր ապրելու իրավունքը: Ոճ ունեցող ժողովուրդները չեն մեսնում:

Նայեցեք մեր վանքերին, հենց այս քանդակներին, տեսե՞ք՝ քարերը կենդանացել են; Հոգի են առել: Տեսե՞ք՝ քարերը դարձել են ծառ ու տերե, ծաղիկ, պատուղ են տվել, նուռ, խաղողի ողկույզ, թռչուն են դառել: Դուք զգում եք այդ ծաղիկների բույրը, այդ պատուղների համը, լսում եք թռչունների երգը...

* * *

...Հայկական ձարտարապետական ստիլը, մարմին առնելով մեր վանքերի մեջ... անցավ Եվրոպա և հիմք դարձավ բյուզանդականին, ապա ոոմանականին (Էքս-Լա Շապել-Աիք լա Շապել), Ասիսն, Շարլմանի մայրաբաները, ուրիշները Ֆրանսիայում, Իտալիայում:

* * *

Միջագետրի արաբների մեջ մի ավանդություն կա, թե Բարելունի աշտարակը 70 հայ ձարտարապետներ են շինել:

Սա վկայում է հայ ժողովրդի համբավի մասին:

Արաբների մատայնության մեջ իրականությունից մտել է այն փաստը, թե հայերը կառուցող են:

* * *

Մի երկրին մի որոշ (ուրույն) կնիք ավողը այդ երկրում
բնակվող ժողովրդի հնություններն են: Հիմա <Արևմտյան>
Հայաստանում հայ չկա, բայց հայի կնիքը կա գրոշմած այդ
երկրի ամեն մի անկյունի վրա: Այդ ժողովրդի հետքերը ամեն
քայլափոխին հայ կհիշեցնեն, ինչպես Հռոմը՝ լատինացոց,
Աթենքը՝ հույներին...

Պետք է կազմակերպված, զիտակից կերպով պահպանենք
այդ գրոշմը, այդ կնիքը...

* * *

Հայաստանը ավեր ամայի է, բայց նրա Յոյակաստ
ավերակների հետքերից օտար ուղերձ այն կերպակացնե, թե
այստեղ բնակվող ժողովուրդը աստվածային հզոր թեր՝
ունեցել՝ ճախրելու գաղափարների կատարյալ ոլորտում:

* * *

Հին հույն բանաստեղծների մոտ դիցաբանությունը,
նրանց երգելը օրգանական էր, անկեղծ էր, որովհետև հավա-
տում էին: Լեզենդներին, միթերին հավատում էին, և դրա
համար էլ բարձր արվեստ ստեղծեցին: Արվեստի հոգին ան-
կեղծությունն է:

Այդ է պատճառը, որ մենք ունենք բարձր ճարտարապե-
տական արվեստ. մեր վարպետները շինել են հավատով,
աստծու աշքի տակ, նրա անտեսանելի ներկայությանը:

* * *

Մեր տաճարները առարկայացումն են, թանձրացումը
մեր խորհուրդի, մեր մտածման, երազի, մեր հոգու, մեր էու-
թյան խորհուրդների թարգմանությունը, խորհրդապատկերը,
խորհրդանշանը:

* * *

Արվեստի մեջ թանձրանում է մեր խորհուրդը, մտածումը,
երազը, ներաշխարհը դրսերդում է:

* * *

Ոճը մի ժողովրդի բարացած լեզուն է: Ճարտարապետու-

թյունը—մեր քարեղեն լեզուն է: Այս քարերը խոսում են Հայերեն լեզվով: Հայերեն են խոսում:

Այս քարերի միջոցով խոսում է մեր հոգին: Սա էլ մեր լեզուն է—մեր նյութացած հոգին-ոճը:

* * *

Մեր ժողովրդի ճարտարապետությունը նրա հոգեկան ներքին տեսիլքի առարկայացումն է:

Մենք կերտում ենք մեր ներքին պատկերի համաձայն. բայց մեր ներքին պատկերի, երազի, տեսիլքի:

* * *

Հայոց ճարտարապետությունը—Հավասարակշիռ, ներդաշնակություն, պարզությամբ վսեմ, սլացիկ, երկնասլաց, մեր մարմնի տարերայինը ձնշող, և զարթնեցնող, վերացնող մեր հոգեղենը...

* * *

Հայկական ճարտարապետության վրա (նրա կազմակերպման ժամանակ), ազգել են Հայաստանի պեյզաժը, բնությունը, բարձր լեռները, լերկ-լերկ ժայռերը, ապառաժները և կլիման:

* * *

Հայկական ճարտարապետությունը սքանչելիորեն ներդաշնակվում է Հայաստանի պեյզաժի հետ: Մեր վանքերը, կարծես թե, մեր վեհ լեռների իմաստավորված շարունակությունն են:

Հայ ճարտարապետությունը ներդաշնակվում է մեր երկրի բնության հետ, պեյզաժի հետ մերվում է. այդ քարերից է բուսել: Այդ վսեմ և խիստ երկրի ուժն ու զորությունը ունի իր մեջ: Այդպես է և մեր էպոսը, մեր Դավիթն ու Մհերը նույն ուժի անձնավորումն են, մարմնացումը:

* * *

Հայ շենքերը՝ հին, վանքերը այնպես գիտուն կերպով, գիտակցորեն ներդաշնակում են շրջապատի բնանկարին, պեյզաժին, առապարին...

* * *

Հայ գյուղացու խրձիթը տեսականացնելով դարձավ Հայ ձարտարապետության (վանքերի) ոճը:

Խրծիթի կառուցվածքը, ձեզ տեսականի, տեսության, թեուրիայի բարձրանալով՝ ստեղծվեցավ Հայկական ոճը: Ուրեմն զարգացավ, բարեշրջվեց, կատարելագործվեց խրծիթը: Նախակերտ շենքը հիմա վսեմացած, բարձրացած, վեհացած տաճարների մեջ, Հաղպատի, Սանահինի վանքերի մեջ:

Հատկապես գյուղական խրծիթը դարձել է վանքերի նախաղավիթը, որ ծաղկել է XII—XIII դարերում, օրինակ՝ Հաղպատ, Սանահին, Հառիճ, ուրեմն Զաքարյանների տիրապետության շրջանում:

* * *

Հայ վանքերի ներսը մութն է, խորհրդավոր, ինչպես որ ժարդկանց համար (խորհող) մութն է, խավար, խորհրդավոր, տագնապալից՝ տիեզերքը, նրա հարցերը, այնպես էլ մթին, խորհրդավոր պիտի լինեն, հետեւապես, և աստծու՝ բնության նվիրված տները, տաճարները:

* * *

Գմբեթը, սյուները երդի, ուղերձի, աղոթքի պես էին՝ ալացիկ:

* * *

Մոայլ, տիսուր տրամադրությունը արտահայտվում է միք շենքերի մեջ. նեղ լուսամուտներ, մութ, ստվերառատ:

Պատերի, քարերի երանգավորումը պատերը դարձնում է խաղացկուն, շարժման, դինամիկայի մեջ է դնում.

* * *

Ճարտարապետություն և դաշտանկար, պեյզաժ՝ պետք է իրար լրացնեն, ինչպես որ Հայ ճարտարապետությունը ներդաշնակված է Հայ պեյզաժին:

* * *

Եկեղեցու գմբեթը շինված է այն նպառակով, որ իրաւ-

կանությունից կտրի մարդու հոգին և տանի, սլացնի գեղի երկինք, աստվածության մոտ։ Կոմիտաս կաթողիկոսի քաղ-կեդոնական ձգտումները իր քարայրին արտահայտությունները գտան նրա կառուցումների, վանքերի մեջ...»

Զվարթնոցը այնքան բարձր են կառուցել, որպեսզի նա միակ բարձրությունը լինի Արարատյան դաշտում, թեև Մաս-սիսի և Արագածի Փոների վրա, բայց մի կերպ մրցակից, նրանց նման պատկերացին։

Մեր գմբեթը համապատասխանում է մեր պեյզաժին՝ բարձր լեռներ, կիսաանապատ դաշտեր, դեղին ժայռեր...

* * *

Հայերը ունեն քարի զգացում, հասկացողություն։ Օրի-նակ՝ Հայրավանքը (Աղավնավանքը). ի՞նչ սինթեզ է բնու-թյան հետ, պեյզաժի հետ։ Նույն գույնը պատի քարերի՝ ժայ-ռի և հողի գույների հետ։ Ճուկած շրջապատի հետ (նույն ֆակտուրան)։ Ժայռ՝ ժայռի նման, մեր վանքերը ժայռը՝ ժայռեր՝ ժայռերի նման։

* * *

Մեր վանքերի գմբեթները մի-մի փոքր Արարատներ են. պատկցած, անհունորեն փոքրացրած Արարատներ են։ Վե-ղարն էլ նույն ձեռվ փոքրացած գմբեթ <է>։ Հայ ոճը ծնունդ է Արարատի պատկերի, նրա վրա է կաղապարված։

* * *

Քարտաշ վարպետի, որմնադիր վարպետի խորհուրդը իր աշակերտներին. — Էնպիս տաշե քարը, էնպիս նախշե, շինե, որ շինածդ քարը բլբուկի պես խոսե. վարպետությունը էն բանի մեջն է, որ քարը բլբուկի պես խոսցնես։

Շինածդ տան առաջ որ կանգնիս—տունը սազի պես երդե. քարե սաղ էղնի, քարը՝ սաղ դառնա...»

* * *

Գեղեցիկ են, վսեմ մեր VII դարի վանքերը. շքնաղ սին-թեղ են կազմում բնության հետ։ Հոյակապ է Թալինի եկեղե-

ցին, մեծ, Հսկա: Աղիյամանու և կեղեցին ամենապնիվ տուժքարից: Մեր հին ճարտարապեաները ունեին քարի զգացում, դիտեին՝ ո՞ր քարն է ճարմար շենքի ճամար՝ ներդաշնակվող պելզամի հետ, օրինակ տուփը և տրախիար, որ ժանդի զույն ունի, և այս քարերը այնպես են մերվում բնության հետ, մեր հողի և ժայռերի հետ, և ուրիշ ոչ մի քար չէր կարող փոխարինել նրանց:

Հայաստանը ունի մարմարի հանքեր, բայց մարմարից շեն շինել, որովհետև մարմարը լավ է, պատշաճ է ծովի և կանաչի մեջ, նրանց հետ է մերվում: Մարմարը շի համընկնում մեր հողի, մեր ժայռերի հետ: Մեր վանքերը կարծես բուսել են ապառաժներից, նրանց շարունակությունն են, օրգանապես կապված. օրինակ, Խծոնքի վանքերը բարձրանում են քերծերի, ժայռերի վրա, Հիմքը նրանց մեջ խրված է իրենք դարձել են անկարգ տարերքի իմաստավորված, արվեստացած, կանոնավորված, ոճավորված, կազմակերպված, ձև ստացած մասը: Շենքերի ամեն մասի մեջ զգացվում է քարը, որ դարձել է կյանք, կենդանի, շնչող:

ԳՈՇԱՎԱՆՔ

(Նոր-Գևարիկ)

Դիլիջանից դեպի արևելք, մոտ 17 կիլոմետր հեռու, Տանձուտ կոչված ձորում, շրջապատված արևմտյան, ճարավային, Հյուսիսային կողմերից բարձր անտառապատ լեռներով:

Վանքը շինված է գեղեցիկ սարալանջի վրա:

Դիլիջանից կարձ ճամրով 10 կիլոմետր է, իսկ խճուղիի ճամբով արդեն 17 կիլոմետր, Զարխել գյուղից, որ գտնվում է իջևան (Քարվանսարա) տանող ճանապարհի վրա, 11 կիլոմետր, իսկ այդտեղից մոտ, ուրեմն, 6—7 կիլոմետր:

Վանքի կառուցումը սկսվել է 1191 թվից:

Գոյզ Մխիթարի գամբրարանը գյուղից մի քիչ վերև, կառուցված է հասարակ քարերից:

Նրա ճարտավային կողմում կա մի ճամհստ խաչարձանով տապանագիր, վարպետ Պաւլոսի, որը կերտողն է վանքի այն երկու հոչակավոր, չքնաղ խաչարձանների:

ԱՐԵՐՈՒՔԻ ՊԱՏԵՐԻ ՏԱԿ

Ոճ ստեղծող ազգը, ոճավոր ազգը չի կորի: Նա երեք չի լրի իր ստեղծածք, վագ չի անցնի իր ստեղծածից, իր կուլտուրայից, իր հոգու մարմնացումից, զգեստից:

Ոճը, կուլտուրան—մեր ապրումների նյութացումն է, ձեւվավորումն է նյութեղենն, նյութի մեջ:

Ինչպես որ ոճը մարդն է, այնպես էլ ոճը ազգն է:

* * *

Երերուքի պատերի տակ նստել, նայել նրա ճարտարապետական շքնաղ երաժշտությանը և խորհել, զգալ, երադել...

* * *

Երերուքի պատերի տակ (ոնց որ մտածում էի նոտր-Դամի պատերի տակ—ճարտարապետությունը քարացած, բյուրեղացած երաժշտություն է, և ևս ունկնդիր լսում են այդ երդին: Լոռում եմ և խորհում. ինչ որ մտքովս անցնում է, մի տեսակ surrealisme. մտքեր, զգացումներ, անցած սերեր, գարուններ, հույսեր, երազներ, հույղեր, հուշեր. ապագայի տեսիլներ. հայոց պատմությունից, Շիրակի անցյալից, կոփեներ... Մշակույթ, հայոց մեծերը... Թուրքերի գարեւոր ավերները մեր երկրում... մեր մշակույթի, արվեստի մահը...

ԶԱՅՐՅՈՒԹ

Տեսիլը քարով է կերտել: Լուսավորչի տեսիլը պատկեցացնում է քարով: Զվարթնոցը տեսիլը քարեղեն մարմնացումն է, քարով շինած:

* * *

Զվարթնոցի արծիվ քանդակները, խոյակները—արծվացած քարերը.—արծվացած քարեր:

* * *

Զվարթնոց—քարերը արծիվացրել են:

* * *

Առյուծացած, արծիվացած քարեր—Զվարթնոցի քարեր:

* * *

Շողակաթը, Գայանեն՝ ամեն մեկը իր գեմքն ունի:

Հոփափամեն կարծես քանդակի է՝ սկովապտուրա:

* * *

Մրենը իբրև քարացած միտք, քարացած զաղափար՝ գեղեցկություն:

* * *

Հայրավանը ի՞նչ սինթեզ է բնության հետ, պեյզաժի հետ, նույն գույնը՝ ժայռի գույնի պես, ժայռի շարունակությունը:

* * *

Տեկորի վանքը՝ գեղեցիկի հրաշք. ճակատադրական շրաշք:

Ավտոմեքենայով գնում ես, օրինակ, Գեղարդ. գլուխդ ունած, շշմած՝ նայում ես քանդակներին, տեսնում ես, բայց չես տեսնում...

Օրեր պիտի մնաս, որ տեսնես, զգաս, ապրնս այդ գեղեցկությունը:

* * *

Բնությունը և արվեստը Գեղարդում և Գառնիում համազոր են, իրար լրացնում են:

* * *

Ալեքսոլի ճարտարապետական արվեստի մեջ կան հայ հին ճարտարապետության ոձերի տարրեր-ձևերը, արտաշայտությունները, տրամադրությունները, մոտիվները:

* * *

Գյումրվա ս. Փրկիչ եկեղեցին մեր հին (Գյումրվա) վարպետների հանձարի պսակն է, ձգտումների, երազանքների իրականացման աստիճանը, հասողության աստիճանը, գագաթնակետը: Մրանից ավելին չեն կարողացել: Այսքանը միայն, և լավ է:

* * *

<...> Երբ նայում ես Մայր եկեղեցուն, Տեկորի, Հռիփսի-մեի, Երերութիւն տաճարները, թվում է, թե տեսիլի մեջ ես տեսնում նրանց:

Ուրիշ արվեստների գեղեցկությունը հուզիշ է, հաճախ խոռվիշ, գրգոռդ <1 անընթ.> մեր գեղեցկությունը անգոր-րող է, հայեցողական, ներշնչող...

Այս է հայ ոճի էռությունը, նրա փիլիսոփայությունը:

Մեր հին ձատ կարող էին: Նրանք լավ շափագետ էին, կշռող և կարուկ: Գիտեին գրած խնդիրը լուծել, կառուցողական խնդիրները, գիտեին, որ ձեզ բխում է բովանդակության առա-ջազրած նպատակից: Գիտեին փառավոր կերպով «ներսից դուրս» ելնել, արտաքինը որպես ներքինի դրսենորումը, ներքի-նով պատճառաբանված: Այսպիս մերոնց կառուցումները գի-տություն են, երկրաշափություն, հավասարակշռություն: Այս-պիսով մերոնց ոճը և՛ հին է, և՛ միշտ նոր:

Մրանք բաներ են, որ ամեն դարերի, և զալիք դարերի ձարտարապետության անմա՞զ սկզբունքներն են, նրա տրամա-րանությունը: Մեր նոր ձարտարապետները շատ բան ունեն նրանցից սովորելու:

* * *

Հայոց ավերակները—մասունքներ մեծ ու դաշն երազեն:

* * *

Այս ձարտարապետության մեջ արտահայտված է մեր ժողովրդի հոգու գարավոր պատմությունը:

* * *

Գրվածքը պիտի բյուգեղացնել, ավելարդ տարրերը պիտի չնշել, մակարուցները հեռացնել. Հոգել, թերթել ծառը, կտրել, հատանել ավելորդ ճյուղերը, որոնք խանգարում են լուսին, պարզության և ձեռքին, մաքուր ձեռքին, պետք է ցայտեցնել ձեր—գիծը—la ligne. P. Plage Halle-ի նման, հիմնական, էական, մաքուր, բանական գծերը: Այդպես են և մեր Անիք, ո. Հոփիսիմեի, Երերութիւ տաճարները, և Vezele-ի տաճարը, Թէ թե նոտր-Դամը կամ ո. Մարկոսը, կամ Քյոլնի տաճարները:

* * *

Այնպես պետք է քանդակել, որ թոշունները երգեն, ծաղիկները բուրեն.

ողկուցներից գինի կաթե—մեր ճարտարապետները մեր քարերը պիտի ներդաշնակեն մեր արեի և երկնքի հետ. պիտի հեռանալով մոտենան հնին և մոտենալով՝ հեռանան հնից. Հինը զարգացնեն՝ հասցնելով արսույուսիդմին:

ԱՆԻ

Երբ մարդ Անի է մտնում, կարծես մի ուրիշ աշխարհ է ընկնում, մի կախարդական աշխարհ, բայց շատ հարազատ, շատ դարեր, հազար տարիներով ծանոթ, մտերիմ, հարազատ, սրտակից: Մի քաղցր և տիսուր զգացում համակռու է քեզ՝ հայրենի հին տան զգայությունը. այստեղ են ապրել քո բոլոր հայրերն ու մայրերը ու քեզ նրանք բոլորը սիրել են այստեղ:

Այդ շենքերը, պարիսպները, բուրգերը, եկեղեցիները, տրները հոգով խոսում են քեզ ու հիշեցնում են քեզ, որ զու խաղացել ես սրանց շվաքների մեջ, երազել ես սրանց պատերի և կամարների տակ. այդ տեղերը մայրիկիդ ձեռքը բոնած շրջել ես... եվ մի վեհ զգացում, մի սուրբ հուզում, զորով՝ խոնարհեցնում է զլուխտ, ծնկներդ հեշտությամբ իշնում են և կարոտով ու երկյուղածությամբ համբուրում ես այս քարերն ու փոշիները... եվ չես ուզում հեռանալ: Ինչպես հեռանաս քո

Հին հաղարամյա տնից, և գնաս նորից օտարություն, ուրիշ տների, պանդոկների մեջ օտար, պանդուխո, վտարանդի, ապրես...

Այնքա՞ն նվիրական են այս պատերը, այնքա՞ն սրտախոս, կաթողին... Դու այստեղ գո՞ւ ես և, վերջապես, այստեղ դու դարձել ես գեղի քեզ, ինքդ քեզ ես եկել...

* * *

Երբ Անիի ավագ դոնից ներս ես մտնում քաղաքը—հայոց պատմության վերջին 5—6 դարերի մռայլը, մղձավանջը, գժրախտությունները, թշվառությունները անհետանում, մնում են դուրսը. նրանք չեն մտնում այս հոյակապ պարիսպներից ներս: Այստեղ զգում եմ ինձ հպարտ, աղատ, վեճ. մտքերս թուշը են գործում, ձնշում չկա ուսերիս վրա. Հորս տանն եմ, գարերով հորս տանը. թվում է, որ միշտ այստեղ եմ. այստեղ եմ ծնվել, այստեղ եմ հասակ առել և հավիտյան այստեղ եմ լինելու՝ այս հավիտնական գեղեցկության հետ:

* * *

Ամեն ինչ այստեղ գեղեցիկ է, ամեն քար ու քանդակ, ամեն սյուն ու կամար: Ամենափոքր բանը՝ խորտակված քանդակի մի քեկոր նույնքան վեճ է և հոյակապ, ինչպես արեք ջրի ամեն մի կաթիլի մեջ, փոքրիկ ջրի գավաթի մեջ: Մեծությունը փոքրության մեջ:

* * *

Անիի ավագ դոնից երբ ներս ես մտնում, մտնում ես անցյալի մեջ, մտնում ես երազի, առասպելի, հերիաթի մեջ. ամայի փողոցները կենդանի են հաղար տարի առաջ եռացող, փոթորկվող կյանքով և մարդկային բաղմությամբ, հոծությամբ:

* * *

Երբ մարդ Անին տեսնում է՝ վեճանում է, վերանում:

* * *

Հայաստանի քարերից մեր հանձարը ստեղծեց հրաշքը, հրաշալիքը, արվեստի հրաշքը (Անի):

* * *

Անին. ահա այստեղ իրականացած է ցնորդը. այստեղ ամեն ինչ կատարյալ է. գեղեցիկը հայկական մարմին է առել այստեղ. Հայաձև մարմին է առել—Հայ Հոգու գեղեցիկը մարմին է առել այստեղ. ազգի փրկիչն ու նպատակը-ոճը: Այստեղ վերջացած է, լրացած, լման, ավարտված, պասկված—ոճը:

* * *

Անի: Հայ վարպետները, քարակոփները, որմնագիրները—որմաշուսո-որմաշեն քարանյութին, Համբ, մեռած նյութին տվել են շունչ, Հոգի, կյանք, ձև ու կերպ, աստվածային պատկեր, գաշնակություն, ամեն քարի մեջ իմաստ և գաղափար են դրել, նյութը Հոգիացրել են, գաղափարականացրել, լիզու դարձրել, խոսեցրել—կենդանի դարձրել, շնչող և արտահայտող, ազգող:

* * *

Հայ ճարտարապետները քարձրացրին Անին՝ շրեղ, Հոյակալ, դարերին Հիացմունք տվող:

* * *

Անիի ամեն մի բնելորը, քարը մեզ մի բան է ասում. Խոսում է մեզ Հետ, մեր սրտի Հետ:

* * *

Անի—քարեղեն երազ:

* * *

Անի... քարակերտ բանաստեղծություն, քարացած երազ:

Այստեղ կատարյալ գաղափարը նյութացավ, և այստեղ Հասարակ նյութը գաղափարացավ... կատարյալի, գեղեցիկի գաղափարը նյութացավ...

Անի, մի աշխարհ-զգացմունք, մի ողջ աղջ, Հայության սիմբոլ, խորհրդանիշ...

Գու մեծ ես իմ ազգ—իմ Անի, քո ստեղծագործ ողով, քո գեղեցկով, քո անմահ որակով, քո գաղափարացած նյութով և նյութացած գաղափարով...

* * *

Անի՛, հալւերժական ներշնչարան...
Եթի Անի քաղաքումն եմ լինում, ետև զգում եմ բանակ-
ներ, արքայական զորություն, մշակույթ, արվեստ...

* * *

Այստեղ գաղափարը կաղապար հագավ, առավ: Այստեղ
Հոդին նյութացավ, և նյութը հոգի զարձավ... Հոգիացավ:

* * *

Այս քարերը մեր թանձրացած պատմությունն են: Մեր
պատմության էջերն են: Հայ դուռացին, որ դիր չեր ձանաչում,
բայց կարողանում էր կարդալ այս էջերը, գրքերը, այս պատ-
մությունը...

* * *

Անի—մեր ստեղծագործ նախահայրերը իրենց տեսիլներն
ու վեհ ապրումները այս քարերի մեջ զրանորեցին: Այս քա-
րերը նրանց երազների մարմինը հագան, այս քարերը դար-
ձան զաղափար և միտք. իրենց Հոդիները այս հոյական շեն-
քերն են, այս հանդուպն, թռչող կամարները, այս երկնասլաց
գմբեթները:

* * *

Անին մենք մեր և տեսում չունենք, այլ միշտ մեր առաջը:
Որքան տարիները Հեռանում են, այնքան մենք մոտենում
ենք նրան:

* * *

Անի: Այս դօերի, քանդակների, այս քարեղեն հոյական
բանաստեղծությունը:

* * *

Մեր Գյումրվա վարսեաների ձարտարապետության մեջ
կան անթիվ տարրեր, ընդօրինակումներ հին մեր՝ Անիի,
վանքերի, ձարտարապետական մնացորդներից, կոթողներից.
մոտիվներ, արամադրություններ, զգացումներ, ձևեր...

* * *

Գյումրվա որմնադիր վարսեաները Անիի աշակերտներն
են, անտեսանելի, անանուն, անունները մոռացված վարսե-

ների աշակերտներ, որոնք դիտելով մանուկ օրերից Անիի շենքերը, ավերակները, առեւ են նրանց արվեստը, արվեստի գաղանիքները...

* * *

Անի՝ քարացած երազ, քարացած հերիաթ, ամենաձնիւ, ամենաշարուստ երեակայտթյունն իրականացած:

* * *

Հայ մարդը տեսնելով Անիի ոճը, և անաշում է իր հոգին:

* * *

Անի—մեր հնությունների, իմաստավորված քարերի վեպը:

ԱՆԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Շինել է, այսինքն, Հիմնել է Սմբատ Բ. Տիեզերակալը 989 թվին. նրա հարսը՝ իր Գաղիկ որդու կինը, Կատրամիդե (կամ Կատրանիդե) թագուհին լրացրեց սկեսրացրի ձեռնարկությունը 993 թվականում, օծվեց Սարգիս կաթողիկոսի ձեռքով: Այդ մեծակառուց տաճարում օծվել են հետո մեր արքաները, հայրապետները, կատարվել են շքեղ հանդեսներ:

Սմբատ թագավորը տաճարի համար բերել տվից մի-մի թանկագին չահ, բյուրեղյա, Հնդկաստանից:

Ալփ-Ասլանի զինվորներից մեկը զաղանի մուտքը գտնելով, բարձրացավ զմբեթը և այնտեղից վայր նետեց չահը, փշրեց...

Գմբեթի վրա կար մի արծաթյա խաչ՝ մարդաշափ, որ ձգեցին վար և Տուղրի բեկը տարավ նախիջևան քաղաքը և դրեց մզկիթի դռանը՝ մանող-ելնողի ոտքի կոխան:

* * *

Նրան շինել են վարպետներ ու ճարտարներ՝ շինել են անկեղծ զգացումով, երկյուղածությամբ, այն խորին հավատով, որ աստծու տունն են շինում, ուր աստված պիտի բնակի:

Գրա համար էլ եղել է նա եթերային, թոշող, սավառնող, աննյութական, հոգեղեն, շքնազ և ներդաշնակ, նման հայկա-

կան շարականներին, որ ստեղծել են հայոց սուրբ Հայրերը — Սահմակ Պարթև, Մեսրոպ, Ներսես, Կոմիտաս...

Ա՛յս, ինչպես կուղենայի հիմա լինել այնտեղ, պառկեր նվիրական հողի վրա, նույն պատերի տակ, և սուզվեի, սլանայի երազանքի մեջ, միստիկայի մեջ, տիեզերքի մեջ, անձունության մեջ, և այսպես հավիտյան մնայի...

* * *

Անի. Մայր-եկեղեցին. Սա Պլատոնի գեղեցիկ իդեալը՝ մարմնացումն է, ոչ թե ստվերը. Պլատոնի գեղեցկության կազմակարք վայր է ընկել նրա զաղափարների աշխարհից, ընկել է այստեղ. — ահա գեղեցիկը՝ կատարյալ, ամենակատարյալ, անսահման-աստվածային գերակատարյալ...

* * *

Գեղարվեստական իրականություն, իրականացում:

Մայր տաճարը <Անիի> հայկական ոճի ամենակատարյալ իրականացումը: Գեղեցկության կատար, ծայր: Բացարձակ:

* * *

Մայր եկեղեցին, շինված անվախ, հանդուգն կառուցում. սլացիկ սյուներ, թռչող կամարներ, երկնային թոփշքներ... Քարացած երդ ու կշիռ:

Անիի Մայր եկեղեցին նազելի թագուհու պես քնքուշ ոտքերի վրա թեթև կանդնած՝ ասես թռչում է զեպի վեր... Քար ու կիրով չէ շինված, այլ ուղղակի օգով:

* * *

Անիի Մայր Եկեղեցին՝ կատարված, ավարտված, վերջաւցած, պսակված հավասարակշռություն:

* * *

Հայ ճարտարապետության սինթեզը, խացումը, բյուրեղացումը ներկայացնում է Անիի Մայր եկեղեցին:

Այս խոնարհ, պարզ շենքերն են գոռող եվրոպայի ձարձարապետների համար եղել տիպար, ներշնչարաններ:

* * *

Մեր ավերակ վանքերը, բերդերը, պարիսպները ավելի հզոր են հայերին հայ պահելու, բան շեն վանքերն ու այլ կանգուն գործող շենքերը...

Երազ, երևակայությունը ավելի հզոր են:

Այս նվիրական քարերն են հայերին հայ պահել մեր պետությունը կործանվելուց հետո, դասն զարերի ընթացքում:

Երբ հայ գյուղացին տեսնում է մի ավերակ, երեսը խաչակնքում է, համբուրում նա գիտակցում է, որ սա իր տունն է, իր պատերն են շինել, իր արքաները: Այս քարերը անժխտելի ապացուց են, որ այս երկիրը միշտ իրենն է եղել, և է, և պիտի լինի:

Հայ ժողովրդի անցյալը այս հոյակապ ավերակների մեջ՝ կենդանի է, և խոսող, և նեղշնող:

* * *

Հին հայերը վիրտուոզ էին շինարարության բոլոր մարդերի մեջ՝ թե՛ քանդակների, թե՛ կամարների, թե՛ սյուների:

* * *

Մեր գյուղացու զոմքը բազիլիկայի նման է:

Ա. Թ. Ե. Կ. Ռ. ՈՒ Մ

Երկու շաբաթ է Աթենքումն եմ, բայց ինքնազգացումայնպես է, թե՝ ևս աթենացի եմ, ապրել եմ Աթենքում, Հինավերադեմ եմ Հայրենիք՝ Աթենք: Քայլում եմ. փողոցները, հրապարակները, պարտեզները վաղածանոթ են ինձ. ահա՝ Թեսեսը, ժպտում եմ. իր տեղն է, բան չի փոխված, Յետեվում—...գերեզմանատունն է. այնտեղ էր <Դեմոսթենեսն>: Իր շքեղ գամբանականները ասում...

Ահա Պիրեն տանող պողոտան, այստեղով գնացին <...> զորավարի բանակները պարսիկների վրա...

Նայում եմ—ահա այնտեղ է Պլատոնի ակադեմիա-պարտեզ-Հեմարանը... Թերուոփիլես տանող ուղին... Սպասում ես, որ Հինա այս անկյունից կերեա Սոկրատեսը իր աշակերտներու շրջապատված... Ահա մեծ շուկան՝ Ակորան...

* * *

Սոկրատեսի բանտից իշխում եմ Ակրոպոլի տակ, և խորհում եմ վերչերս կարգացած այն զեպի մասին, երաժշտագետի հետ... Այս՝ մահից առաջ, նույնիսկ ընդհուպ մահից՝ առաջ պիտի սովորել շգիտեցածը, սովորել, անվերջ, զիտել, կարգալ, լսել, թափառել սովորելու համար, զիտենալու համար, կատարելազործելու համար իր միտքը, իմացականությունը, լայնացնել, տարածել մինչև անհունություն, անսահմանությունը... Աշխարհաճանաշումդ, իրականության լմբանումանություն՝ աշխարհաճանաշումդ... Ամեն ինչ զիտենալ, և մեռնել, չոգ չէ: Ամենազիտությամբ, անմնացորդ կերպով զիտենալ,

այլևս բան չի մնում աշխարհում։ Մեռնել հանդիսաւ մտքով,
գո՞ւ, կատարյալ։

* * *

Երկու ճանապարհ ձգվում են Պիրեից (Պիրեոն) մինչև
Աթենք. մեկը խճուղի՝ 10 կիլոմետր երկայնությամբ, մյուսը
երկաթուղի՝ 12 կիլոմետր։

Աթենքը ծովի երեսից քիչ բարձր, գտնվում է մի հարթ
հովիտի մեջ, արևելքից, Հյուսիսից և արևմուտքից շրջապատ-
ված է բլուրներով, բարձր բլուրներով, իսկ հարավի կողմից
հարթությամբ ձգվում է մինչև Պիրեի ծովածոցը։ Նոր Աթենքը
չին Աթենքի արևմտյան կողմն է շինված։

Ակրոպոլիսը բառակուսի կիլոմետրից ավելի տարածու-
թյուն է բռնում, մոտավորապես 150 մետր բարձրությամբ
քարաբլուր։

Պարթենոնը (Աթենասի տաճարը) 48 բարձր սյուներով,
ուժանց պատվանդանն է միայն մնացել։ 120 քայլ երկայնու-
թյուն և 60 քայլ լայնություն ունի. կարելի է ավելի ունենաւ։

Պարթենոնից մնացած կան հարյուրավոր անգրիներ և
• կիսարձաններ Ակրոպոլիսի մուգեր մեջ. կարծում են, թե
նրանից է մնացած։ Շենքը մարտարիոնից է, մեծ վեմերով, որ
հազիվ 10 լուծ եղներ կարողանային տեղափոխել։

Այն ժամանակ, երբ շկային շողեշարժ ուժիր և նոր տե-
սակի մեքենաներ, որոնցով բազմապատկվում է մարդկային
գորությունը, մտածում են՝ ի՞նչ միջոցներով են կարողացել
այդ ծանր քարերը բարձրացնել շենքի կատարները...

Ակրոպոլիսից (միջնարերդից) Հյուսիս-արևելյան կողմը,
մի հարթ վայրում գտնվում է Օլիմպական Արամազդի (Զես)
միջանը՝ տաճարը, շատ ավերված վիճակում։

* * *

Սյուները 20 մետր բարձրությամբ և 1, 1/2 մետր տրա-
մագծով, թեև միակտուր չեն (մոնոլիտ), բայց շատ հոյա-
կապ, գեղեցկագործ քանդակներով։ Շատ քիչ սյուներ են
մնացել։

Այս տաճարից նշխարներ կան տեղափոխված թանգառաններում, օրինակ՝ մի քանդակավոր դուռ:

Միջնաբերդի արևմտյան կողմում, տափարակ վայրում, թևենոսի տաճարը կանգուն, անեղծ մնացած:

Թանգարանի է փոխարկված, լիքն են արձաններով՝ Սոկրատիս, Արիստոկլես, Դեմոսթենես փիլիսոփաների, Հոհետորների, աստվածների՝ Զես, Հերա, Ապոլոն:

Թանգարանների, տաճարների հույն ծերունի պահապանները լցված են հույներին հատուկ ազգային հպարտությամբ և զոռողությամբ, իրենց նախնիքներով և հույն հանճարով պարծենալով, ցուց են տալիս ու մեկնաբանում հնությունները:

* * *

Հնագիտական թանգարանը, մարմարակերտ: Այնտեղ է 1880 թվին պեղումներից հանած Աթենասի (Աթչինա) արձանը, որ վերագրվում է Ֆիդիասին: Ութ տարեկան մանուկի հասակն ունի արձանը, տեղը ձեռքին, կորդակը զլիսին. ձախ կողմը՝ քանդակապարդ ասպար, որի վրա հենված է Աթենասի բազուկը: Հրաշագեղ արձանը փոքրիկ պատվանդանի վրա:

Ակրոպոլիսի թանգարանը, շենքը հասարակ է. լիքն են ուիշնաբերդից հանած հին առարկաներով—արձաններ, քանդակագործ խոյակներ, անոթներ, տնային իրեր և այլն, և այլն:

Ակադեմիան. Հրաշալի շենք, նոր, մարմարակերտ. ո՞չ մի նոր զարդ չունի, ամեն ինչ պարզ է այնտեղ, պարզության մեջ վսիմ: Նմանություն Պարթենոնի:

Երկու հսկա սյուների վրա կանգնած են Աթենասի և Ապոլոնի մարմարեր, ոսկեղօծ արձանները:

Աննման շենքեր են՝ Եվրոպայում նմանը չունեցող:

Ակադեմիայի մոտն է համալսարանը՝ շատ շքեղ շենք, մարմարյա: Իր գրադարանով: Մատենադարանն էլ, համալսարանի մասը, առանձնակի շենք, շատ հոյակապ է, հինոնցով կառուցված:

Հույները աշխարհի շորս կողմերից իրենց առատ նվերներով վերակառուցել են Աթենքի այս շքեղ նոր շենքերը:

Աթենքում շրջում էի, դիտում, և ամեն վայրկյան, և ամեն բեկորից լցվում էր սիրաս, վառվում էր միտքս, և երեակացությունս թե առնում...

* * *

Արդի Հունաստանը իմիտացիոն է. զինի անհաջող վերաբրտահայտումը...

Պենգելյան լեռան մարմարները կան. նույնն են, բայց բաղդագործները գաճաճներ են, ոչնչություններ:

Հները անկրկնելի են...

Դասական Հելլագան լրացած է կատարյալ, ավարտված, վերցացած, հասած սահմաններին՝ անսահմանության սահմաններին:

Ո՞վ է ասել, թե՝ անսահմանությունը սահմանավորի մեջ — զեղարվեստն է:

Հունաստանում մարմարիոնը գրեթե մեր երկրի տուժն է, փողոցները մարմարով են սալած, մաշթերը մարմար են:

Աթենքի ավերակներում այնքան մշակված մարմար կա—կոտրած արձաններ, զլուխներ, իրաններ, ոտքեր, սյուներ, խոյակներ, ոպատվանդաններ, քանդակներ և քարեր. քարեր չզգված՝ հսկա, աճագին կտորներ, միակտուր... այնքան բազմությամբ, մեծաքանակ և այնքան ընտիր, որ բազմաթիվ ժողովուրդների (մանավանդ փոքր ազգությունների՝ հայ, վրացի, բուլղար, սերբեր, սովորինացիներ և այլն, և այլն) թանգարանները կզարդարեին և կպահնծացնեին, կփայլեցնեին: Բայց այստեղ լրված են, թողած անխնամ, արեկ և անձրեկ տակ: Միայն վանդակապատված են, հսկողության տակ:

Զարմանում ես. գարեր կողոպտել են Հունաստանը (Անդրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ավստրիան, Թուրքիան և ամեն մի թանգարան Եվրոպայում) և նորից կա ու կա, գտնվում է ու գտնվում, պեղումներից ելնում են նորերը: Եթե են և իրենց մուղեցները: Խնչքա՞ն են աշխատել այս ժողովրդի նախնիքը, ինչքա՞ն են կերտել, ստեղծել, արտադրել: Եվ բոլորը գեղեցիկ, շքնաղ...

Ճիշտ որ հունական հրաշք:

* * *

Հողմերի աշտարակի բակում ոտքի մի թաթ տեսա, կանացի ոտքի, սանդալի մեջ, միայն մի կտոր մարմար, միայն թաթը. այնքան գեղեցիկ, համբուրելի, պաշտելի՝ նետած մանր քարերի կույտի վրա. եթե մեր թանգարանում լիներ, կլիներ հայ քանդակագործների համար ներշնչման աղբյուր՝ թե՛ ժողովրդի ճաշակի զարգացման համար և թե՛ իբրև թանգարանի գանձ, ունիկում:

* * *

Պարթենոնի առաջ, մեկում, մի զոհասեղան կա (ատրուշան), թերես նրա միջից հանած, կամ մի այլ տաճարից, հիմա դուրս, անտեր ընկած...

Ամեն կողմ, Ակրոպոլի վրա, ոյուներ, մնացորդներ, բեկորներ, խոյակներ, քանդակներ, հսկա պատվանդաններ, հսկա քարեր, 7—10 քայլ երկարությամբ: Մարմարներ...

Կային թնդանոթի կտորներ, հին թնդանոթի, երեկի թրքական հիշատակներ...

Ժամանակը, դարերը, իրենց արեներով, ցրտերով, անձրեով, ձյունով, քամիներով ու փոթորիկներով, տաք ու պաղով մաշել են, կերել, կրծել մարմարները, Պարթենոնի սյուները. ողջ, անվնաս, անվթար քար չի մնացել. մարդկային ձեռքն էլ իր կարգին: Եվ դեղնել են հրաշալի սպիտակ մարմարները, ժանգոտել...

Սյուների տակ, տաճարներում, բարբարոսները՝ պարսիկ-թուրք հաճախ խարսչեներ են վառել, հրդեհել են տաճարները և կրակով, ջրով պայթեցրել. ճաքեցրել են շենքերը, սյուները:

* * *

1936 թվի Հոկտեմբերին գնացի Աթենք: Ուղում էի տարիների փափառ կատարել, տեսնել հույն ոգու մարմնացումը, առարկայացումը, տեսնել տեղն ու տեղը, հույն հոգի վրա, նրա զոյակապ ճարտարապետական հրաշալիքները և քանդակագործական հրաշքները: Պարթենոնը, Պրոսպիլեյը, երեխտեցնը (Ակրոպոլիսում) շինված են պենտելիկոնյան մարմարինով. Անշենքերի մեջ ու մի հասարակ քար, աղյուս չես տեսնի: Ան-

սահման գեղեցիկ, կատարյալ գեղեցկություն՝ սյուների, սյուների, սյուների, ծածկի և սյուների վրա զրած քարերի, ոչ թե խոյակների, այլ եռանկյունների, էպիտավրերի:

Այս շենքերը տեսնելով՝ զգում ես, հասկանում ես, թե ի՞նչ է գեղեցկությունը:

Մարմարիոնը հնությունից ստացել է մաղաղաթի դույն, շատ մասերում ոսկեզօծվել է արեից, արեի լուսի աղղոցությունից: Դարերի ընթացքում մարմարիոնները ծծել են արեի ոսկին, արեի լուսը:

Այդ իդեալական գեղեցկության առաջ հիացած ես, թվում է թե իրականության մեջ չես, այլ երազի. երազ է, թվացում է: Չես հագենում նայելուց: Ուզում ես միանալ, ձուլվել նրա հետ, շոշափում ես, մատներդ զգում են, ճրճվում են, երջանկանում են: Կատարյալ է ամեն մի դետալի (մանրամասնի) մեջ, քանդակների, օրինամենտների մեջ... Ամեն մի մասի մեջ նույն գեղեցկությունը, վեհությունը, վսիմ պարզությունը:

Սկրոպոլիսի վրա—ամեն ինչ կապույտ և սպիտակ. վեցեր՝ կապույտ երկինք, հեռուն—ծովը՝ կապույտ, հորիզոնը՝ կապույտ, իսկ տաճարները, շենքերը՝ ճերմակ: Երկինքը, ծովը և Պարթենոնը հյուսվել են իրար հետ, կազմում են մի շքնար ներդաշնակություն, մի բնություն՝ իրար լրացնող, մի երրորդություն՝ մեկը առանց մյուսի թերի, անկատար:

Արել փայլեցնում է, օծում է երկինքը, ծովը, շենքերը. Հունական շենքերը կույր պատեր չունեն. սյուներով են նրանք զգում, սյուները՝ պատեր են. սյուների ամենքի միջից խոյանում է երկինքը, ձգվում է ծովը. իրար մեջ են մտած, կարելի չէ բաժանել մեկը մյուսից: Կարծես նյութ չկա: Սյուները աննյութացել են՝ մշտապես թաթախված լինելով արեի և երկնքի լույսով ու կապույտով. օդը՝ լույս է և կապույտ:

Նյութով չեն շինել այդ հանճարեղ ճարտարապետները. նրանք Պարթենոնը շինել են լույսով, երկնքով, ծովի կապույտով, արեի ոսկով: Հույները չորս տարերքով չեն օգտվել, այլ հողը թողնելով, վանելով՝ իրեն ծանր նյութ, շինել են օդից, ջրից, ջրից (օդ, արե, ծով):

ՊԵՂՎԱԺՐ և ՊԱՐԹԵՆՈՒՆԸ ներդաշնակություն են. պեղվածից բխած, պեղվածի տրամադրության համաձայն, ինչպիսոր հայ պեղվածը և հայ ճարտարապետությունը՝ ժայռերից բուսած, ժայռերից բխած, խիստ ժայռեղին բնության մեջ, ծլատ, զուսպ: Եթե հույն շենքերը տեղափոխիս Հայաստան, կկորցնեն իրենց գեղեցկությունը, հունական գեմքը, հոգին. նույնը՝ եթե հայկականը տեղափոխիս Հունաստան՝ կկորցնեն մեր շենքերը իրենց հմայքը:

ՊԱՐԹԵՆՈՒՆՆ իր տեղում—ահա՝ լրիվ գեղեցկությունը:

Ինչպիս որ մեր շենքերը շարունակությունն են մեր ժայռերի և լեռների գեղեցկության, այնպիս էլ Սկրոպոլիսի շենքերը՝ շարունակությունն են ծովի, երկնքի, արևի գեղեցկությանց:

«Գեղեցկությունն ազատում է մեր հոգին կյանքի ծանրությունից, հոգսերից, մանրունքից»:

Դ. Մերկեծկովսկին Սկրոպոլ բարձրանալիս՝ տեսնելով Պրոպիլեյը, ասում է. «Ոռացա զրամական հոգսերը, օրվա սարսափելի տաքությունը, ճամբորդական հոգնածությունը, ներկայիս փիլիսոփայական հոսանքները՝ սկեպտիցիզմ... և այլն, և այլն»:

* * *

Երկակայությունս այլ Աթենք էր շինել, հոյակապ, աստվածային. տեսանելի էին Սոկրատես, Դեմոսթենես, Պլատոն, Պերիկլես...

Այն, ինչ իրական Աթենքն էր—քաղքենի մի քաղաք, բանկ, խանութներ, սրճարաններ...

Հնություններ էլ զրեթե չկան...

Մեկը սրամմարեն ասաց, թե՝ հիմի պիտի հնություններ շինած լինեն՝ ուղեղորներ, զբոսաշրջիկներ զրավելու համար...

* * *

Շրջում ես և սրտատրոփ լարում ես ականջդ, միտքդ, աշքերդ՝ լսելու իմաստունների խոսքը, տեսնելու մեծ արվեստագետներին...

Կանգ ես առնում և սրտանորովի... ականջդ լարում, աշ-
քերդ ծովացնում...

* * *

Պարթենոնը՝ ձևերի արքա, հրաշք, երազ...

* * *

<.,> Պարթենոնը՝ հին, զարեսր փայլով, վսիմ և շընազ,
թեթև և հոգեղինացած կանզնել էր ժայռերի վրա և սլանում
երկինք:

Պարթենոնը երկնասլաց է, վերասլաց, երկնայինացած,
լուսեղին մարմարիոններ՝ հոգեղինացած:

Հույն գասական ճարտարապետությունը գեղեցիկ է, նրա
գաղտնիքը առինքնող, զրավիչ, հիացնող, ուժը՝ պարզության,
շափի, ներդաշնակության, մեջն է, և այդ հատկությունները
դարձնում են նրան վսիմ: Նա շքեղ չէ, պերճալից չէ, բարդ
չէ, խճողված չէ, ծանր չէ, ինչպես հնդկականն է, գոթիկն է,
ուղղություն չէ: Պարզ է և թափանցիկ. կազմված է զրեթե միայն
սյուներից: Զարդեր շատ քիչ ունի. միայն ազնիվ, նորր,
երկնասլաց ոժեր:

* * *

Հին հույները գեղեցկի զգացումն ունեին, գեղեցիկը
շինելու շնորհքը, գեղեցիկը ստեղծելու գյուտը, գաղտնիքը:
Ծինում էին թեթև, ներդաշնակ, վսիմ:

Երբ այցելում ես Պարթենոնը, զգում ես քեզ երկրից
վերացած, թեթեացած, եթերացած, երջանկացած, հիացած...
վեհացած:

* * *

Հույները գիտեին գեղեցկի գաղտնիքը. ունեին շափի
զգացումը, որ աստվածային շնորհ էին համարում, երկնա-
տուր...

* * *

<...> Ներկա, արդի ճարտարապետությունը հնի այլա-
սերումն է, շատ անտաղանդ ընդօրինակումը: Կարծես հինը,
զասականը պլատոնյան իդեաներն են, նախատիպարները,

կաղապարները, իսկ ներկայինը՝ նրա կողիաները, պատճենահնահնը...

Աթենքում կան շինած շատ շենքեր՝ մուլեյներ, պոլիտեխնիկակում, համալսարան, գրադարան՝ կլասիկ ոճով, բայց ի՞նչ զռեջկացում, ի՞նչ անշնորհ վերարտագրում, անտաղանդ թարգմանություն—ավելի լավ է՝ թողնեն հինը իր անմրցելի փառքի մեջ և շինեն նոր ոճով՝ Novecento, XIX դարու ոճով՝ Կոնստրուկտիվ ոճով։

Իտալացիք, ֆրանսիացիք շատ ավելի տաղանդավոր կերպով են ընդօրինակել, Փարիզի Պանթեոնը շատ ավելի հաջող է։

<...> Նոր շենքերը և նրանց մարմարները շունեն հների հմայքը, շնորհքը և տոկունությունը։ Շինված են, կարծես, ժամանակի համար. պատերը ճեղքված, մի խոսքով՝ կհղծիք, կեղծ դրամներ։

ՎԵԶԸՆԵ

(Իմ օրագրից)

Ավալոն գեղեցիկ քաղաքի ստորոտից փովում է Բուրգոնտիայի Հարուստ, ընդարձակ դաշտի մի մասը, որի կենտրոնում բարձրանում է Վեզըլեի ժայռոտ բլուրը։ Ծովածուի անտառների և կանաչավառ արտերի մեջ բլուրը նմանում է մի վիթխարի նավի և Վեզըլեի հինավորց տաճարի աշտարակը՝ երկնաշուպ կայմի։

Վեզըլեի Հռչակավոր տաճարը։ Աշխարհիս երեսին քիչ կա այսպիսի մի վսեմ, ներդաշնակ, գեղաշուր կառուցում։ Մի շքնաղ երազ, որ քարացել է, մի լուսեղեն տենչանք, որ մարմին է առել։ Նրա նախագավիթը՝ ոռման ոճի մի բյուրեղ։ Քնքուշ սյուները, կամարները, ծածկը... Գեղեցիկը, իրոք, վերջանում է այստեղ։

Տաճարը ինքը՝ դոթական և ոռմանական արվեստների դաշն զրկախառնում։ Ամեն մի սյունի առաջ տրուիում է սիրտգ գեղարվեստի երշանկացնող վայելքով։

Հափշտակված նայում եմ տաճարին, նայում եմ, — և տեսնում եմ մեր երերութը Շիրակի դաշտում, մենավոր, ամայի, դարերի և թշնամիների առաջ կքած, բայց վեհ, շքնաղ, երազային։

Ինչու այսպիսի սրտագին նմանություն են զգում երերութի և Վեզըլեի միջև՝ VII և XII դարերի այս հրաշագեղ կոթողների։ Երկութն էլ վսեմացած, հոգիացած, անմաշացած։

Բարձրանում եմ աշտարակի կատարը, նայում եմ շուրջսա... Հեռուները—Բուրգոնտիայի կապույտ, քնքուշ հորիզոններին. նույն սրտագին ժտերմությունն եմ զգում—Հայրենի Հորիզոնների կախարդանքը:

Նստում եմ նախագավթի գուան սանդուղքի քարերի վրա: Խորունկ լուսվյուն կա, անհզր անդորրություն:

Լուսմ եմ և ներանձնանում: Բարակ, անիրական Հովը շշնչում է ականջիս: Անցած դարերի մասին է զրույց անում: Հարյուր հազար տափեներ ծովացած են տաճարի շուրջը, հեռվից գալիս է նժույզների վրնչունը, տրուբադուրները երգում են առաջին խաչակիրների սիրագործությունները: Տաճարի բարձր ամբիոնից հրեղեն խոսքերով քարոզում է սուրբ Բերնարդոսը, ասպետներին բոցավառում է սրբազան պատերազմով՝ Քրիստոսի գերեզմանը աղատելու համար սարակինոսներից: Արեկի տակ շոշագում են սաղավարտները, փայլատակում են սրերը, և հարյուրավոր ասպետները որոտում են—խա՛չ, խա՛չ, դեպի՛ Երուսաղեմ, դեպի՛ Երուսաղեմ... Նժույզները վրնչում են և երկաթե սմբակներով ծիծում սալահատակները, տրուբադուրները փառարանում են սպետների հաղթանակները...

Աշքերս բաց եմ անում—խորունկ լուսվյուն կա և անհզր անդորրություն. Հրապարակը մերկ է և թափուր: Ու՞ր գնացին նրանք, այդ ծովածավալ բանակը, նժույզները, ամբոխը: Երազ միայն: Կարծես բնավ չեն եղել:

Անհնար է հագենալ Վեղըլիի անպատմելի գեղեցկությունները: Անհնար է բաժանվել շքնաղ Վեղըլիից:

Մնա՞ս բարե, Վեղըլի՛, էլ չեմ տեսնի բեզ:

Անմա՞ս երերութիւննեմ, քո կարութը երերութիւն կառնեմ:

Մնա՞ս բարե, շքնա՞ղ Վեղըլի...

ԱՍՈՒՅԹՆԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՍԻՆ

Ճարտարապետությունը բանաստեղծություն է՝ ոիթու,
բառ, խմաստ, նպատակ:

* * *

Ճարտարապետությունը երաժշտություն է, և ընդհակա-
ռակը:

* * *

Վենետիկ.—Միայն երեակայության մեջ աշխարհը կարող է այսքան գեղնցիկ լինել. իրականություն չէ, կարծես, մեռ տեսածը, այլ անուրջ, երազ, հերիաթ, կախարդական տեսիլ, պատկեր... իրականացած երազ...

Այնքան գեղեցիկ, այնքան խոր, անսպառ գեղեցկու-
թյուն, որ ամեն օր թվում է, թե նոր ևս տեսնում և այնքան
ծալքեր ունի, զարստություններ, փարթամ, ճոխ, որ ամեն օր
նոր բան ևս գտնում նոր մի պալատ, դուռ, քանդակ:

* * *

Վենետիկը, կարծես, մի մարդ է շինել, մի մարդու ձեռ-
քի գործ է; Այնքան նման են իրար նրա շենքերը, որոնք թե
կառուցված են զարերի ընթացքում:

Ահա թե ինչպես է ստեղծվում ոճը իրար նմանվելով,
իրար լրացնելով և կատարելազործվելով։ Այսպիս են ստեղծ-
վել Պաղուկեն, Հնդկական, Հղիպատական, Հունական ոճերը։

* * *

Երբ նայում եք Ֆլորենցիայի կամ Հռոմի գեղարվեստա-

կան իրերին, ձեզ թվում է, որ դուք երկրի վրա չեք, այլ մի
կախարդական աշխարհում:

* * *

Տորշելո.

Էլիկական ոճ, քաղցր, անուշ, սրբածիտիվ (Աթթիլայի
էպոփա): Պարզ, գեղջկական արխիտեկտուրա, անկեղծ զյու-
ղացի վարպետներ՝ առանց ֆորմալիզմի, սիթենթանթի,
զանգվածային:

Հացի պիս՝ լավ, պարզ, առողջ, անշրաժելաւ, բնական:

* * *

Аquileja—Լոմբարդական ոճով զանգակատումը, որ զի-
ուալոր կերպով հիշեցնում է Հայկական գմբեթը: Վենետների
երկրում:

* * *

Նոտր-Դամի տաճարը ուղղակի երաժշտություն է, և
կանգնում եմ Զանախ նրա առաջ և լուսմ եմ, ունկնդրում
այդ վսեմ նվազին ու երազում:

* * *

Գոտիկ <գոթական> ոճը զարդերը ներսում ավելի ունի,
քան դուրս:

* * *

Ոճը ժողովրդի հոգու, բաղձանքների կոնկրետացումն է:

Գերման, միստիկ ժողովուրդը ստեղծել է իր տաճարը՝
ալացիկ, մթին: Եկեղեցու գմբեթը աղոթքը ձագարի պիս եր-
կինք տանող:

* * *

Քյոլն:

Զուտ գերմանական քաղաք իր արխիտեկտուրայով, գո-
թական քաղաք. իշխողը գոթիկն է, բայց կան և այլ ոճեր:

Զարդանալի էր, երբ Աստվածածին անցա, Հայկական ոճով
եկեղեցին, զար և նման, միծ ու փոքր գմբեթ, արմենիկա:

Երբ տունը դիտմամբ շինում են անտաշ քարերից, տարերքի տպավորություն է թողնում. տարերք կա նրա մեջ: Եվրոպայում մոնումենտալ շենքերը շինում են քառակուսի, ծայրը հղկված, բայց մեջը անտաշ, իբրև թե անտաշ քարերից: Այդպիս ձև տված՝ անտաշ:

* * *

Հաճախ շինանյութը նախորոշում է, ծագեցնում է ճարտարապետությունը: Ռուսաստանում՝ փայտը: Վասիլի Բլաժենու տաճարը փայտեղենի արդյունք է:

* * *

Քաղաքների ճարտարապետությունը ազդում է բնակիչների վրա: Տիսուր կամ զվարի շենքերը, հաղթական կամ նկուն, հենց այդպիս էլ դարձնում են մարդկանց:

* * *

Կառուցանել՝ կնշանակե իր ապրելու կամքը հաստատել, իրականացնել: Կառուցանել՝ դա հոգու, մտքի հաղթանակն է նյութի վրա:

* * *

Ուրույն ճարտարապետական շենքերը մի ժողովրդի հոգու շոշափելի կնիքն են իր ապրած երկրի վրա, երկրի մակերեսի վրա. այսպիս ասած՝ մի ժողովուրդ իր ստեղծագործությամբ և հոգու էությամբ կնքում է այդ երկիրը, կնքում է իր անունով: Եղիպտական կնիքը եղիպտոսի վրա է, հայության կնիքը՝ Հայաստանի վրա:

ԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆ



ԿՈՄԻՏԱՍԱՐ ԱՆՄԱՀ ՀԻԾԱՏԱԿԻՆ

(ԾԱՇԽԱՅ 80-ամյակին)

Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ էր. «Եղբայր Սովորմոնը», ինչպես կոշում էինք նրան Գևորգյան ճեմարանում. տարիներ ապրել ենք նույն հարկի տակ. խոսել, կատակել: Ճամփորդել ենք միասին հայ գյուղերն ու ուխտատեղիները (Սևան, Հառիճ), ուր նա երգեր էր հավաքում: Եղել ենք միասին Ելրոպայում, Ստամբուլում. բայց այս ամենը թվում է ինձ ո՞չ իրական: Կոմիտասը ինձ համար հիմա լեզենդ է, հեռավոր առասպել, և նրա կյանքն ու փառապանծ գործը մի չքնաղ հրաշապատում:

* * *

Կոմիտասը մեր ժողովրդի հապարտությունն է. նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը:

Ինչո՞վ է արժանացել նա մեր ժողովրդի այս բարձր գնահատանքին: Նա ո՞չ օպերաներ է գրել, ո՞չ օրատորիանեռ, թերեւ մի քանի արիաներ կամ ոորմանսներ միայն: Բայց ավելի մեծ գործ է կատարել, քան այդ բոլորը: Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրուցն, ինքնատիպ և անազարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուտուրայի:

Մարդիկ կային, հայեր և օտարներ, որոնք պնդում էին, թե հայ ժողովուրդը ազգային երաժշտություն չունի, թե նրա երգը նմանողություն է եվրոպականին, թրքականին, քրդականին...

Կոմիտասը անխոնչ աշխատությամբ, իր հանձարի ուժով, իր զարդանալի ինտուիցիայի շնորհիվ, նաև իր տեսական լուրջ պատրաստությամբ ապացուցեց Հակառակը, ապացուցեց Հայ երաժշտության ինքնուրուցն գոյությունը՝ բխած Հայ ժողովրդի հոգուց և գարերի միջով մեկ հասած: Նա զիմեց Հայ երգի ակոնքին՝ Հայ շինականի, գեղջուկի, աշխատավորի երգին. Արարատյան գաշտի, Շիրակի, Վանի, Մուշի ժողովրդական երգերին: Նա ուզեց Հայկական երկրի բնության մեջ, Հայ գեղջուկի շրթունքներից լսել Հայ եղանակներն ու երգի խոսքերը:

Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողովրդի հետ, ներձուվեց նրա հետ, ներապրեց նրա երգերը և սրտով Հասկացավ, որ Հայ երգի ոճը թաքնված է ժողովրդի այդ երգերի մեջ, միայն պետք է մաքրել այդ երգերը օտարանուտ ժանդից ու անտեղի զարգերից, որոնք ազարտել էին Հայ երգը: Եվ ցուց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝ մաքրված, ինքնուրուցն և անազարտ:

Կուտուրական ժողովուրդները՝ ոռւսները, ֆրանսիացիները, իտալացիները ընդունեցին Հայ երաժշտության ինքնուրուցներին և Հիացմոնքով տեսան մի նոր զեղեցկություն, մի նոր երգ, մի նոր Համամարդկային Հարստություն: Այսպիսով մեր շինականի երգերը՝ աշխատանքի, բնության, սիրո, ուրախության և տիրության, նա բցուրեղացրեց, բարձրացրեց և որպես ազգային մեծարժեք գանձ դրեց մեր ժողովրդի Հոյակասդ գանձերի՝ ճարտարապետության և Սասունի էպոսի կողքին:

Հիշում եմ մի գեղեցիկ օր: Էջմիածնում Հյուր էի Կոմիտասի մոտ. նստել էինք նրա փոքրիկ պարտեզում, ստվերաշատ տանձենու տակ: Կոմիտասը նոր էր գտել «Մոկաց Միրզան» և մշակել էր այդ էպիկական հումկու երգը: Շատ ոգեսրված և երշանիկ էր զգում իրենց այդ գյուտով: Կատարեց ինձ մոտ արվեստի բացարձակ կատարելությամբ: Անկարելի է նկարագրել այդ: Ես Հիացած էի և նույնպես երջանկացած: Դեռ մինչև այսօր ես հոգուս մեջ տեսնում եմ ոգեսրված

Կոմիտասին և լսում նրա սրտաբուխ ձայնը: Կոմիտասը հրապուրել, Հոմայել էր ինձ:

— Ես երգը շատ հին է,—ասաց նա, — Հեթանոսական դարերից, թերեւ: Տե՛ս, ի՞նչ զոր ձայներ կան, ի՞նչ խրոխտ շեշտեր: Մեր բարձր լեռներից, շառաշունչ ջրերից, խոժոռ ժայռերից են ծագում առեւ: Մեր քաջ նահապետների հոգոց է բխել այս առնական երգը: Այնքան հին է նա, որ անշուշտ Զենով Օհանը երգել է, Սասունցի Գավիթը լսել...

Եվ ուրախությունից փայլում էին նրա աշեքերը: Մեր գյուղական ժողովրդից վերցրած երգը Կոմիտասը բյուրեղացրած վերադարձրեց նրան: Այդ երգը եկավ քաղաք, բարձրացավ բեմերի վրա, հաղթական հնչեց բոլոր հանդեսներում:

Ուր որ հայ կա, այնտեղ է և Կոմիտասի երգը: Կոմիտասը համազգային մեծություն է: Նրա երգով մեր ժողովրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաշեց: Հայ հասարակությունը զգաց իր աշխատավոր ժողովրդի վիշտն ու հրճվանքը, նրա աշխատանքի պաֆուր, նրա սերը գեպի իր հայրենի բնությունը:

Կոմիտասը հայ երգով լուս աշխարհ հանեց զարերի խավարի միջ կեղեգված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղզված վիշտը, իրավագուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդես տածած հավատը:

Կոմիտասը զոհն եղավ թուրք պետության բարբարոսության. նա տեսավ հայ ժողովրդի՝ կանանց, երեխանների, ծերերի, աշխատավորների և մտավորականների երթը գեպի մահ, դեպի գերեզման: Բոլորը, բոլորը անցան նրա մեծ, խորազգաց սրտի միջով, և նա խորտակվեց, շախչախվեց:

Անհունորեն մեծ է մեր վիշտը, մեր կորուսար. ինչքա՞ն գանձեր նա տարավ իր հետ... նա կարող էր այսօր մեզ հետ լինել, մեր ազատազրված հայրենիքում, ուր ինչքա՞ն գործ ուներ կատարելու. ի՞նչ հրճվանքով պիտի տեսներ մեր երաժշտական նոր սերնդին, որը Կոմիտասի պաշտամունքն ունի:

Սիրելի Կոմիտաս, այսօր և միշտ գու մեզ հետ ես քո շքեղ երգերով, քո բարձր արվեստով, պատմական սիրալի

գործով: Դու անմա՞՞ ես. ինչքան ժամանակ որ հայ ժողովուրդը կապրի, կապրի՛ և քո երգը: Բայց դու հոգնել ես շատ, սիրելի Կոմիտաս, տառապել ես շատ, զարհուրանքներ ես կրել. վայրագ թշնամու սուրն ես տեսել, հանգստացիր Հիմա, մայրենի հարազատ հողի գրկումն ես հիմա: Քո սիրած Արարատյան դաշտի բուրումնալից երգը ծալալվում է քո շուրջը, քո երգերը ծփում են քո վրա, քո երգերի հետ ծփում են աշխատանքի և աղատության նոր, հաղթական, կորովի երգեր...

Հանգչի՛ր խաղաղ, սիրելի՛, նվիրակա՛ն Կոմիտաս...

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐ
«ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄԱՀ ՀԻԾԱՏԱԿԻՆ»
ՀՈՒՇԵՐԻ ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա.

Կոմիտասին տեսել եմ 1889 թվին գ<կորդյան> ճեմաբանում. բոլոր մեծ աշակերտներին, երեց բնկերներին, կոչում էինք «եղբայր»:—Կոմիտասը—«եղբայր Սողոմոն»: Մեզ հետխաղում էր, վազում, գնդակ խաղում, կատակներ անում. շարածներ:

Նիշար, ոսկրոտ, աշխույժ, կայտառ, ջղային:

Միծաղում էր, անվերջ կատակում: Մորուքը ծամում: Հետո, սարկավագ ժամանակ:

* * *

Սոլո նվազելու անեկդոտը:

* * *

1901-2 թվից սկսած, հաճախ լինում էի մոտը, եջմիածին և հյուր լինում մոտը, քնում: Ուներ իր պարտեզում լավագանձնի:

Քնում էր շոր անկողնի վրա, գրեթե սավանի վրա, և բարձ շէր գործածում, կամ շատ ցածր բարձ:

* * *

Տեղեկություններ հարցնել երվանդ Տեր-Մինասյանից,
Հ. Հովհաննիսյանի կնոջից:

* * *

Կալվածքների գրավված ժամանակ մոտը ժողովներ էինք անում. նա գրեթե չէր մասնակցում, կամ հյուրասիրում էր, կամ ծիծաղեցնում, զանդան կենդանիների ձայներ հանում: Բոլորովին նման:

* * *

Գյուղական երգը նմանեցնում էր գյուղական միջարշանի, հողին հավասար, պարզ տան հետ, որի մեջ թռնիր կա—կրակ. սնունդ տվող, հաց թխող կրակ, ձմեռը տաքացնող:

Որոնում էր, ձգտում հայ մելոսը զատել մոնղոլական, թուրքական մելոսից:

* * *

Աշխատանքի երգեր, հարսանիքի երգեր, պանդուխտի երգեր, մահի երգեր՝ յուրաքանչյուրը իր կոնկրետ պահին երգվող. Հարսանիքի երգը՝ հարսանիքին, պարինը՝ պարին, մահին՝ մահվան: Գյուղացին երբեք հարսանիքի ժամանակ չի երգում աշխատանքի երգեր, և կամ կալի ժամանակ՝ դութանի, ցանքի երգեր: Ինչպիս մենք, քաղաքացիներս ձմեռը կոնցերտ ենք տալիս և երգում ենք զարնան երգեր, մահի երգեր, հնձի երգեր... Երգը կապված է նրանց մոտ տվյալ մոմենտի հետ:

* * *

Նա ապրում էր ո՞չ թե մեր իրական աշխարհում, այլ երգերի մեջ. նրա համար զոյտվյուն ունեին երգեր, հնչյուններ. աշխարհը նրա համար երգ էր, ձայնի պատկերներ:

* * *

Կարդալ նրա մասին գրած գրքերը, հուշերը:
Ինչպիս և Ռ. Թիրլհմելյանի գրքույիը:

* * *

Կոմիտասի հետ Կ. Պոլսում:
Հարցնել Փանոսին նրա մասին:

* * *

Նա մեռավ օտարության մեջ, բայց մարմինը բերին
հայրենիք և թաղեցին հայրենի հողում:

Նա հայրենացավ, դարձավ հայրենի հող:
Հայրենացած, հայրենի հող դարձած:

Բ

<Կամփտաս>

<...> Աննկուն, անխոնչ աշխատող. խոշընդոտներ և
արգելքներ հաղթահարող: Անսպառ եռանդ. տիտանական
աշխատանք—հաղարավոր երգեր հավաքել, ուսումնասիրել,
վերլուծել:

Գիշերներ լուսացնել, դիմանալ միայն ներվերի լար-
վածքով: Անձնվեր, բոլորանվեր աշխատանք, տարվել, հանձ-
նել աշխատանքին, տոգորվել նրանով:

Հեռանալով իրականությունից, կյանքի վայելքներից,
ապրել ճնավորի պես՝ ինքնամոռաց, աշխարհամոռաց: Իրա-
կանությունը ժխտել և ապրել իր իրազանքի, իր աշխատան-
քի, իր ստեղծագործության իրականության մեջ, իր ուղեղի
մեջ, ձայների աշխարհի մեջ:

Հանճարի հատկությունն է դա. Հափշտակվել իր գյուտով,
գործով, իր ստեղծած մթնոլորտով, իր աշխարհով:

Կարծես պատմությունը, բնությունը ստեղծել էր նրան
մի մեծ, հոյակապ գործ կատարելու համար. ընտրել էր նրան
ի հայտ բերելու հայ երաժշտությունը, հայ երգը, զանելու
հայ երգը՝ կորած, խաթարված, ժանգոտված, աղավաղված՝
իշխող և դրացի ժողովուրդների երգով, մելոսով:

Նա մեծ միսիա (առաքելություն) ուներ. Հայոց դարա-
վոր պատմությունից պատվեր՝ աշխարհին տալու մի նոր
գեղեցկություն, մի նոր աշխարհ:

Հանճարի հատկությունն է—ստեղծել նոր բան, ասել նոր
խոսք, բանալ նոր աշխարհ:

Այդ մեծ գործը իրականացնելու, արևի տակ բերելու, Համոզելու շար կամ ոչ բարյացակամ մարդկանց, պահպանողական մասնագիտներին, որ կա Հայ երգ, Հայ մելոս—նա նվիրվեց դրան, շնչեց, սնվեց դրանով, տքնեց, ճզնեց, ապրեց, այրվեց:

Չ.

Եկավ էջմիածին, Արարատի գաշտը, Հայ ժողովրդի տարերքը: Ամենայն Հայանականությամբ նա առաջին անգամ լսում է Հայ ժողովրդական երգեր, ասում են առաջին անգամ, որովհետև նա գալիս է գրեթե թրբախոս Հայ միջավացրից, մի վայրից, որ շրջապատված է թրբովթյամբ:

Նա բնությունից օժագած լինելով երաժշտական մեծ ոնդունակությամբ, սիրեց, սովորեց Հայերին երգերը, ինչպես և եկեղեցական երգերը, և երգեց թե՛ այն և թե՛ մյուսը:

Էջմիածինը Հայ ժողովրդի կենտրոնն էր, ուխտերի ժամանակ, մանավանդ մեծ ուխտերի, էջմիածին գալիս էին ամեն կողմից Հայեր, Հայկական բոյոր զավառներից, ոչ միայն Ռուսաստանից, Կովկասից, այլև Թուրքիայից և Պարսկաստանից, Հետները բերելով տեղական ժողովրդական երգեր: (Ինչպես և աշակերտները՝ ամեն կողմերից):

Եղավ գյուղերում, ուխտավայրերում և լսեց երգեր, ձայնագրեց, սովորեց և տարածեց:

Նա լսեց, որ կան մարդիկ, նույնիսկ զիտուն, որոնք չեն ընդունում Հայ երգի ինքնությունը, որոնք ասում են, թե Հայ ժողովուրդը երգ չի ստեղծել. քուրդը, վրացին, ասորին, օսք, շերքեղը ունի, Հայը չունի:

Կոմիտասը վիրավորվում էր և զայրանում, և մի բախտառոշ, մեծախորհուրդ վճիռ կայացրեց՝ ապացուցել աշխարհին, որ Հայը երգ ունի. ինքը Համոզված էր, բայց պիտի ուրիշներին Համոզեր: Նա զիտեր, որ Հայ երգը ժամանակի ընթացքում ժանդապվել, ընդունել է ավելորդ տարրեր օտարներից—պիտի էր մաքրել արտաքին, օտար միջամտուներից,

ներմուծումներից, բալաստից, ազգեցություններից, խանգարումներից—... նա գիտեր, որ չկա մի ժողովուրդ, որ ազգված չլինի: Աշխարհին, Հակառակորդներին պետք է ցուց տալ զուտ Հայկականը, չաղավաղվածը, չժանդոտվածը:

Եվ ձեռնարկից ուսումնասիրության: Ուսանեց եվրոպացում. շրջեց, դիտեց, լսեց Հարեան ազգերի երգը, ուսումնասիրեց... վերջ ի վերջո ցուց տվեց բյուրեղացածը, անվիճելի Հայկականը: (Մի երջանիկ ինտուիցիա ուներ, որ կա Հայ երգ, շատերի աշքից թաքուն, վրիպած).—և երբ ցուց տվեց, ապացուցեց, այն Ժամանակ Հակառակորդները զարժացան այդ գյուտի վրա, մի գյուտ, որ ժողովուրդի Համար զարեւոր իրականություն էր և ոչ թե նոր գյուտ, կորածը գտած:

Ժողովուրդը զարերով երգել է իր հոգուց բխած երգը, այդ Հարազատ, ինքնուրուցն, տոհմիկ երգը արտահայտել է իր վիշտը, սերը, ուրախությունը, հույսերը, երազները, տեհնչերը, պայքարը, իր կյանքը, իր աշխատանքը... Եվ միայն զարմանալի է, որ եղել են մեծ թվով մարդիկ, որոնք ականչ շեն ունեցել, ճաշակ, գիտություն <...>

Դ

Կոմիտասի երգերի թիվը (մեզ Հայանի) 1000-ից ավել է (թեև վկայություններ կան, որ իբրև թե 4000 երգ է Կոմիտասը ձայնագրել):

Նրա լիրիկական երգերը «Հայկական գեղջկական երգարվեստի կատարելությունն արտահայտող լավագույն նմուշներից են».

Էմոցիոնալ են.

Խորը. բազմազան.

Սիրային՝ մեծ մասով.

Կենցաղային, աշխատանքային, էպիկական, պանդխտային, պատմական.

Հարսանեկան երգեր.

Ուխտատեղերի երգեր.

Վիճակի երգեր. Համբարձման.

Հորովելներ:

Կոմիտասի գերը մեծ է հայկական երաժշտության զարդացման մեջ: Նրա մշակած երգերը, մնղեղիները, նրանց ազգեցությունը տիրական է բոլոր մեր նոր սիրֆոնիկ, օպերային երաժշտության մեջ:

Ճշմարտությունից բնավ հեռու շենք լինի, եթի ասենք, որ Կոմիտասի երեսումից հետո մեր ոչ մի երաժիշտ, ոչ մի երաժշտական գործ չկա, որ կրած չինի Կոմիտասի ազգեցությունը:

—Եղած ազգային ոճը զարգացնել:

Կոմիտասը ժողովրդի նախակերտ (պրիմիտիվ) երգերը մաքրեց ոչ հարազատ տարրերից, ժանգից, կոպիտ, հասարակ, գուեցիկ տարրերից, բյուրեղացրեց, ազգային ոճը զարգացրեց, բարձրացրեց և նոր, բարձր որակի հասցրեց:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՈՎ

Մեծ կոմպոզիտոր Ա. Սպենդիարովի անունը շատ վաղուց էի լսել ևս՝ «Երեք արմավենի» շքնազ սիմֆոնիայի հետ միասին։ Այդ սիմֆոնիան շատ հուզել էր ինձ։ Դրանով էլ վերջացել էր իմ ծանոթությունը նրա երաժշտության հետ։ Սակայն շատ տարիներ հետո, արտասահմանում, իմ պանդիստության շրջանում, ևս չափազանց մի հուզիլ հանդիպում ունեցա նրա երաժշտության հետ։

Վենետիկյան ոսկեվառ աշնան մի երազական երեկո նստել էի Սան Մարկոյի մարմարակերտ պիացիայի մի սրճարանում՝ հայացքս հառած ոսկեզօծվող ծովին և Գոժերի Հերիաթական պալատին՝ լսում էր բանդա Մունիշիպալիին (Քաղաքային օրկեստրին), որ նվագում էր պիացիայի վրա։

Այս բանդան նոշակված է ամբողջ եվրոպայում, Հոռմի բանդայից հետո երկրորդն է համարվում։ Այդ երկու բանդան երբը միշտազային մրցման մեջ միշտ հաղթանակ են տարել։

Այս բանդան նվագում էր կլասիկ և մոդեռն երաժշտության զլուխզործոցները՝ Վերդի, Բրամս, Վագներ, Բիգի, Գունո, Լեոնկավալալո և այլն, և այլն։

Հանկարծ լսում եմ հարազատ, սրտագին ձայներ, հայրենիքից եկած։ Սիրտս զարկում է ուժգին։ ի՞նչ է սա, պատրա՞նք է, երա՞զ է, ո՞րտեղից է...»

Իսկույն կանչում եմ սպասավորին, խնդրում եմ զնայմանա, թե ի՞նչ պիես են նվագում։ Գալիս հայտնում է՝ Սպենդիարով—էսքիզներ...

Հետո իմացա, որ նրա գործերը շատ հաճախ կատարում են և վրոպական մեծ քաղաքների հայտնի կաֆեներում, օրեւորներում:

Այնուհետև շատ անգամ լսում էի նրան, մանավանդ Միլանում, ուր ամեն օր նվազում էին նրա գործերից:

Մեծ երաժշտապետի հետ անձամբ ժանոթացա միայն 1926 թվի վերջերին, երբ նոր էի վերադարձել արտասահմանից: Այդ մեծատաղանդ մարդուց առաջին հանդիպումիս այն տպավորությունն ստացա, որ նա այս աշխարհի մարդ չէ: Նրա ոտները հազիվ էին դիպլոմատ այս երկրին. նրա հոգին՝ իր մտորումներով և երազանքներով բարձր ոլորտների, բարձր սիերաների բնակիչ էր: Իր մեջ ամփոփված այդ փխրուն մարզը լսում էր ձայներ, որոնք մեզ մատչելի չեին:

Դժբախտաբար, երկար շտենց մեր ծանոթության և բարեկամության շրջանը՝ միայն մի տարի: Այդ պատճառով մեր հանդիպումները թվով շատ շեղան:

Նա հետաքրքրվում էր իմ լիրիկայով և մտորում էր մի քանիսը ձայնագրել, մանավանդ ժողովրդական մոտիվներս, և առհասարակ հայ ժողովրդական երգերը: Սակայն ուզում էր ավելի խորունկ, ընդհուպ ծանոթանալ հայկական ժողովրդական մելոսին: Մի քանի անգամ ժամադրվեցինք երեկոները զնալ այնպիսի տեղեր, ուր ժողովրդական երգ կար՝ լինի հայկական, լինի ազրիշանական:

Աբովյան փողոցում գիշերները մի կույր վանեցի սրինգ էր նվագում՝ լուսության և մենության մեջ: Հանգուցյալը ուշադիր լսում էր նրան: Եղանք մի երկու անգամ ժողովրդական փոքրիկ հաշարանները, որոնց տեղն էլ հիմա հայտնի չէ, ուր նվագողներ ու երգողներ կային:

Մի երկու անգամ եղանք աղբեշանցիների մի շայխանեում, ուր բազմալար, երկար սապերի վրա աշուղները՝ երեկանից և Աղրբեշանից եկած՝ նվագում էին ու երգում թյորօղ-լի, Աշուղ-Դարիբ, Ասլի և Քյարամ և այլն, մրցելով միմյանց հետ:

Հանդիպեցինք մի քանի անգամ սքանչելի Սաշա Օզանեցավովիին՝ այդ անմըրցակից քյամանշիստին...

Ես հիացած էի նայելով, թե ինչպես ներդաշնակ ձայների այդ անզուգական իշխանը մանկական թարմ զգայնությամբ ընկալում էր դրանք: Եվ ողևորված բացատրում էր ինձ ժողովրդական երդի՝ Lied-ի բյորելյա պարզությունն ու հնչեցությունը, անմիջականությունն ու անկեղծությունը՝ հուզականությունը: Եվ այն զաղափարն էր արտահայտում, թե ժողովրդի երդի վրա պիտի կառուցվի, նրանով պիտի սնվի ավելի բարձր, կուտուրական ազգային երաժշտությունը և իվրոպականի հետ սինթեզ պիտի կազմի:

Մի երեկո,—և այդ երբեք շեմ մոռանալու, որովհետեւ այնքան քաղցր և սրբազն երեկո էր,—Ռումանոս Մելիքյանը, իմ շատ սիրելի և մտերիմ Ռոմանոսը, եկավ ինձ մոտ, որ տանի մհծանուն ճարտարապետ Ալեքսանդր Բամանյանի մոտ։ Նրա տարեղարձն էր և ներկա պիտի լիներ նաև Սպենդիարովը: Ի դեպ ասեմ, որ Ռումանոսին ես «Դոն» տիտղոսն էի ավել՝ «Դոն Ռումանոս»—այդպիս էի կոչում նրան։ Բայ իմ տպավորության, իսպանական ասպետական կոլորիտի և ոճի, շարժ ու կեցվածքի նրա զարմանալի նույնության համար։ Ասեմ նույնպես, որ Ռումանոսին շատ հաճելի էր «Դոն» տիտղոսը:

Ուրիմն, Դռն Ռումանոսի հետ զնացինք Բամանյանի տունը:

Թամանյանը ցուց էր տալիս իր ճարտարապետական էսքիզները, ճատակագծերը, նկարները, մակետները, Սպենդիարովը նվազում էր իր գործերից, նաև՝ Ռումանոսը։

Ինչքան որ արխիտեկտուրան և մուլիկան միմյանց հարակից և բարեկամ արվեստներ են, նույնքան էլ այս երկու մհծատաղանդ ստեղծագործողները՝ ճարտարապետ և երաժշտապետ՝ միմյանց բարեկամ էին։ Միմյանց խորապես հասկանում էին և համագումար։

Երբ Թամանյանը ոգեսրված ցուց էր տալիս իր կառուցած և կառուցվելիք շենքերի նկարները, Սպենդիարովը այնքան էր խանդավառվում, ինչքան Թամանյանը, երբ մհծ կումպողիտորը նվազում էր իր սիմֆոնիաները և Ռումանոսը՝ իր և Կոմիտասի ժողովրդական երգերը։

Ճարտարապետությունը և երաժշտությունը այդ երեկո հիմնալի կերպով հյուսված էին միմյանց, և հավասարապես հուզում էին մեզ:

Եթե գեղջուկի կամ հովվի պարզ խրճիթը իր չորս պատերով նման է ժողովրդի երգի քառյակին, չորս տողերին, ասենք, «Ձան գյուղումին», ապա թամանյանի մոնումենտալ շենքերը նույն են Սպենդիարովի նույնքան մոնումենտալ սիմֆոնիաներին, «Ալմաստին»... կամ առհասարակ երաժշտական մեծ կոթողներին: Մեկով մարտնանում էր, կամ թարգմանվում մյուսը, և մենք այդ երեկո ապրեցինք մի երշանիկ, ինքնամուաց պահ—բարձր արվեստի իսկական մի վայելք:

* * *

Սպենդիարովի գեղեցիկ առաջարկով ծրագրվեց մի գործ, որ, ավաղ, չկենսագործվեց ճակատագրական գժբախտության պատճառով, և մնաց միայն հուշ, մի ցավագին հուշ:

«Հայաստան» անունով մի տեթրալոգիա՝ այդ էր նրա զղացումը, մեր կոնցեպցիան, ուր պիտի ներկայանար Հայաստանի և Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև այսօր:

Առաջին մասում պիտի լիներ Հայ ժողովրդի ծագումը նրա միջական շրջաններից, աստվածներից, բնության տարերքի և ողիների հետ ունեցած նրա տիտանական կոիվներից:

Երկրորդ մասում—Հայ ժողովրդի բարձրացումը, պետության կազմավորումը, Հաղթանակները, փառքը:

Երրորդ մասում—սելչուկների, մոնղոլների արշավանքները, Հայաստանի անկումը, գերության, վշտի դարերը:

Չորրորդ մասում—Հայ ժողովրդի պատագրական պայքարը, վերածնունդը, Սոցիալիստական Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով Հայաստանի վերականգնումը, նրա վերելքը: Ես պիտի գրեի դրական մասերը, ինքը՝ երաժշտությունը:

Մտմոռում, մտորում էինք դրա մասին, խորհում էինք՝ մանրամասների մասին, երբ կատարվեց կատաստրոֆը և ընդմիշտ փուլ եկավ մեր գործը:

Վերջին հուշը, որ ունեմ մեր հավետ անմոռանալի Սպիտակարովից՝ Հետեւյալն է, նա ղեկավարեց 1928 թվի գարնանը «Ալմաստ»-ից հատվածներ մեր Կուլտուրայի տանը:

Վերջին անգամ...

Տակավին մինչև այսօր երևակայությանս մեջ կենդանի են նրա շարժումները, նրա ձեռքերի ոփթիթկան: Կարծես նա մեզ արդեն մնաք բարով ասաց. մեջքը մեր կողմը դարձրած՝ զնում, զնում, Հեռանում էր մեզանից...

Այդ երեկոյից շատ կարճ ժամանակ անցած՝ անսպասելիորեն լսեցի նրա մահվան բոթը...

Ես ծանր վշտով հետեւում էի նրա հուզարկավորության թափորին... և խորհում էի ինձ ու ինձ՝ բնությունը անփոխարինելի, դաժան հարված հասցրեց մեր երաժշտական կուտուրային... Դժբախտ Սպենդիարովը շատ վաղաճամ զերեղման տարավ չքնաղ ներդաշնակությունների, հոյակապ ծըրագրերի մի կախարդական աշխարհ, որ լսեց հավիտան... սակայն այն, ինչ նա թողեց մեզ՝ անմահ է, անկորնչելի, և իր հեռազդեցությամբ ապագա սերունդների ստեղծագործության վրա—անգնահատելի: Նրա ներշնչող մեծ անունը երբեք չի մոռանա, երբեք չի մոռանալու հայ ժողովուրդը, որին միշտ պիտի հուզե, ոգեսրե նրա նվիրական, անկրկնելի քնարը:

ՌՈՍՍԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՀԻԾՍՏԱԿԻՆ

Տասնհինգ տարի է անցել այն տիրապին օրից, երբ մենք կորցրինք մեր շատ սիրելի Ռումանոս Մելիքյանին, ամենալիրիկական մեր կոմպոզիտորին:

Հայ երգը, հայ երաժշտությունը սիրողների, նրա ընկերների համար անկարելի է հաշտվել այդ ժամը կորուսաի հետ. դա չգոցված վերքի պես այրում է մեր սրտերը:

Ես Ռումանոսին առաջին անգամ տեսել եմ 1904 թվականի գարնանը, Նոր՝ Նախիչևան քաղաքում։ Առաջին վայրկյանց նա գրավեց ինձ. Հրաշալի խոսակից էր՝ սրամիտ, հմացիչ իր ձայնով, իր բանաստեղծական շարժուձերով։ Հազիվ 20—21 տարին անցած լիներ, բարձրահասակ էր, գեղեցիկ, ճոխ մաղերով։

Ամեն օր հանդիպում էինք իրար նոր նախիչևանցիների հոչակավոր «Ասֆալդի» վրա, կամ պարտեզում։ Հետք ման էր ածում մի լավ կրթված, խելացի շուն՝ ցեղացին, բայց շեմ հիշում ինչ ցեղից։ Ելքերը հառած Ռումանոսին՝ սպասուի էր իր տիրոջ հրամաններին։ Թաթերի վրա էր կանգնում, բարեկում էր և այն։ Հետազայտում, ևս չէի կարող պատկերացնել Ռումանոսին առանց իր սիրելի շանը։

Մեծ հաճուչը էր պատճառում նա ինձ, երբ ոգեսրված խոսում էր իր ծրագրերի մասին. ուղում էր Կովկաս դնալ, շրջել հայկական դյուղերը, հավաքել մեր ժողովրդական երգերը, ուսումնասիրել, մշակել... և զարկ տալ հայկական առ-

դային երաժշտական արվեստի ամրացմանն ու զարգացմանը, որ նոր էր սկսված հանձարեղ Կոմիտասի շնորհիվ:

Նույն թվականի հունիսին ևս թողի նոր նախիչնանը, և Ռոմանոսն ու ևս բաժանվեցինք իրարուց, արդեն որպես սըրտակից ընկերներ:

Այդ թվից այլևս Հանդիպեցի Ռոմանոսին, մինչև 1926 թիվը:

Արտասահման եղած ժամանակս մի-երկու նամակ ստացա Ռոմանոսից, որ հայտնում էր ինձ, թե ձեռնարկել էր իր ոտանավորներից մի քանիսի ձայնագրմանը, և ի՞նչ հաճությունն ու խորհուրդն էր հարցնում: Ես մեծ սիրով պատասխանեցի նրան:

Երբ 1926 թվին արտասահմանից վերադարձա Սովիտական Միություն, Ռոմանոսը նույնչափ սիրելի ընկեր արտիստ հսահակ Ալիխանյանի և ուրիշ ընկերների հետ դիմավորեց ինձ Թրիլիսիի կայարանում: Կարուով զրկեցինք իրար, անսահման ուրախ էի, որ վերստին իմ շատ սիրելի ընկերներին տեսա: Կարծես թե տարիներ չէին անցել, կարծես թե երեկ էինք բաժանվել միջյանցից և շարունակում էինք տարիներ առաջ ընդհատված խոսակցություններ:

Թրիլիսիում ամեն օր Ռոմանոսի հետ էի: Նա արդեն հասունացած արվեստագետ էր, սիրված և գնահատված: Սակայն նույն Ռոմանոսն էր, սքանչելի զրուցող, սրամիտ, խանդակառ:

Նա նվագեց ինձ համար իր «Ջրուփայա» երգերի շարքից իմ «Շափաղ կուտասը»: Ես հուզված և երախտագիտությամբ լցված՝ համբուրեցի նրան: Նա ճակատի վրա ընկած մազերը թափահարեց, ձեռքով վեր բարձրացրեց և տաց «հոկ ես որքան եմ դո՞», որ գու հավանեցիր»:

1927 թվին Ռոմանոսը երեանում էր, որպես երաժշտության ուսուցիչ կոնսերվատորիայում: Ծառ հաճախ, զրեթե ամեն օր միասին էինք լինում: Հանդուցյալ տաղանդագոր նկարիչ Փանոս Թերենելյանը նկարում էր մեզ: Ինքը՝ Փանոսը, շատ համով մարդ էր, զվարթ, զրուցաներ, կատակող: Ի՞նչ գեղեցիկ ժամեր ենք անցկացրել Փանոսի հարկի տակ:

Հայտնի է, որ Ռումանոսը աննո՞ւն առակ, անեկդոտ պատմող էր: Երբ մի նոր անեկդոտ լսեր, անմիջապես ինձ պիտի հաղորդեր: առանց զրան հանգստություն շուներ:

Մի ձմռան գիշեր, երբ ես քնած էի, սենյակիս դուռը ամուր ծեծեցին, վախեցած զարթնում եմ, լսում եմ Ռումանոսի ձայնը. «Բաց, բաց, հենց նոր մի հրաշալի անեկդոտ եմ լսել...»

Ես քնաթաթախ բանում եմ դուռը և թեթև կշտամբանքով ասում եմ. «Տո, տունդ չքանդվի, թիվիի՞ս ես բոնվել, ինչ է»:

«—Մի նեղանար, նոր եմ լսել, համբերել անկարող էի»: Հագնվում եմ մի կերպ. նայում եմ ժամացուցին, ժամը շուրջ անց է: Ռումանոսը հերթև պատմում է անեկդոտը. ծիծաղում ենք, անվերջ ծիծաղում:

—Ապրես, լավ արիր, եկար—ասում եմ ես: Ճառագայթում է Ռումանոսի գեմքը:

Թեյ ենք զնում, թեթև ընթրիք ենք սարքում: Ջրուց ենք անում, խոսում, կատակում: Ռումանոսը գիշերեց մոտս. պառկեցինք կողք-կողքի: Քնել էինք գրութե մինչև կեսօր:

Մի երեկո Ռումանոսը եկավ մոտս՝ ինձ տաճելու մեծատաղանդ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի մոտ, նրա ծննդյան տարեղարձն էր, որ ներկա պիտի լիներ նաև մեծանուն կոմպոզիտոր Ա. Սպենդիարովը:

Ի դեպ ասեմ, որ Ռումանոսին ես «Գոն» տիտղոսն էի տվել: «Գոն Ռումանոս», այդպես էի կոչում նրան թե՛ ըստ իր անվան, թե՛ ըստ իմ տպավորության՝ իսպանական ասողետական կոլորիտի և ոճի, շարժ ու կեցվածքի՝ նրա զարմանալի նույնության համար: Մեր ընկերներից մի քանիսը յուրացրին այդ կոչումը: Ասեմ նույնպես, որ Ռումանոսին շատ հաճելի էր այդ տիտղոսը: Այսպես, Գոն Ռումանոսի հետ գնացինք Թամանյանի տունը:

Անմոռանալի նվիրական երեկո էր դա, մանավանդ մեր կուլտուրայի այդ նշանավոր կոթողների ներկայությունը: Հաճելի էր տեսնել, թե Ռումանոսը ինչ ակնածանքով, ինչ

խորունկ հարգանքով էր վերաբերվում Ա. Սպենդիարովին, այնպես, ինչպես աշակերտը իր մեծ ուսուցչին. գրեթե շեր խոսում, այլ ուշադիր լսում էր մեծ վարպետին:

Մի օր մեր թանկագին Մարտիրոս Սարյանի տանն էինք. խոսում էինք մեր ազգային արվեստի մասին: Նկարչության, երաժշտության և բանաստեղծության նկատմամբ մեր հայտնած հայացքները համընկնում էին, համահնչուն ներդաշնակում էին իրար հետ: Եվ այս հոգեկան եղբայրությունը մեզ համար հավասարեցնելու մտքով գնացինք լուսանկարվեցինք միասին: Մարտիրոսը, Ռոմանոսը և ես՝ նրանց մեջտեղը:

Երբ 1930 թվին մեկնում էի արտասահման, Ռոմանոսը կայարանում ինձ ճանապարհ գցելիս համբուրեց և ասաց. «Ետատ չես մնա. սպասում ենք քեզ»:

Ավա՞զ, այդ վերջին տեսնեմ էր. երբ հայրենիք վերադարձա 1936 թվականին, սիրելի Ռոմանոսը շկար ընկերներիս մեջ:

Հապճեպ գրած այս հուշերս մի շնչին և անարժեք խոսք է, որ ես բերում եմ հավիտյան սիրելի Ռոմանոսի այս սգատոնին, բայց ես գրում եմ հուշեր մանրամասն և ընդարձակութեան անմոռաց սիրո մի սրտագին տուրք հայ երաժշտական աղքային կուլտուրայի փայլուն և տաղանդավոր երախտավորի՝ Ռոմանոս Մելիքյանի անմահ հիշատակին:

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ԵՐԳԻՉ ՇԵՐԱՄԻ ԱՆՄՈՒԱՅ ՀԻԾԱՏԱԿԻՆ

Ալեքսանդրապոլը (Լենինականը) աշուղների քաղաք էր համարվում: Ես իմ պատանեկության ժամանակ հաշվում էի երեսունի շափ աշուղներ և ժողովրդական երգիչներ (երգահաններ), որոնք անուն ունեին հայրենի քաղաքում և հայրենի քաղաքից դուրս: Այդ աշուղ-երգիչներից նշանավորներն էին՝ Թիվանին, Զամալին, Ֆիզային, Մալուկը, Պայծառը, Խայաթը և ուրիշներ:

Նրանք իրենց երգերով ու նվագով զարդարում էին ալեքսանդրապուղիների նշանագրերների և հարսանիքների հանդեսները, տոնական խնջուղբները և քեֆերը:

Աշուղ-երգիչների խմբակներն իրենց սրճարանն ունեին, ուր օրվա որոշ պահերին երգում էին ու նվագում: Կային նշանավոր սրճարաններ, ուր պարբերաբար հավաքվում էին տեղացի և գրասից եկած աշուղ-երգիչները՝ իրար հետ մրցելու, հետաքրքրվող հանդիսականների ներկայությամբ:

Այսպիսով, Ալեքսանդրում ստեղծվել էր մի ուրույն աշուղական մթնոլորտ իր ավանդություններով ու սովորություններով և տարբեր ուղղություններով:

Ալեքսանդրի աշուղ-երգիչներից ամենակրտսերը և ժամանակով մեզ ամենից մոտիկը աշուղ երգահան Գրիգորն էր, Տալյանը, երաժշտական հին ընտանիքից սերված, ալեքսանդրիների կողմից շատ և շատ զնահատված ու սիրված Ռուսա Գոքորը, հետագայում ամեն տեղ ծանոթ ու սիրված երգիչ

Շերամը: Ի գեալ, Շերամ անունը դրել է մեծանուն բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը:

Պատանի Գրիգոր Տալյանը մեծացավ աշուղական այդ մթնոլորտում, սովորեց Հին վարպետներից, յուրացրեց աշուղական արվեստը, աշուղական պոետիկան: Տակավին շատ երիտասարդ էր, որ նա անուն հանեց և նվաճեց հասարակության սերը:

Ալեքպոլցիների մոտ շատ մեծ էր երգիչ Շերամի հմագքը: Նա ուրախական հանդեսների փայլն էր ու գեղեցկությունը: Նրա թառի նվազը, նրա սրտազին ձայնը, իր ստեղծած սիրո երգերը՝ զեղուն խանդի, կարոտի, վշտի իր ստեղծած եղանակներով, խննիթացնում էին երազող պատանիներին, ոգեվորում էին սիրահարված երիտասարդներին և բանաստեղծական տիբությամբ համակում շատերին:

Երդիչ Շերամը վարպետ թառ նվազող էր, զգացմունքով երգող, ինքն իր նվազն ու երգն ապրում էր: Մրտաբուխ էր նրա արվեստը, և բոլորը ապրում էին այդ հովհեցկությունը:

Ալեքպոլցիները սրտատրուի սպասում էին նրա նոր հնարած երգին, որը երբեք չէր ուշանում, որովհետև Շերամի ստեղծագործ տաղանդը զարմանալի բեղմնավոր էր. ուղղակի անսպաս:

Խոկական ալեքպոլցու համար Շերամին հավասար ո՞չ ո՞ի աշուղ-երգիչ շկար: Եթե նա ուրիշ քաղաքներում՝ երևան, Թիֆլիս լիներ և լսեր անվանի երգիչ-աշուղներին, «ա՞խ» պիտի քաշեր Շերամի համար:

Հիշում եմ իմ ժամանակի երիտասարդներից լսածներա Շերամի մասին. «Մեռնելը ոչինչ, բայց Գոքորին շպիտի լը-սենք. ցավը էղ է...», «Գոքորին լսելը կյանք է, երջանկություն է», «Սիրա չունեցող մարդու մեջ կրակ կվառե Գոքորը»:

Ես զիտեմ, որ մինչեւ այսօր ապրող ծեր ալեքպոլցիների սրտի մեջ կենդանի է իրենց սիրելի նւտա Գոքորի քաղցր անունը, որովհետև նա է գեղեցկացրել և բանաստեղծացրել իրենց շահել օրերը:

Ուրախությամբ պիտի նշեմ, որ Հռկտեմբերյան հեղափոխությունից հետո էլ, սովետական մեր աշխարհում Շերամի հին երգերը ապրում են իր նոր երգերի հետ միասին։ Այժմ էլ բեմերից, ուղիոյից հնչում են սիրազեղ երգերը, այժմ էլ խնջույքներից անպակաս են նրա երգերը, որոնք, ինչպես հին օրերում, հուզում են մեր ժողովրդին, ուրախացնում, խանդավառում։

Թո՞ղ երկար ժամանակ, շա՞տ ու շա՞տ տարիներ զնշեն իմ սիրելի, վաղեմի բարեկամ, իմ երիտասարդության բնկեր աշուղ Գոբրոբի սրաւագին երգերը։

Թո՞ղ երբեք շմոռացվի նրա բնարը։

<ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՏԱՄԱՐՈՅՑԱԿԻ ԱՌԹԻՎ>

Հայ արվեստի գեկադայի օրերում Մոսկվայի բհժի վրա
մեծ Միության ժողովուրդների առաջ հանգիս պիտի զայ
երաժշտությունը՝ արվեստն ու երգը:

Հայ երաժշտության արմատները շատ հին են, ինչպես
նրա ստեղծող ժողովուրդը:

Հայ կլասիկ երաժշտությունը, որի մեծ մասով արտա-
ջայտվում է կրոնական երաժշտության մեջ՝ պատարագի և
արարողությունների՝ գալիս է հայկական հեթանոսական
շրջանից: Այդ երաժշտությունը բարձր գնահատման է արժա-
նացած ասիստական և հվառպական մասնագիտների կողմից:

Հայ աշխարհիկ երաժշտությունը, որի մասին գեռ մեր
պատմիշները V դարից սկսած վկայում են, ընդգրկում է հայ
ժողովրդի բովանդակ հոգեկան կյանքը: Հարուստ է և բազ-
մակողմանի այդ երաժշտությունը: Պարի և մահվան երգերը,
սիրո և հարսանեկան երգերը, աշխատանքի և ուղղմական
երգերը, պատարագները և էպիկական-պատմական երգերը:

Հայ ժողովրդական երաժշտությունը, բնականաբար,
ժամանակի ընթացքում կրել է մեր հարևան ժողովուրդների
երաժշտության ազդեցությունները՝ պարսիկների, արաբների,
Ադրբեյջանի:

Մեր ժողովրդական երգի առաջին մշակողը և հարմո-
նիզացնողը եղել է 1880-ական թվականներին Ք. Կարա-
Մուրզան, որը և գրել է ուսահայերի մեջ առաջին օպերան՝
«Շուշանը»: Նա մեր ժողովրդական երաժշտության տաղան-

դավոր պիոներն էր: Նրանից հետո եկան ուրիշ մշակողներ, սակայն այդ շարժման գլխավորողը եղավ Կոմիտասը (1900 թվականներին): Իրավամբ մեծատաղանդ և մինչեւ օրս անդեռազանցելի:

Նրա հավիտենական փառքը կայանում է այն բանի մեջ, որ նա գտավ հայկական մելոսը: Նորամուտ, օտար տարրերից զտեց, բյուրեղացրեց հայկական մելոսը, որով հայ մելոսը գրավում է իր ինքնուրուցն, պատվավոր տեղը համաշխարհային մելոսների մեջ:

Նորհրդային մեր մեծ գրողները՝ Վ. Բրյուսովը և Մ. Գորկին հայտնել են իրենց անվերապահ հիացմունքը մեր երաժշտության հանդեպ, և Գ. Բրանդեսն ու Ռոմեն Ռուլանը հայ ժողովրդին տվել են երգասեր ժողովրդի ախտղոսը: Մեծ Կոմիտասի գործի շարունակողները եղան մեր վազամեռ տաղանդավոր երաժիշտները՝ Ս. Մելիքյանը, Ռ. Մելիքյանը, Ազատ Մանուկյանը, Գ. Ղազարյանը և ուրիշներ: Անցնելով հայկական օպերաներին, պիտի ասենք, որ նա նոր երեսությ է հայկական իրականության մեջ, իր զարգացմամբ և կազմակերպությամբ, նա ամբողջապես պարտական է խորհրդային իրականությանը:

Այսօր մենք ունենք մեր ազգային օպերան: Մեր օպերան իր արիաների, մելոդիաների, պարտիտուրաների <սիստեմով> հիմնված է հայ ժողովրդական երաժշտության վրա: Սա այն ուղիղ ճանապարհն է, որ Կոմիտասի հանձարեղ լույսի տակ, բռնել են և հաջող ընթացել հոչակավոր երաժիշտներ Ս. Սպենդիարյանը, Արմեն Տիգրանյանը, Հարութիսիանյանը և Ար. Խաչատրյանը:

«Ալմաստ»-ի մեջ մեծագույն երաժիշտ Սպենդիարյանը հայ երաժշտությունը հասցրել է գեղարվեստական բարձր կատարելության: «Անուշ»-ի մեջ Ար. Տիգրանյանը մեռ ժողովրդի <1 անընթ> հյուսել է իր գեղեցիկ, սրտադին իդիլիան՝ այնքան հարազատ հայ ժողովրդին:

«Լուսաբացի» մեջ Հ. Ստեփանյանը, մեր ժողովրդական մելոսի վրա հյուսած՝ ստեղծել է իր շքնազ խմբացին երգերն ու արիաները:

«Երևանյան էալյուգների» մեջ Ա. Խաչատրյանը հայ ժողովրդի պայքարներից և մելոդիաներից վերստեղծել է էլեկտրիական և օպտիմիստիկան՝ իր շքեղ երգը, որ սրտաբուխ երգի ազատագրված հայ ժողովրդի ազատ Հայաստանը...

Մեր տաղանդավոր երաժիշտները իրենց գործերը հյուսել են հայ ժողովրդական մելոդիաներից՝ ենթարկելով դեղարվեստական մշակուման, նրացման և ստիլիզացման...

<Նրանք> կրացեն հանդիսականների առաջ գեղեցկության նոր աշխարհ՝ հայկական ժողովրդական մելոսն ու պարը...

ԴԵԿԱԴԱՅԻ ԶԱՐԴԵՐԻՑ ՄԵԿԸ

«Երշանկություն» բալետի երաժշտությունը գեղարվեստական մեծ հաճույք պատճառեց ինձ:

Երիտասարդ տաղանդավոր Արամ Խաչատրյանն իր գեղեցիկ սիմֆոնիայի մեջ համազրել է խորհրդային իրականության ողջ հերոսականությունը—սահմանապահ՝ մեր երիտասարդների արի անձնազոհությունը, կոլխոզնիկների խանդավառ աշխատանքը՝ բոլորը նվիրված մեր հայրենիքի մեծությանը, նրա վեհ նպատակներին:

Արամ Խաչատրյանի մուզիկան զուտ էտնոգրաֆիկ լուսանկար չէ, այլ նուրբ արվեստի միջով անցած սինթեզ է: Նրա հայկական ժողովրդական մելոդիաների, նույն պրիզմայի միջով են անցած ոռւսական ու ուկրաինական ժողովրդական մելոդիաները:

Հրաշալի կերպով մեր տաղանդավոր կոմպոզիտորը օգտագործել է մեր և մեր եղբայրական մեծ ժողովուրդների մելոսը՝ վսեմացնելով և համամարդկային դարձնելով:

Եվ բոլորի միջով գարնան զվարթ շնչի պես ծփում է կենսուրախությունը, օպտիմիզմը:

Այս բալետ-սիմֆոնիան խորհրդային բալետի նոր ձևի շատ հաջող ներդրումն է:

Յավով պիտի նշենք, որ պարերի գեղեցկությունը համընթաց չէ երաժշտությանը: Բայց հարսի և իր ընկերուհիների պարը սիմֆոնիկ է, իսկ հայկական պարերի մոտիվները հաջող ծաղկաքաղ արած, վսկեցացած, նրբացրած:

Մերերի պարը լավ է իրեն հումորով և զվարթությամբ:

Մեր գեկագայի զարդերից մեկն է կազմելու այս շքնառ բալետը:

1939

Դ. ՇՈՍՏԱԿՈՎԻՉԻ № 7 ՍԻՄՖՈՆԻԱՅԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԹԻՎ

Դիրիժոր Մ. Թավրիզյանի վարպետ ղեկավարությամբ
երեկ, ամսիս 11, երեանի հասարակությունը բախտ ունեցավ
լսելու Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիան: Հայ պետօպերան ու
ֆիլհարմոնիան իրենց պատմության էջերում պիտի նշեն այն
պատվավոր փաստը, որ Մոսկվայից և Կույրիշեկից հետո,
մեծ Միության մեջ, սիմֆոնիայի երրորդ կատարումը իրենց
վիճակվեց: Հայկական սովետական ռեսպուբլիկային վիճակ-
վեց ասիական գոների առաջ հանդիսավոր կերպով հնչեցնել
պատերազմի և հաղթանակի երգը. պատերազմի՝ ընդգետ
չարի և խաղարի, հաղթանակի՝ բռնության ու ստրկության
վրա:

Ի՞ն ուժերից վեր է այս բարդ, բազմակողմանի երաժեշտ-
ական գործը գնահատելը. դա հմուտ մասնագետների իրա-
վունքն է: Սակայն այն տպավորությունը, որ ևս ստացա-
սիմֆոնիան լսելուց, կարող եմ թույլ տալ ինձ ասելու, որ
մեծատաղանդ հեղինակը շատ շափերով, շատ տեղերում
հասել է իր ստեղծագործական նպատակին, ուրիշ խոսքով՝
ևս, ամեն մեկը առանց նախապես լսած լինելու սիմֆոնիայի
բովանդակության, կամ հեղինակի ծրագրի մասին, միայն
մուզիկական միջոցներով, նրա անորոշ, բառազուրկ հնչյուն-
ների միջոցով խսկուն ընկնում ենք երաժշտական մի հսկա
պոեմացի մեջ, որը պիրագախոս, ներգաշնակ լեզվով բացատ-
րում, պատմում է մեղ այն հույզերն ու ալեկոծումները,

վշատեցնող ու բմբոստացնող ապրումները, դայրույթի պոռթ-կումները և կռվելու տեսչը, հաղթանակի հավատը և անձնա-զո՞ւթյան պափոսը և այն բոլոր զգացմունքներն ու մտքերը, դադափարները, որ անցել են Հեղինակը և միլիոնավոր մար-տիկներն ու Հայրենասեր քաղաքացիները Հերոսական Լինին-դրադի էպիկական պաշտպանության օրերում արցունածարավ՝ աշխարհավեր վանդալների դեմ:

Այս երածշտական Հոյակապ պուհման՝ գրած երկաթի ու կրակի զարգուրելի տարերքի մեջ, աննման քաջության ու Հերոսական ինքնամոռացման օրերում, կարդացվում է մեծ Հուզմունքով, Հիացմունքով, ներքին սարսուսով:

Շոստակովիչի սիմֆոնիան Հայրենական պատերազմի, նրա հաղթանակի և մեծ Միության իդեալների հզոր երգն է: Նա ո՞չ միայն երածշտական նոր արվեստի կոթողներից է, այլև Հանդիսանում է մի փառավոր ներշնչող օրինակ մեր բոլոր արվեստագիտների համար, որ ձգտին ու աշխատեն մեր ներկա վեհաշունչ իրականությունը հավերժացնել ար-վեստի գործերի մեջ:

ԱՍՈՒՅԹՅԱՆԵՐ ԵՐԱԾԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդկային ստեղծագործություններից բոլորից բարձրը, սուրբը, վեհականը ու նվիրականը և միակը՝ երգն է, երգը, տիեզերքը երգ է:

* * *

Ամեն մի ուժ պոսթկալու, արտահայտվելու, դրսեորվելու հատկություն ունի. սիրմը հողի տակից, աղբյուրը ժայռի ծերպերից, երգը՝ Հոգու խորքից:

* * *

Ժողովրդական երգերը ժողովրդի Հոգու, կյանքի, ապրույների հայելին են:

* * *

Ժողովրդական երգերի մեջ՝ ժողովրդի սիրտն է. Նրա սիրտն է բարախում, արյունոտվում, և մեր սիրտը միաժամանակ:

* * *

Հայ ժողովրդի երգը գալիս է հնագույն անցյալից. որպես աղքային անգնահատելի, թանկագին ավանդ, այսօր էլ կհնգանի է և ապրում է ստեղծագործ կյանքով:

* * *

Արեհերի (պարսկական) երաժշտությունը տիսոր, թախծագին, խորունկ և վշտոտ՝ արդյունք է պատմության՝ կրած շարդերի, բռնապետության, մոնղոլական արյունահեղության, ցավագին տանչանքների՝ թանձրացած, կուտակված, դարերով դիզված ժայռածալ...

* * *

Երգի մեջ դրանորվում է մեր հողին:
Երգը ձայների ճարարապետությունն է:

* * *

Այս երգերը, պարերը, ոճերը, ծեսերը, առասպելները
բաղված են ժողովրդի հնմագիտակցության մեջ, և դրանցով
է մի երգ հարուստ, ուժեղ, հավերժող, անայլալ, անհա-
տական:

* * *

Այս երգերը, հին են շատ, ծնունդ են առել ցեղի, ազգի
նողում, որոնք իրեն հայելի են ծառայում, ուր ազգը տեսնում
է իր պատկերը և իրեն ճանաչում:

Հին երգերը վսիմ են և տխուր, որովհետև զալիս են
դարերի խորքից:

Այս երգերով ժողովուրդը հաղորդակից է լինում հոգով,
հին փառքի և զորության, անցյալի, սլատմության օրերի
հետ:


* * *

Կեցցե՛ այն ազգը, որ ունի զուսաններ, որոնք երգում են
և անմահացնում են քաջերին, և ազգի, հայրենիքի փառքը...
Ե՞լ, շա՞ն, մեր զուսանների երգերը հայոց գետերի պես բխում
են Բյուրակնի բյուր սրտերից և զնում աշխարհներ անցնում...

* * *

Մի քուրդ երգում էր Ազգը-զյուլում. երգի մեջ հնչում էին
բնանկարի ձայներ (սարերի, ձորերի, գետերի, հովերի, սե-
զերի), մանավանդ՝ ոչխարների, այծերի, զառների, ուլերի
ձայներ՝ մկնաց, բառաշ... Հոտի զանազան ձայներ, կիսա-
ձայներ, նուրբ...

Մի ժողովրդի տնաեսական կյանքը պայմանավորում է
նրա երաժշտությունը... օրինակ՝ պարսկական երգը ուզտերի
զանդերի, ոիթմիկ ընթացքի, զանդակների, բոժոժների...
ստեղծագործությունն է:



Ալ. Խաչատրյանի հ. Խորլովի արձանի մոտականի մաս, 1955:



Ավ. Իսահակյանը Զվարթնոցում, 1955:

* * *

Երգը, երաժշտությունը մի քաղցր տիսրություն ունի:

* * *

Բոլոր երգերից ամենատիեզերականը թաղման շարականն է:

* * *

Նվազում էր երաժիշտը. ևս լսում էի նրան և հոգուս մեջ երգում էի նրա հետ:

* * *

Ինչ որ շենք կարող իրականության մեջ ապրել, ուզում ենք ապրել երազի մեջ (Հեքիաթ, երգ, վեպ): Այդ տեսչը մեր կամքից անկախ է. եթե շապրենք գոնե երազի մեջ՝ կիսեղովենք, կմեռնենք:

* * *

Մուզիկը տանում է մեզ մի այլ, օտար, ուրիշ աշխարհ, բայց այդ մեր հոգու հայրենիքն է. Հազարավոր մղոններով նա հեռացնում է մեզ իրականից, շարից ու վշտից: Նա դարձնում է մարդու հոգին ինչ ուզում է:

* * *

«Փիլիսոփայությունը դիտությունների մուզիկն է», ըստ Պլատոնի:

Մուզիկն էլ արվեստների փիլիսոփայությունն է, ըստ Հակոբի:

* * *

Մուզիկան վշտի և բերկրանքի հրաշալի հյուսվածքն է:

* * *

Երաժշտությունը ձայների, հնչյունների միջոցով կառուցում է պալատներ, պարտեղներ, լեռներ. նա իր հնչեղ դույներով նկարում է անտառներ, գետեր, գլշակներ:

* * *

Մուզիկը մարդու դրդում է մտածողության... մտածել ու դաշտ, թափառել և մտածել, տանջվել և մտատանջվել...

* * *

իմ կրիտերիումը երաժշտության մեջ՝ իմ զգալն է, իմ
աղդվելն է, իմ ապրելն է...

* * *

Երաժշտություն լսելիս, հոգուս մեջ զարթնում են սիրած
ու մեռած դեմքեր, անուններ, դեպքեր... շարունակ՝ Ապլան,
Խաչակը, Գինովարեն, ընկերները... Նրանց խոսքերը, գե-
րեզմանները, հետդ են լինում նրանք միշտ, նայում են քեզ,
խոսում քեզ հետ...

* * *

Հայ ժողովքովզը ունի երկու երաժշտություն՝ եկեղեցա-
կան և աշխարհիկ. նրանք գալիս են հնագույն անցյալից,
ծագել են մեկը մյուսից և դարերի ընթացքում աղդել են
միմյանց վրա:

* * *

Օպերան պիտի լինի կամ հերփաթային կամ պատմական
այուժետով. իրական կյանքից առած նյութը անհարիր է ու
տգեղ, անպետք, անբանաստեղծական:

* * *

Շոպեհնը նկարները չեր տեսնում, այլ լսում էր: Գնաց
վիեննայի պատկերասրահը, և, ասում են, լսում էր նա
նկարներին:

* * *

Վագների մուզիկը լցրել էր ողջ հրապարակը իր հումկու
ձայնով, լցրել էր հոգիս և ողջ տիեզերքը, և կյանք էր տալիս,
ուժ էր թափում մեջու:

* * *

Բեթհովենն ասում էր՝ սիրուս համար կզոհեմ կյանքս,
հայրենիքիս համար սերու:

* * *

Սպինդիարյանի մուզիկան, «Արմաստը», հայի հոգին է
տիտոր:

* * *

Արամ Խաչատրյանը խորապես դդաց և բժիռնեց Հայ
ժողովրդի երգի ոպին և գրանով ոգեսորեց իր թարմ և գեղեցիկ
հրաժշտությունը. Նա Հայ երգը իր գեղարվեստական մեծ
տաղանդի պրիզմայով անցրած ներկայացրեց աշխարհին:

* * *

Կոտիկ Հարությունյանի կոնցերտը. բոլոր լսողները՝
զվարթ, ուրախ, մի ընտանիքի պիս...

ԿԵՐՊԱՐՎԵՍ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԸ
ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆՈՒՄՈՒՄ

Հայտնի է, որ երեսուն տարուց ի վեր Վենետիկում երկու տարին մի անգամ տեղի է ունենում միջազգային պատկերահանդես:

Մեծ ու փոքր ազգերից ումանք ունեն իրենց սեփական տաղավարը (pavillon) տոհմիկ ոճով կառուցված:

Այս տարի, ապրիլի վերջերին, իտալական թագավորի ներկայությամբ մեծ շուքով բացվեց 14-րդ պատկերահանդեսը:

Ռուսաստանը կար ՍՍՀՄ (Սոցիալիստական Սովետական Հանրապետությունների Միությունը) ուշացել էր, և միայն հունիսի վերջերին կատարվեցավ իր սեփական տաղավարում բացման հանդիսը, ներկայությամբ Միության՝ Հոռմիդ դեսպանի: Հայաստանի կողմից պաշտոնապես ներկա էր պ. Մարտիրոս Սարյանը:

Անշուշտ, շատ շահեկան կլիներ խոսել Ռուսաստանի արվեստի մասին, բայց ես բացառապես ամփոփվում եմ Հայկական արվեստի վրա:

Հայաստանի գեղարվեստը ներկայացված է 18 հատ նկարով. 1—Թագեռոյանից, 1—Թերլիմեզյանից, 9—Մ. Սարյանից, 2—ջրանկար Վ. Սուրենյանից, 1—Տարագրոսից, 2—Dessin Սարյանից, և 2 նկար Մ. Առաքելյանից:

Պ. Պ. Թագեռոյանը և Թերլիմեզյանը Հին, Հայտնի նկարիչներ են, ճանաչված ու սիրված տաղանդներ. առաջինը

ունի Արագածի պատկերը իր շքնաղ լանջերով՝ կատարված գրավիչ, փափուկ արվեստով, իսկ երկրորդը՝ իր կորած դրախտն է առարկայացրել՝ Վարագա լեռը, Վանա ծովակը, նույնքան գրավիչ կերպով:

Հանգուցյալ վ. Սուրենյանի ջրանկարներով Հայ գաղթականների տառապած, հոգսերով լի խմբերն են ներկայացված, անհունորեն բնական և հուզիչ:

Տարագրուինը՝ արևելյան գորգերի ճոխ մոտիվների մի զարդաշրանքար է:

Ամենից շատ ուշագրավ են պ. Մարտիրոս Մարյանի նկարները: Մոսկվայից եկած ոսւս ներկայացուցիչները կես-լուրջ, կես-կատակով ինձ ասացին, թե՛ ձեր հայրենակիցն է rekord-ն առնելու. և իրավ, բացման օրն իսկ հանդիսական-ներից շատերի ուշագրությունը կենտրոնացավ նրա նկարների վրա:

Պ. Մարյանը Ռուսիայում վազուց արդեն հոչակ ունեցող նկարիչ է. նա տակավին լեցուն է ստեղծագործական ուժով. նա հետաքրքրական անձնավորություն է, իր կյանքով ու արվեստով, որ սերտորեն դաշնակցված են իրար հետ, որ մի խորհուրդ ունեն—աղքային, ուրույն տոհմիկ արվեստի ու մշակույթի բարգավաճ գոյությունը:

Նրա տեսությամբ՝ գեղարվեստն իր բոլոր ճյուղերով՝ գերազանցորեն աղքային է, և որպես այդպիսին միայն իրավունք ունի ապրելու, ամեն ազգ իր ձեռով, ոճով, իր կերպով հոգեգրսնորում ունի, մարմնացում իր ապրումների ու մտածումների, իր տեսիլների և իրեն հատուկ՝ աշխարհապատճեռացում: Առանձին, ուրույն ոճ ու ձեւ չունեցող արվեստները՝ արդյունք դիմացուրկ աղքերի, սոսկ նմանողություններ են, անշահ կրկնություններ և զատապարտված մեռնելու:

Նկարիչ Մարյանը՝ գիտակցաբար ու բնազդաբար՝ գեղարվեստի այս ըմբռնումով մոտեցել է իր գործին, և տարիներ, միգ ու շանքով ուսումնասիրել է Հայաստանի և Արևելքի (նա շրջել է Եգիպտոս, Պարսկաստան) գույներն ու ձեռքրբ, և մասնավորապես մեր մանրանկարչությունը, դարե-

ըի այս թանկ ժառանգությունը... և այս նյութերից ստեղծել է իր արվեստը՝ միանգամայն զուտ հայկական, ոճավորված, տոհմիկ: Եվ այսպիսով նա գիտականորեն հիմք է գնում մեր նկարչական արվեստին կամ ավելի ուղիղը, վերապարթեցնում է ու զարգացնում հինը, որովհետև նրա այդ նոր արվեստի տարրերը ապրում են դարերի խորքում, ծլած ու ծաղկած մայր հողի վրա:

Եվ հարազատ, հինավորց տարրերով սնված Սարյանի արվեստը, իր զարոցով, այսուհետև ավելի պիտի ուռանանա հայկական հայրենիքում և պիտի կազմի իր իրական փառքերից մեկը:

Սաացի, որ Մ. Սարյանի կյանքն ու արվեստը սերտուրեն շաղկապված են իրար հետ, և ուրիշ կերպ չեր կարող լինել. իսկական արվեստը իսկական արվեստագետի հոգու առարկայացումն է, նրա սիմբոլ-պատկերը:

Երբ նայում եք նրա նկարներին, մի անհուն սիրով ու կարոտով լցվում է ձեր հոգին գեափի հայ աշխարհը՝ «արևի տակ պարզված հերիաթ», մի խորին քնարերգություն, իր շքնազ լեռներով ու գետերով, արտերով ու եղնիկներով, պաշտելի հայ զյուղացիով և իր նվիրական գութանով... Եվ մտածում եք. ինչքա՞ն է սիրում հեղինակը այս երկիրն ու նրա հերկողին, ինչքա՞ն շատ, որ նույն բուխ զգացումով վարակում է ձեզ: Եվ երբ մոտենում եք նրան, ծանոթանում եք նրա զդացումների ու մտքերի հետ, զուք տեսնում եք, որ իրավ, այդ նկարները նրա հոգուց են զուրս բխել, այդ նկարների նախատիպերը, Հայաստանը, զուրգուրված, սիրված են նրա հոգում այնքան կաթողին, այնքան գեղեցիկ:

Եվ զարմանում եք, թե ի՞նչ հրաշքով, ի՞նչ անհայտ խորհրդով նոր նախիշեանից, ոուսական համայնակուլ օվկիանոսի միջից, ծագում են երբեմն Միքայել նալբանդյանի, Գամառ-Քաթիպայի և Սարյանի նման հայեր <...>:

Նկարիչ Սարյանը արվեստով ու կյանքով նվիրված է Հայաստանի վերածնունդին ու վերաշինուանը, դարերի աղետների մեջ փշրված մեր ժողովրդի ազգայնացմանն ու հայաց-

ՍԱՐՅԱՆԸ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՌՀԻՆՆ Է

Տասնյակ տարիներ Հայաստանից հեռու լինելով ևս շատ կարուցքել էի Հայրենական սիրելի, հարազատ պեյզաժներին, սարին ու ձորին, գետերին ու դաշտերին, ժողովրդի կենցաղին պատկերներին:

Եվ շատ մեծ եղավ ուրախությունս, երբ, 1924 թ., Մարտիրոս Սարյանը եկավ Վենետիկ՝ միջազգային նկարչական ցուցահանդեսին մասնակցելու:

Մ. Սարյանի անունը լսել էի, բայց նրա վրձնի ոչ մի արտադրանքը տակավին չէի տեսել:

Սովետական պավիլիոնում ևս նայում էի Մ. Սարյանի նկարներին, անհամբեր, մի նկարից մյուսին էի շտապում, նայում Հափշտակված, ինքնամուռաց, երշանկացած—իմ աշքերի առջև կարուտած Հայաստանն է՝ բանաստեղծորեն իրականացած։ Ահա՝ Հայրենիքի կապուց երկինքը, լուսառատ մթնոլորտը, ահա՝ վեհապանն Մասիսը իր կորյունի հետ, առյուծի պես նստած, գլուխը երկնքում, սպիտակ բաշերով։ Ահա՝ Հայաստանի դաշտերը, ցորենի ոսկեցող արտերը, որ ծփում են, փայլուն գետերը, որ կարկաչում են, ճամբաների և գրերին կանգնած բարձրուղեց բարդիները, ահա՝ խաղողի ողկուցները, մրգերը, վարդերը, երփներանդ ծաղիկներ, շըքնաղ ծաղիկներ, որոնց բույրն առնում ես, իրապես առնում ես. իսկ ժայռի կատարից նայող եղնիկը, նազելի եղնիկը՝ զոհար աշքերով, ապա նախաժամանակներից եկած խորհրդավոր գոմեցը, որի հնամենի ձայնը կարուով ուզում ես լսել, և այս բոլորը մեծատաղանդ նկարչի կախարդ վրձինով շունչ առած, կյանք ու ոգի առած։

Մ. Սարյանի արվեստը լավատես է, կենսուրախ, գարնա-

Նային թարմությամբ թաթախուն։ Կյանքի սեր է զարթեցնում մեր մեջ նա, ապրեցնող է, բերկրանք հորդող։ Սրեաբուխ է նրա արվեստը, նրա վրձինը հյուաված է արևի ճառագայթ-ներից, ալելին՝ արևը ինքն է իր բոլոր արտահայտություններով նրա նկարների մեջ, արևը, որ գույն է ու երանդ, որ շերմություն է ու լույս, որոնցով կառուցված են նրա գործերը։

Ես պավիլիոնում կանգնել էի Մ. Սարյանի նկարների մոտ, ուզում էի լսել այցելողների կարծիքները, նրանց ապավորությունների արտահայտությունները։ Ես խոսում էի ինքս ինձ հետ։ «Սարյանը Հայաստանի պեցլամեների, բնության, վառ երանգների երգիշն է, արդյոր ի՞նչ են զգալու օտարները»։ Ես հուզված էի և անվերջ կրկնում էի մտքիս մեջ՝ «Հայաստանի երգիշն է, Հայաստանի երգիշն է...»։ Աշա մոտենում է երկու տիկինների հետ՝ Վեհնետիկում բնակվող գերմանացի անվանի նկարիչ Զիմելը։ Կանգնեց Սարյանի նկարների առջև։ «Ա՛յ, սա հետաքրքիր է, հետաքրքիր գործեր են, թարմ է, նոր զեղեցկություն է ինձ համար, որույն կուրրիտ ունի. տիսնես ի՞նչ երկրից է...»։ Ես մղեցի դեպի նա: «Արմենիա»—ասացի ես ներքին հպարտությամբ։

«Չե՞ր գործերն են», — Հարցրեց տիկիններից մեկը։

«Ո՛չ, իմ ընկերոցն է՝ Մարտիրոս Սարյան», — պատասխանեցի ես։

Նկարիչ Զիմելը մի անգամ էլ նայեց նկարներին և դարձավ ինձ, ժպտալով։ «Ես սիրեցի ձեր Սրբինիան»։

Մ. Սարյանի գործերը մեր նկարչական արվեստի հազարակն են, մեր կուլտուրայի անթառամ զարգերը։ Բայց որ զլիսավորն է, Սարյանը ազգային կոլորիտի նկարիչ է։ Երա արվեստի արժանակաները սուզվում են մեր հին արվեստի մեջ։ Սակայն երբ օտարը հիանում է մի ուրիշ ժողովրդի արվեստով, հասկանում է, գնահատում—սիրում, ապա այդ արվեստը անվիճելիորեն զառնում է Համամարդկային, բոլորի սեփականությունը։ Եվ ճշմարիտ ուղին սա է՝ ազգային արվեստի միջով դեպի համամարդկայինը։ Մարտիրոս Սարյանի արվեստը բովանդակ աշխարհինն է, սիրելի է բոլորին։

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Նա խոշոր նկարիչ է, մեծ նկարիչ, իսկատիւլ: Եվ ոճ ունեցող: Նրա վրձինը միակ ի վիճակի է ներկայացնել Հայաստանը, երկրի հոգին, այն անդորր, վեհ, վսի՞ բիրլիական երկիրը:

Նրա շնորհիվ միայն զգում ես մեր աստվածաշնչային երկիրը, աստվածաշնչային լեռներ, դաշտորայք, բույսերը, աղբյուրները, եղները և գոմեշները, ոչխարները, մարդիկ և հովիվները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՅԶԱՅԱԾ

Սա է Հայկական դաշտանկարը կամ բնանկարը.—Դաշտահովիտ, գետակ, բարձր լեռներ, ճերմակ և կապույտ ժայռեր, լեռնալանջին՝ վանք, մատուռ...

Դաշտում—գյուղ, ծխի ոլոր, գոմեշներ, եղներ, ոչխար, արոր... գեղջուկներ...

Պայծառ երկինք, վառ արև. իսկ ձմեռը—արև, կապույտ երկինք և ճերմակ դաշտեր ու լեռներ...

Մ. Սարյանը շատ լավ է տվել Հայաստանի առառաջին պեյզաժը... դաշտանկարը:

* * *

Երբ լինում ես մի ուրիշ երկիր, լավ գրելու, ըմբռնելու համար, պիտի զգաս նրան, ո՞ի տեսակ երկրազգացում: Հու-

նաստանը, Հեղլաղան զգալ, ապրել նրան։ Օրինակ, Մ. Սարյանն զգում է Հայաստանը և տվել է ապրած, զգացած պետքածներ։ Նույնը արել է և՛ Եղիշե Թադեոսյանը։ Ճարտարապետ Թադեանյանը զգացել է Հայ արխիտեկտուրան և կերտել կառավարչական տունը։ Հայրենազգացում...

Մ. Սարյանի նկարների մեջ կենտրոնացած է Հայաստան-նի պատկերը, համադրված է, հանդունակված։

* * *

Ինչքան էլ մարդ տիսուր լինի, եթե նայի Մարտիրոս Սարյանի նկարներին, նրա վառվուն գույներին՝ կուրախանա-

ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՉԱՐՅԱՆ


Մեծատաղանդ նկարիչ Գևորգ Բաշինջաղյանին ես այնքան մոտիկ չեմ եղել, բայց շատ անդամ հանդիպել եմ նրան հասարակական ժողովներում, զանազան ընտանիքներում և մի երկու անդամ էլ իրեն մոտ:

Առաջին անդամ ես նրան տեսա 1896 թվին «Տարագ-Աղբյուր»-ի խմբագրատանը: Ինձ իրեն մի երիտասարդ բանաստեղծի, ներկայացրին նրան, անոնս չեր լսել: Սակայն Ցետաքրքրվեց և ասաց. «Թէիրևս կարդացած կլինիոն Զեր բանաստեղծությունները, բայց սրանից հետո հատկապես ուշադիր կլինիմ»: Այդ ժամանակ նա արդեն հոչակ վայելող նկարիչ էր, բարձր գնահատանքի էին արժանացած նրա պեյզաժները, օրինակի համար «Զյունահալքը», «Յարասիների անտառը», «Լեռնականները»...


Մեր սերունդը հիացած էր նրա ստեղծագործություններով, և բաց չեինք թողնում նրա ցուցահանդեսները:

Ինձ վրա շատ հմայիչ տպագորություն թողեց նա: Իր պեյզաժների խաղաղ, անդորր բանաստեղծությունը նրա դիմքի վրա էր: Մեզմ կանաչի և կապույտին տվող ծովի գույն աշքեր, գրավիչ ձայն, կիրթ շարժ ու ձևեր:

Հետագա տարիներում մի բանի անդամ պատահել եմ նրան Հովհ. Թումանյանի տանը: Հիացած լսում էի նրա ձանապարհորդությունների պատմությունները: Ուր չեր եղել նա — եվրոպա, Ռուսաստան... մանավանդ շատ լավ ճանաչում էր նա իտալիան, Փարիզը: Գրեթե անգիր գիտեր Հռոմի, Ֆլո-



Աղ. Խոսհակյանը Արամ Խնձրկյանի հետ՝ Վարպետի արգում, 1956:



Ուժ. Խոսկալյանը՝ պ. Համբարձումյանի, ԱՌ. Մարգարյանի, Պ. Գևորգյանի շնոր

րենցիայի, Վենետիկի, Լուվրի թանգարանների գեղարվեստական սքանչելիքները:

Նա, ուղղակի, նկարում էր խոսքերով իր տեսածները: Հիշում եմ Զանգեզուրի և Ղարաբաղի նրա նկարագրությունները—ինձ թվում էր, թե իս շոշափելի տեսնում եմ նրա շրջադաշտ վայրերը, այն տեղերի երկնքի ամպերի գույներն ու երանգները, նրանց անհեթեթ և շրեղ ձևերը. զգում էր ժայռերը, դաշտերը, ջողը:

Նա, ինչպես հայտնի է, գրում էր պատմվածքներ, տպավորություններ, հուշեր, որոնք գրված նկարներ էին, սակայն իր կենդանի խոսքը շատ և շատ ավելի առինքնող էր:

1903 թև 1904 թվին ես հանգիպեցի նրան Անի քաղաքում (Ես գրեթե ամեն տարի Անի էի զնում, զրա համար որոշ չիմ հիշում տարին): Դժբախտաբար, իմ հասած օրը նա մեկնեց, արդեն մի քանի օր էր նա այնտեղ էր, և էտյուդներ էր արել: Ճարտարապետ Թորոս Ռորամանյանի և դերասան, Անիի սիրահար, լուսանկարիչ Վրույրի մոտ ճաշի հյուր եղանք միասին:

Ի՞նչ անխառն ոգևորությամբ, հիացմունքով, գիտակից հպարտությամբ խոսում էր նա Անիի շքնաղ ճարտարապետության մասին, քանդակների մասին, ինչպիսի՞ ճմտությամբ վեր էր հանում հայկական մոտիվները և ներբռողում:

Տեսնում էի՞ ինչքան խորունկ հայրենասիրություն կարայդ մարդու մեջ: Ես ճանապարհ գրի նրան Անիի պարիսպներից շատ ավելի հեռու, մինչև Հովհի եկեղեցին: Անի վերադարձիս խոսում էի ինքս ինձ հետ նրա մասին. «Ահա կարգին մարդ՝ արվեստագետ, գրականություն սիրող, հայրենասեր...»

Երբեք շեմ մոռանում մի զգարձալի զիպք: 1908 թվի ուշ աշնանը, գրականության նահապետ Ղազարոս Աղայանը Հովհանք. Թումանյանին և ինձ ասաց, թե՝ հինգշաբթի օրը Գեորգի մոտ ճաշի ենք կանչված. Գեորգին ասաց, թե՝ «Ղազարոս, տղաներին առ արի, մի քիչ ժամանակ անցկացնենք»:

Տղաները՝ Հովհանք. Թումանյանն էր, Կոմիտասը, Վրթանես Փափազյանը և ես:

Հինգշաբթի օրը հավաքվեցինք ժամադրավայր սրճարանում և գնացինք Գ. Բաշինչաղյանի տունը: Զանգը ավինք, դուռը բացեց Բաշինչաղյանի տիկինը, բաղցր ժպիտով մեղքնդունեց և առաջնորդեց նկարչի արվեստանոցը, որ միաժամանակ իր նկարների սրահն էր:

—Գեորգը տանը չէ՞,—հարցրեց Աղայանը:

—Ոչ, տանը չէ, հիմա կզա, խնդրեմ մի քիչ սպասեցեք...

Տիկնոց սիրալիբության տակ ես զգացի մի ինչ-որ շփոթմունք, վարանում:

Ընդարձակ, լուսավոր սրահում մենք սկսեցինք դիտել նրա նկարները, իրար ցուց էինք տալիս այս կամ այն նկարը, հիմնում էինք, հրձվում: Այսպես անցավ մի ժամ, թերևս ավելի:

Աղայանը դիմեց ինձ... «Եթ մարդն ու՞ր մնաց, ես էլ քաղցած եմ շատ... ձեն-ձուն չի լսվում: Այ տղա, միջանցքը զնա, մի կիրապ նայիր էս ու էն կողմը, մարդ կա՝, չկա՞...»:

Ես մտա միջանցքը, ականջ եմ դնում դոներին՝ ձայն չկա, շարժում չկա. զգուշությամբ բաց եմ անում խոհանոցի դուռը —մարդ չկա, և ոչ միայն մարդ չկա, պլիտան էլ լուս է, կրակ չկա. բացարձակ ամայություն տան մեջ:

Եկա, հայտնեցի...

Աղայանը զայրացավ.—«Տո, էս ի՞նչ օյին է»...

Թումանյանը իր հումորով կպավ Աղայանի օձիքից.

—Այ մարդ, հենց որ լավ ճաշի անուն ես լսում, գլուխող կորցնում ես, բա մարդ լավ չի իմանում, թե՛ ճաշի՞ հնք կանչված, թե՛ շայի:

—Այ գիծ, —գոռուսի է Աղայանը, —ի՞նչ է՝ հայերին չեմ հասկանու՞մ, խո փիլիսոփայություն չեր կարգում էզ մարդը... ասաց թե՛ հինգշաբթի...

Մենք ծիծաղներս զսպած՝ զիտում էինք նրանց կոփլը՝ թումանյանի կողմից կատակով, Աղայանի կողմից լուրջ, երբ հանկարծ դուռը արագորեն բացվելով՝ բարկացած ներս մտավ Բաշինչաղյանը և ուզզակի հարձակվեց Աղայանի վրա.

—Մարդ Քրիստոսի, ես քեզ ի՞նչ ասի...

— Դու ասիր, թե՞ Հինգշաբթի տղաներին առ...

— Հա է, հա, բայց ես ասի թե՞ էս Հինգշաբթի չէ, մյուս Հինգշաբթի. էս Հինգշաբթի ես ինքս Հյուր եմ ուրիշի մոտ, էղ ասի:

— Դե՛մ, էղպես կասեիր էլի՛, ի՞նչ ես ինձ սարսադի տեղ դնում...

— Արի էս մարդուն խոսք հասկացրու, — ձեռքերը հուսահատ վար թողեց նկարից:

Վերջապես մենք միշտամեցինք և երկու մեր շատ սիրելի բարեկամներին հանգստացրինք:

Բաշինչաղյանը իրեն վերստին զտավ, քաղցրությամբ և ժամանակ պատճեց, որ հենց մենք տուն ենք մանում, տիկինն իսկուն խոհարարութուն ճամփում է այն տունը, որը Գեորգը Հյուր էր, հայտնելու, թե՞ եկել են Հյուրերը, ինքն էլ զնում է խանութները զնումներ անելու:

Բաշինչաղյանին Հյուրասիրող ընտանիքը ինչ ունեն չունեն, իրենց սեղանից վերցնում են, Բաշինչաղյանի հետ ճանապարհ զնում, մինչ այդ, տիկինը բերում է և իր զնումները:

Մի խոսքով բավական ուշ սեղան նստեցինք և շատ ուրախ ճաշասեղան ունեցանք, մինչև ուշ գիշեր խոսք ու զրոյց, կատակ ու ծիծաղ: Կոմիտասն էլ երգեց ու նվագեց:

Այդ անմոռանալի օրը Վ. Փափազյանը Հավերժացրեց՝ լուսանկարելով մեր խոսքը գեղեցիկ պատկերասրահում: Այդ նկարը իր ժամանակին լուս տեսավ Գարեգին Լեռնյանի «Գեղարվեստ» հանդեսի մեջ:

Այդ օրից հետո ուրիշ ոչ մի ցայտուն բան չեմ Հիշում նրա հետ կապված: 1926 թվին, երբ վերադարձա արտասահմանից, մի օր զնացի այցելեցի մեծանուն նկարչի և սիրելի բարեկամիս շիրիմը Թիֆլիսի և Գեորգ եկեղեցու պատի տակ՝ մեծ Սայաթ-Նովայի շիրիմի մոտ:

ԽՈՀ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՋԱԿԱՆԻ ՄՈՏ

Այցի ենք գնում Խ. Աբովյանի արձանին: Հրազդան գետի ձախ ափին, բարձրում, մանկական երկաթուղու մոտ, ծաղկավառ մարգերի մեջ կանգնած է մեր մեծագույն բանաստեղծի արձանը: Գործ վաղամեռ արվեստագետ Անդրեաս Տեր-Մարուբյանի: Ես հին ծանոթ էի հեղինակի հետ երեվանից, Ֆրանսիացից: Աբովյանի արձանը կանգնեցնելու կոմիտեն հանձնարարել էր արձանագործ Տեր-Մարուբյանին իրականացնելու այդ: Առաջին իմացերի այստական պատերազմը վրա հասավ, արձանի գործը հետաձգվեց, հետազայում էլ գրեթե մոռացվեց: Այդ միջոցին Ա. Տեր-Մարուբյանը վախճանվեց և զործը մնաց անտեր, իսկ արձանը՝ Փարիզի ո՞ի ձուլարանում ընկած: Ես 1920 թվի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Փարիզում էի: Լսեցինք, որ ձուլարանի տերը հայտնել է ինչ-որ հայերի, թե արձանի ձուլման ծախսերի հատուցումը լրիվ չի ստացել հանգույցալ Տեր-Մարուբյանից, և եթե հայերն ուզում են ստանալ արձանը, պետք է վճարեն մնացած պարտքը, հակառակ դեպքում, նա իրավունք ունի արձանը վերաձուլելու այլ նպատակների համար:

Չեմ հիշում՝ ինչպես եղավ, Կովկասից եկած մի բժիշկ տեր կանգնեց արձանին, մի քանի մտավորականների հետ դրամ՝ հավաքեց հայկական շրջաններից, պարտքը վճարեց ձուլարանի տիրոջը՝ ֆրանսիացուն, և արձանը փրկեց կոռուստից:

Գնացինք ձուլարան արձանը տեսնելու. անմոռանալի պահ էր. Հավետ անմոռանալի: Հայրենիքից դուրս, օտար ափերում, կարոտալից աշքերով հանդիպեցինք Հայ հանճարեղ գրողին, մեծ սիրտ կրողին... Հուզված նայում ենք համեստ շափերով կերտված այս արձանին, որն առաջին անգամն է մեր պատմության մեջ որևէ Հայ զրողի համար իրականացած: Անդրանիկ արձանը: Աբովյանի ոգին, սիրող, վերքն ու վիշտը մեծ տաղանդով և զգացմունքով մարմնացած: Ոգեշնչված գործ: Ներշնչված գործ: Գլխարկներս հանեցինք և խորին սիրով ու երախտագիտությամբ ոգեկոչեցինք տաղանդավորքանդագործ Ա. Տեր-Մարուքյանին, որի անունը այլևս մը-նալու է Հայ ժողովրդի սրտում...

ՀՄՈՆՅԱ, ԼԻԶԱ, ԶՈԿՈՆԴԱՆԱ.՝

Նախաստեղծ բնության մեջ Բասալդյան երկաթացին ժայռերի ետևը նստել է չքնաղ վճուկը, գյութական որողայթող ժպիտով:

Ամենագետ ունայնությունն է քնքուց ժպւակել գեղեցիկ շրթունքների անկյուններում և կախարդիչ աշքերի մեջ, իմաստության իմաստությունը, աշխարհի խորհրդավոր, որ հավերժ կա և չկա. ինչպես ինքը՝ աշխարհը:

Նա ինքը բնության ոգին է, որ ժպտում է բոլոր զոյությունների, էությունների ունայնության վրա:

Կինն է նրա արդյունքը. Հինավուց սփինքսը, ինքը կեռնարդո գա վինչին:

Անծայրածիր տիեզերքը, որ ամենը մի ճիշ է, հրաշք և ամեն մի հյուկ ինքնին մի տիեզերք է և խորհրդավոր հանգուց այդ տիեզերքը, ունայնությունը, որ հավերժ քանում է, լուծում և նորից հյուսածը ստեղծում, —անհամար իմաստություններ՝ շունենալով և ոչ մի իմաստ:

Լեզնդի ոգին է անդրադասած Մ. Լիզայի աշքերի մեջ, ինչպես արևը օվկիանոսի մեջ: Անդունդ է, որի խորքը ոչ մի հոգի չի կարող նայել, կախարդական ոճն է, որ քաշում է գեպի իրեն բոլոր թոշող հոգիները՝ կլանելու, չէացնելու համար:

Լեռնարդոն ետ տարավ սկ վարագույրը և արձանացավի իր ստեղծագործության առաջ...

« Ժապտում է նազելի Մոննան, նա չի մեռել. նա նստել է աստվածային ձեռքերը իրար վրա խաշաձևած, ժպտում է խորհրդավոր, տարածությունը անհայտանում է, նրա թիկունքի և տեսք հինավորց ժայռերը աղոտանում են և բացվում է ներքեւ հրապուրիլ անդունզը, որը թափված են բնության գաղանիքները, գահավեժ աստվածը հագնել է իր հանճարից շինած թռչող թերերը, ահա զրկում է Մոննային իր կրծքին, որի վրա ոչ մի ծին զլուխը գեռ չի գրել. թափահարում է ալեխառն զլուխը, շարժում թերերը, թռչում է նա անդունդի վրա, աստղերի և արեների մեջ, ժամանակից ու տարածությունից այն կողմն է թեակոփում... Գրկում ժպտում է Մոննան... և ուզում է համբուրել, առաջին կինը, որին ձգում է համբուրել և ձգում է շրթներն ու մոտենում է Մոննային աղերսող, ծարավի շրթներով... Բայց խորտակվում են հանկարծ իր թերերը, փշրվում է զեկը և զիսիվայր ընկնում է անդունդի մեջ, հինավորց բազաւտե ժայռերի վրա չախշաված»:

Աշքերը նսենացած, խավար, բռնում է:

Մոննայի երեսի վրա իշել է սև ծածկոցը պատանքի մեխ:

Եվ գահավեժ աստվածը հոգնած, խորտակված, ընկել է իր ստեղծած նկարի առջև, աշքերը ունացնության սառը սարսափով լի և սրտի խորքում լաց է լինում:

Նա սիրում է կիզային, ինչպես քույր և ընկեր:

Մոննան իր հոգին տվեց նկարին, իր որվականին, ստվերին և մեռավ: Նա տեսավ, որ կեռնարդոն նկարն ավելի է սիրում, քան իրականը, երազը ավելի, քան իսկականը:

Կեռնարդոյի համար սեռական կյանքը՝ ամուսնության մեջ թի դուրսը, մարմնի սիրելը մեղք չէր ներկայացնում (հանցանք), այլ գոհհիկ, կոպիտ:

Մոննայի ժպիտը ամենագետի անտարբեր ժպիտ է:

Մոննա կիզան 30 պարեկան էր, կեռնարդոն 50 տարեկան, երբ սկսեց նկարիլ նրան և երեք տարի նկարում էր ու կիսատ թողեց:

Արվեստագիտը իր ստեղծածի մեջ տեղափոխում է որպէս հոգին և շատ անգամ իր դեմքը, բայց միշտ՝ իր հոգիկան պատկերը:

Դա Վինչիի աշքերի արտահայտությունը և ժպիտը նուան է եղել իր նկարած պատկերի Մոննա Լիզային: Կամ նրա աշքերն ու ժպիտը իրենն են: Երկու երկվորյակներ են նըրանք, մի պատկեր երկու տարբեր սկզբունքների մեջ՝ արու և էդ:

Լեռնարդոն Ֆառւստի տիպն է, կհնդանի Ֆառւստ:

ԱՍՈՒՅԹՅԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ՄԱՍԻՆ

Նկարչությունը թանձրացած, նյութացած, մարմնացած բանաստեղծություն է, իսկ բանաստեղծությունը՝ վերացական, ոգիացած նկարչություն:

* * *

Նկարիչները սիրում են ծերերի դեմքերը նկարել, կայ ապրած, տարիքավոր մարդկանց (50—60 տարեկան), որովհետև նրանց գերեզմանը հարուստ են տպավորությունների խտացումով, անցյալ ունեն, պատմություն ունեն: Անեն մի խորշը, կնճիռը, ծալքը, բաներ, ապրումներ կմատնեն:

* * *

Նկարիչը, ինչպես և բանաստեղծը, պիտի կարողանա կարդալ բնությունը—սար, ձոր, քար, դաշտ, ծառ, ամպ, աստղ և լուսնունը կարդալ:

* * *

Երբ տեսնում ես շքնաղ մի նկար (պեյզաժ), ինչպես Զ. Սեբաստինի ալպյան տեսարանները, Հոյակապ լեռներով, կանաչ զաշտերով ու վճիտ ազբյուրներով, ուզում ես այնտեղ լինել, թարմանում ես, չահելանում, ուզում ես թեղ ձգել մի սիրուն աղջիկ և թափառել նրա հետ, Հովհն ու զովին հանձնված, թափառես, և մի ժայռի տակ օչախ վառես, պարզ կերակուր շինես, մի տաք թեյ...

Ահա երջանկությունը... Պարզ է, Հոյակապ: Այս է գեղարվեստի ուժը. նա ապրեցնում է քեզ, Հուզում, ազդում, զայցնում, ոգեսրում:

* * *

Փոքրիկ մատուռում Միք. Անջելոյի Մովսեսը զահակաւ-
լում է Հավիտենականության համար. ով որ մտնում է այդ
մատուռը, լուսմ է, որովհետեւ միուած Վարպետի ձայնը
իրեն լսել է տալիս: Բոլորը լուս են, լսողությունները լարած,
կարծես՝ ուղում են լսել...

* * *

Primière matiere—Նախանյութ, ստեղծագործական-
արարշական նախանյութը, զգայականը, անդիտակցականը
զորեղ է... բանաստեղծի, նկարչի մեջ:

* * *

Ես նայում էի նկարների՝ պեյզաժների—լեռներ, ծովեր,
երկինք, անտառ, այնքան կենդանի, ճշմարիտ են նկարված,
որ ես զգում իմ ծովը, ջուրը, օդը, երկինքը, հողը...

* * *

Ծովը, անտառը, զաշտը, լեռները շքեղ կոմպոզիցիա
են կազմում նկարչության մեջ, վեպի մեջ, պոեմի մեջ: Հրա-
շալի պեյզաժ:

* * *

Նկարիչը, արձանագործը շինեց այս արձանը այնպես,
ինչպես անձը ազգել էր նրա վրա՝ իր տպավորությունը:

* * *

Մասիսն է մեր շափը, կադապարը. նրան տեսնելով,
պիտի կերտենք նրա նման մեծ կոթողներ, մեծ զործեր,
արվեստի մեծ գործեր՝ մեծ վեպ, մեծ կոմպոզիցիա, մեծ
քանդակներ, արձաններ, նկարներ:

* * *

Նկարչությունը, գրականությունը, արձան <ազործություն>
նը, արվեստը, պիտի մեր հղացումները, երազները, տեն-
չերը, վշտերը, մեր կյանքը իրականացնեն, կենդանի դարձ-
նեն, կյանքու, բոլորովին իրական:

Ծառերը իրականացնել—իրական ծառեր տալ. շրերը,
թռչունները... ո՛չ թե ոսմանտիկ, մտածին նկարներ, ար-
ձաններ, գրվածքներ:

Վենետիկի ցուցահանդեսում մի քանդակագործ իր մեծած կրոնավոր եղբորն էր քանդակել, մեռած, դիակնացած. այնքա՞ն բնական էր, իրական, ճշմարիտ, որ ացցելողները վախենում էին, և վարչությունը հանեց, տարավ:

Ինչքա՞ն իրական էր այն աղջկա նկարը սալոնի մեջ (1934 թ.), որ շապիկը ձեռքով վեր էր բարձրացրել. այդ ձեռքը, այդ ժեստը իրական գրգիռ էր ապրեցնում տեսնողին, այնինչ բացարձակ մերկություններ կային, որ ոչ մի ազգեցություն չէին անում:

* * *

Նավաստիները իրենց ձեռքերի, դաստակների, կրծքի վրա նկարում են աղջիկների, հարսնացուների պատկերներ. գրանցով ցամաքից կարված, շրերի մեջ, մարդիկ երեակայությամբ, նրա միջոցով, հագուրդ են տալիս իրենց տենչերին, սերերին, կարուտներին:

Այդպես է, ըստ հունական լեգենդայի, նկարչության ծագումը. զինվոր զնացող տղայի ստվերը, սիլուետը, որ ընկել է դռան մոտ, պատի վրա՝ հարսնացուին այցի, մնաք բարեկ եկած պահին, աղջիկը գծում է ստվերի շորջը, դառնում է փեսացի պատկերը, ասում է. «Դնա՛, հիմա ևս քեզ ունեմ, կտեսնեմ, կարուտ կառնեմ»:

* * *

<...> Մովսեսի արձանը: Այդպես է երեակայել արվեստագետը, այդպես է տեսել նա իր մտքում և նրա համեմատ իրականացրել, առարկայացրել, մարմնավորել: Եվ այնպես սկ կարծում, առանց կասկածի, թի հենց ինքն է, հենց այդպես է եղել Մովսեսը:

Ահա ինչքա՞ն մեծ է արվեստի ուժը, համոզիչ:

* * *

Նկարիչներ կան (Գուտավ Դոռե), որ ֆանտաստիկ պատկերները այնպես լուրջ են նկարում, կարծես թե, իրոք, գրանք իրական գեպքեր են եղել. օրինակ՝ Դանթեի Դժոխվը, Տասսոյի կախարդական անցքերը, կախարդությունները: Այդ-

պե՞ս է լավը. Հեղինակը իր ստեղծած ստին ծաղրով ու անհավատ չպիտի վերաբերվի, այլ լրջորեն, հավատով, ճշմարտապատում մտքով:

* * *

Դելակրուա նկարիչը սիրում էր նկարել վագրերին ու կանանց: Վագր ու կին. նրան բաներ են: Եվ նկարիչը շատ էր վախենում կանանցից, նրանց գեղեցկությունից՝ տանջող ու խոցող, և նրանց դավաճան սիրուց:

* * *

Հանգուցյալ նկարիչ Ե. Թագեռոսյանը հաճախ նկարում էր իր տեսած երազները, որոնք տարտամ, մշուշային, միտիկական բնույթ ունեին:

Երեանում գնամ, խնդրեմ, նորից նայեմ դրանց:

* * *

Մարդ մի բան երազում տեսնելու համար, պիտի ուղենա, ցանկանա այդ տեսնել: Փանոս Թերլեմեցյանը ասում է, որ ինքը միշտ Վանը տեսնում է երազում: Իհարկե, հասկանալի է, որ պիտի տեսնի, որովհետեւ բուռն տենչանք ունի տեսնելու, մատերիալ, նյութ կա մեջը, որ մզում է տեսնելու:

* * *

Լեռնարդո դա Վինչին, որ իր արվեստի համար շատ անգամ զիակներ է հերձել, գրել է, որ շատ զեղեցիկ բան է մարդկային մարմինը: Նա ասել է.—Հոգին, որ բաժանվում է մարմնից, լաց է լինում թողած մարմինը, որովհետև զեցիկ է նա:

* * *

Ռոգենին հարցրել են՝ ինչպե՞ս ես քանդակում, ի՞նչ է քանդակագործի արվեստը, նրա դադանիքը: Ռոգենը պատասխանել է, «Ավելորդ բաները տաշում եմ, հանում, դեն իմ ձգում»:

(Բյուրեղացնել, խտացնել):

* * *

Գիշերու, երազիս տեսա Սիսակին. Համբուրվեցանք, չը-
խոսեցինք. նստեց գիշս, ուրիշի հետ էր խոսում. խոռված,
նեղացած էր ինձնից, զժոված...

Ցերեկվա մտածումս երազիս մեջ մարմնացել է, պատ-
կեր առել: Այսպես է միշտ. մտածումը, զգացումը երազի
միշտ պատկերանում է այնպես, ինչպես արվեստագետի մտա-
ծումը, զգացումը պատկերվում է, պլաստիկ ձև առնում,
մարմին առնում. օրինակի համար՝ Ռոդինը Հոգի և մարմին
բաժանում էր իրարուց, իրեւ հակագործ տարերք. Հոգին
ձգտում է բարձրը, իդեալը, իսկ մարմինը դեպի նյութը, երկ-
րացինը: Այս մտածումը իր պատկերացումը, մարմնավորու-
մը գտնել է Ռոդինի ցենտավրոս արձանի մեջ. կին և ձի: Կնոջ
գլուխ, ձիու մարմին: Գլուխը ձգտում է վեր, վեր, երկինք,
իսկ մարմինը՝ վար, և ոտները (հտի) կըում են և խրվում
Հոգի մեջ...

Բանաստեղծարվեստագետի էությունը դա է—պատ-
կեր տալ, կոնկրետացնել, մարմնավորել, ձև տալ, մարմին...

* * *

Թաղուշ Զորյանը շատ տաղանդավոր արտիստ է, նկա-
րիչ, կերամիստ:

Գրիթե Հայաստան չի եղել, հայ ժողովրդին չի տեսել,
բայց նրա ստեղծած իրերը խորապես կրում են Հայկական
արվեստի Հոգին. ձեւը, մոտիվներ, դրվեներ: Ուղղակի էն-
տուիսիսնել (ինտուիցիա) ճանապարհով գտած, հասած:
Կարծես թե աշքով տեսել է Հայկական նախատիպարները,
օրինակները, նախատիպերը և օրինակել: Ուրիշն, ինտու-
սիոնով նա տեսել է, աշքին զեմ-Հանդիման կանգնել են
այդ տիպարները...

Պ ՅԱՏՐՈՆ
ՀԱՅԱՏՈՒՐԳԻԱ



«ՀԱՆՐԻ ՆԱՎԱՐԱՅԻ»

Թիֆլիսի Հայոց Դրամատիկ. Ընկերությունը հունվարի 20-ին Արքունական թատրոնում տիկ. Դուրյան-Արմենյանի բնենդիմակին ներկայացրեց Դևերեի «Հանրի Նավարացի» դրաման 5 գործողությամբ:

Այդ դրամայի նյութը կազմում է Բարթողումյան պատմական գիշերը:

Համառոտակի այս է պիհսի բովանդակությունը: Ֆրանսական գահի վրա նստել է բուրբոնյան տոհմից Կարլոս IX թագավորը, մի բարի, բայց հոգեպիս հիվանդ մարդ: Նրա մայրը—Հայտնի Կատերին Դը Մեդիչին, իրեն նեցով ունինալով կաթոլիկների պարագլուխ Դը Գիզին՝ ուզում են գահընկեց անել թագավորին և նրա փոխարին գահ նստեցնել թագավորի փոքր եղբորը՝ Դ'Անժուին, որով կարողանան իրագործել իրենց արյունու դիտավորությունը—հուգենուների ջարզը: Թագավորը, շրջապատված իր պալատում շարդի կուսակիցներով, անզոր է մաքառելու:

Կարլոսը իր բրոշը՝ Մարգարիտին կնության է տվել գասկոնների թագավոր երիտասարդ Հանրի Նավարացուն՝ որ Կարլոսի վասալն է, մի կայտառ, սրամիտ, լեռնցի մարդ:

Հանրին իր շքախմբով է գալիս Փարիզ՝ պսակվելու Մարդարկիտի հետ, սակայն թագավորի մայրը՝ Կատերինը՝ կատաղի թշնամի է Նավարացուն, որովհետեւ վերջինս հուգենու է (բողոքական) և ուզում է խանգարել այդ ամուսնությունը, դավեր է սարքում նրա կյանքի դեմ, սակայն բոլորը նավա-

բացու անվեհերությամբ՝ ի դերեւ ևն ևլուսմ: Սիրու և կրոնի հակառակորդ է գուրս գալիս Դը Գիզը, որ ուղում է տապաւ-լել նավարացուն և խլել Մարգարիտին: Վերջի վերջո Կատե-րինը, Դը Գիզը և Կամարիլան՝ զրապարտելով Կարլոսի առաջ նավարացուն՝ հաջողեցնում ևն թագավորի զրգութած ժամա-նակ հուգենուներին կոտորելու հրաման կորպել. Կարլոսը հրամայում է կոտորել բոլորին, նաև նավարացուն. ակոսում ևն ջարզը, ընկնում ևն նավարացու թիկնապահներից, սա-կայն նավարացին հաղթող է հանդիսանում, և Կարլոսը տեսնելով նրա քաջությունը և հասկանալով պալատական ինտրիգը՝ հայտարարում է, որ այսուհետեւ Հանրի նավա-րացին պիտի լինի Փրանսիական թագավորը, իրեն դահա-կալը:

Դրաման բեմական արժեք ունի, էֆեկտավոր և հետա-քըրքրող—ջղեր լարող, սակայն զեղարվեստական կողմից թույլ է. Հին մելոդրամիկ շկոլայի գործերիցն է. ունինալով այդ շկոլայի թերությունները, որոնք առաջ առավելություն-ներ էին համարվում:

Բենեֆիցիանտ տիկ. Դուրյան-Արմենյանը թեև լավ տարավ իր խաղը՝ Մարգարիտի դերը, սակայն այդ զերը փոքր էր նրա համար, իբրև բենեֆիցիանտի: Բենեֆիցիանտը պիտի ընտրե կենարոնական դեր, այնինչ այդ դրամայում կենարոնական դերը ու. Արմենյանինն էր—Հանրի նավարա-ցին, որ շատ դեղեցիկ կատարեց:

Գեղեցիկ էր և մտածված՝ Կարլոսի դերում պ. Հ. Աբել-յանը: Լավ էին օր. Ադամյանը՝ Կատերինի զերում, պ. Շահ-խաթունին՝ Դը Գիզի գերում. նույնպես պ. պ. Ավետյան, Զարիֆյան, Հարությունյան իրենց փոքր դերերում:

Հասարակությունը ոգեսրված մի քանի անգամ բեմ հրավիրեց տիկ. Դուրյան-Արմենյանին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆ

Հ. Մասեհյանը եղակի տեղ է գրավում հայ իրականության մեջ: Նրա բարձր դիրքը և հայրենասիրությունը, հեղաբարոյությունը հավակնություն չունի: Նա աշխատանքի մարդէ: Նա ոչ մի կորցրած վայրկյան չունի իր կյանքի մեջ: Տիրապետելով կատարելապես անգլերին, ֆրանսիերին, զերմաներին, արաբերին, պարսկերին, հայերին լեզուներին—լեզու ասած գժվարին բանը նրա ձեռքում խաղալիք է զարձել: Դեռ շատ երիտասարդ հասակում, թեհրանում նասրդգին շահի սիրելի թարգմանիչն է եղել: անվերջ զեկուցումներով ներկայացել երանի վեհափառին, քաղաքական հարցերի մասին: Թարգմանելով զանազան լեզուներով լույս տեսած գրքեր Պարսկաստանի մասին, պալատական թատերական ներկայացումների համար թարգմանելով Մոլիերի պիեսները... և այս ամենը կարճ ժամանակի միջոցին: Նրա այս լեզվական աննոնան ընդունակությանն հնք պարտական, որ նա կարողացել է հաղթահարել Շեքսպիրին, որի լեզուն աշխարհի մեջ բոլոր հեղինակներից, բացի Աստվածաշնչից, ամենաշատ բառ պարունակողն է:

Ավելի քան 30 տարի, գրեթե իր գիտակից կյանքի ողջ շրջանում, Մասեհյանը իր բազմազբաղ պաշտոններին կից, անընդհատ զբաղվել է Շեքսպիրի ուսումնասիրությամբ. մի զարմանալի տոկունություն, որ փառավոր կերպով վկայում է նրա հաստատակամ նկարագիրը, մտավոր կյանքի սերը. իր գրադարանը լեցուն է Շեքսպիրի շուրջ <հղած> գրակա-

նությամբ. նրա լեզվի, ոճերի, ծագման, առասպելների, աղբյուրների քննությամբ, լուսաբանությամբ և զանազան լեզուների թարգմանություններով, մի հարուստ գրականություն, որ նա համբերանքով ու բարեխնդությամբ ուսումնասիրել է, շարունակ ձեռք բերելով նոր հետազոտություններ Շեքսպիրի ժաման:

Այս ամենը նկատի ունենալով, վստահ կարող ենք ասել, որ ո՞չ միայն հայերիս մեջ միակ և առաջին շեքսպիրագիտն է, այլև համաշխարհային մասշտարով առաջնակարգ տեղ է գրավում, ինչպես այս ապացուցվեց Շեքսպիրի 300-ամյա հոբելյանական հանդեսին, երբ նա պատվով հրավիրվեցավ Լոնդոն:

Առաջին անգամ, սրանից մոտ 30 տարի առաջ, լույս տեսան թիֆլիզ նրա <թարգմանությամբ> «Համլետ», «Արքա Լիր», «Ռոմեո և Ջուլիետ» և ընդունվեց Հրճվանքով, սակայն այդ թարգմանությունները ուղղակի փորձեր էին, նրանցից հետո է, որ Մասհյանը կատարեց իր հաղթանակը. նրա ներկա թարգմանությունները, իմ կարծիքով, անթերի են, կատարյալ. լավագույնը մենք շենք կարող անել երկար ժամանակ, գուցե և ընդմիշտ, որովհետեւ զգուրին բան չէ գտնեմարտի բռնվել անգլո-սաքսոն հանճարի հետ:

Շեքսպիրի ազգեցությունը անկշիռ է եղել գրականությունների վրա. այն գրականությունը, որ կարողացել է յուրացնել Շեքսպիրը՝ ընկել է իսկական, ստույգ ուզդի վրաթափանցել մարդկային հոգու խճճված անտառի մեջ, լուսաբանելու համար կրթերի—զգացումների ծագումն ու ձեզ, խորությունն ու էությունը. չե՛ որ ողջ տիեզերքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր հոգին, կամ մեր հոգու սիմբոլը:

Գյոթեն առանց Շեքսպիրի կմնար մի սին հոետոր, բառախաղով զբաղվող, կեղծ ու տղեղ: Գյոթեն խոսառվանել է, որ ինքը կողոպտել է Շեքսպիրին: Այսպիսով, Շեքսպիրը իր բարերար աղղեցությունը պիտի անպատճառ ունենա մեր, եթե ոչ ներկա, բայց գալիք գրականության վրա. մենք պիտի դեռ հասունանանք, բարձրանանք Շեքսպիրին հասկանալու,

յուրացնելու, «կողոպտելու», որ տանք մեր ուժիրին համաձայն շեքսպիրներ:

Մասեհյանը ինձ գանգատվում էր, որ իր գրքերը հայերի մեջ գրեթե սպառում չունեն, և նույնիսկ չեն կարդացվում, նույնիսկ սրան-նրան նվիրված գրքերը չեն կարդացվել. հանցավորը մենք ենք, ո՞չ Շեքսպիրը և ո՞չ նրան վերաստեղծողը: Հանճարները նման են ուշ տաքացնող մեծ վառարանների, բայց որ մեկ տաքացնեն, այլևս մշտական է:

Դժբախտաբար, ես չգիտեմ անգլերեն, որ կարողանայի թարգմանությունը բաղդատել բնագրի հետ, ավելի ճիշտ կարծիք հայտնելու համար, սակայն տարիների մեջ ես համեմատել եմ նրանք գերմանական կլասիկ դարձած թարգմանությանց հետ, Շլեգելի <1 անընթ.՝> և Հիացել եմ հայ թարգմանության կատարելության վրա: Պրոֆ. Նիկ. Մառը, որ գիտականորեն գիտե հայերենը, կարգալով Մասեհյանի թարգմանությունները, անվերապահ զարմանք է հայտնել, թե Մասեհյանի շնորհիվ աշխարհաբար մանուկ հայերենը ի՞նչ ճոխության ու ճկունության է հասել, որ անպակաս կերպով կարողացել է մի գծի վրա հավասար կանգնել Շեքսպիրի լեզվին, մի փոքրիկ, տրորված ազգի լեզու մի մեծ, քաղաքակրթված ազգի լեզվի ընկեր: Ի՞նչ կա սրանից ավելի պատվավոր մեղ համար:

1. Համանորեն՝ Ավզուստ Վիլհելմ Շլեգել:

ՄԱՍԵՀՅԱՆ

<...> Շեքսպիրի հետ զուղընթաց, որոշ ժամանակ տրամադրել էր Գյոթեի Ֆառատի ուսումնասիրությանը, ուզում էր թարգմանել Ֆառատը ամբողջապես: Մի քանի փորձնական հատվածներին ծանոթ էի ես, և թվում էր ինձ, որ հաջողված էին: Թարգմանել էր Օմար Խայամից մի տասնյակ քառյակներ, և մտադիր էր լրիվ թարգմանել նաև ուներ Ծաբր: Տաղորից մի քանի ոտանավորներ:

Ուզում էր Շեքսպիրը, որքան կարելի է, լրիվ թարգմանել. որքան հայտնի է ինձ, նա թարգմանել էր 10—12 պիհուները՝ «Համլետ», «Մակբեթ»... Բացի գրանցից, պատրաստ ուներ «Ռոմեո Զուլիետան», «Լիբր Արքան», «Ինչպիս կուզե», «Կեսարը» և <1 անընթ.>:

Սակայն մահը անկատար թողեց նրա իղձերի իրականացումը...

1916 թվին Շեքսպիրի 300-ամյակի հանդեսին նա հրավիրված էր, և նրա պատկերը Շեքսպիրի թանգարանում կախված է, որ մեծ պատիվ է:

Նրա անունը նշանավոր շեքսպիրագետների ցանկի մեջ է:

ՍԻՐԵԼԻ ՀՈԲԵԼՅԱՌԻՆ
<Վաղարշ Վաղարշյան>

Տաղանդավոր արտիստ վ. Վաղարշյանի ծննդյան 50-ամյակը զուգագիպում է նրա գրական-բնուական գործունեության 30-ամյակին: Մենք այսօր տոնում ենք սիրով և երախտագիտությամբ նրա կրկնակի հորելյանը:

Վ. Վաղարշյանը հետաքրքրական անձնավորություն է: Նրա ստեղծագործական էներգիան բազմակողմանի արտահայտությամբ է հանդիս եկել, իրրե հասարակական գործիչ, թատերական նախաձեռնող-կազմակերպիչ, ռեժիսոր, դրամատորդ և դերակատար: Դժբախտաբար ևս ծանոթ չեմ նրա թատերագրական երկերի հետ, որոնք իմ բացակայությանն են ներկայացվել: Նրա «Սասունցի Պավիթ» դրամատիկ երկը ևս խմբագրել եմ, սակայն դա, իւստրկե, մեր գրականության մեջ սակայն դա, իւստրկե, մեր գրականության չափամար նվաճում չէ: Պա կատարված ավելի կամ նվազ հաճամար նվաճում է: Պա կատարված ավելի կամ նվազ հաճամար նվաճում է:

Վ. Վաղարշյանը մեր հոյակապ էպոխակի, նրա գաղափարների, մտայնության հարազատ զավակն է: Նրա իրականության փայլուն ցոլացնողներից մեկը:

Վաղարշյանի արվեստը կրում է սովորական ռեալիզմի առողջ դրումը: Նա շատ բան է սովորել ուսական մհծ

արվեստից: Նա հասակ է առել հայ բեմի վրա, հատկապես Երևանի Սունդուկյանի անվան պետ. թատրոնի բեմի վրա 20 տարուց ի վեր, շատ բան է տվել նա հայ բեմին և շատ բան է ստացել հայ թատրոնի անցյալի փորձից: Հենց Երևանի բեմից սկսվում է նրա գործոննեության բեղուն շրջանը և առաջին դեբյուտից իսկ դառնում է մայրաքաղաքիս սիրելի դերակատարը: Նրա զիմավոր գեղարվեստական իրականացուները, որոնք մեկը մյուսից հրաշալի են՝ հետեւյալներն են. Կրիշինսկի, Խլեստակով, Սուրեն («Պատվի համար»), Բելոգուրով, Մավրը («Ֆիասկոյի զավադրությունը»), և հատկապես շատ ազգու, խորապես զգացված Եղոր Բուլիչչով:

Լենինի դերում, նա զարմանալի ներդաշնակությամբ միահյուսում է Լենին-մարդը Լենին-առաջնորդի հետ: Այս շատ հաջող իրականացումը գնահատվեց մեր կառավարության կողմից, որը ժողովրդական արտիստի կոչումով պատվեց նրան:

Կենդանի շունչ տվեց Գագիկ Երկրորդի կերպարին, այդ հերոսական և հանճարեղ պատանուն, որ ողջակիղվում էր հայրենիքի ու ժողովրդի համար:

Համեստի կատարումը՝ գրեթե նոր լուսակ տակ, նոր մեկնարանությամբ, վկացում է Վաղարշյանի արտիստական կուլտուրայի բարձր որակի մասին: Համեստի դերակատարումը միշտ էլ համարվել է մի տեսակ փորձաքար, կրիտերիում արտիստների հոգեբանական նուրբ ըմբռնողության, գրական էրուդիցիայի, խորունկ ապրումների դրսերման շափի և աստիճանի: Վաղարշյանը բռնեց այս պատվավոր քննությունը:

Արտիստ վ. Վաղարշյանի անունը կմնա մեր թատրոնի փառապանծ պատմության մեջ, մեր նշանավոր, վաստակավոր արտիստների շարքում:

Թատերասեր հայ հասարակությունը սիրում է նրան...
Այսօր հայ հասարակությունը դալիս է իր խանդավա-

ոռոթյունը և զիացմունքը մատուցանելու արժանավաստակ
արտիստի տաղանդին, գործին, աշխատանքին:

Սիրելի Հոբելյարը իր ստեղծագործական ուժերի կա-
տարյալ ծաղկման մեջ է, մեր թատրոնը արդարացիորեն
տակավին շատ սպասելիքներ ունի նրանից: Մենք բոլոր
սրտով ցանկանում ենք նրան առողջություն, երկար կյանք
և ստեղծագործական նորանոր հաղթանակներ:

1944

1/

Ա. ԹԵՇՈԶԻԲԱԾՅԱՆԻ ԴԻՍԵՐՏԱՑԻԱՆ

Հնկեր Վ. Թերզիբաշյանը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Արեգացիանի անվան գրականության ինստիտուտին ներկայացրել է իր գիսերտացիան «Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունների մասին»՝ ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուի աստիճան ստանալու համար:

Դիսերտացիան բազկացած է 70 էջից: Նա իր գրած թեզերի համաձայն զարգացնում է իր նյութը—թե ե՞րբ է առաջին անգամ հայ գրականության մեջ հնչել Շեքսպիրի անունը և ե՞րբ են սկսվել թարգմանական փորձերը: Եզ մինչև մեր ժամանակները կատարված թարգմանությունների խրոնիկան, քանակն ու որակը:

Դիսերտանուր մի երկու հնթագրություններից հետո կանգնում է ոեալ փաստերի վրա, արդյունք՝ չանազիր և տոկուն հետազոտությունների և՝ որոնումների: Նա ցույց է տալիս, որ մեծահանճար Շեքսպիրի անունը առաջին անգամ հանդիս է դալիս հայ գրականության մեջ 1834 թվին Մոսկվայում լույս տեսած Ռասինի «Գոթողիա» ողբերգության հայկական թարգմանության հառաջաբանի մեջ: Թարգմանիչը՝ Ս. Տիգրանյանը բավական մանրամասն խոսում է Շեքսպիրի գրամատուրգիայի մասին իր նշանավոր հառաջարանի մեջ:

Հետո, 1840-ական թվականների սկզբներում ականավոր գիտնական Մկրտիչ Էմինը առաջին անգամ հայ լեզվով

գրաբար թարգմանում է Շեքսպիրից հատվածներ, ընդամենը 24 տող, իր պոետիկայի դասընթացքի համար, որպես համեմատական նմուշներ:

1853 թվին Վենետիկի Ա. Ղազարի Մխիթարյանները «Բազմավեպ»-ում տպագրում են մի մեծ հատված «Հռովիոս Կիսարից», նույն թվին Զմյուռնիայում Ա. Տետիյանը թարգմանում է Շեքսպիրի «Մխալների կոմեդիան», և հետագա տարիներում «Վենետիկի վաճառականը», «Հռովիոս և Ճյուղատ» և «Համելետը»:

1866 թ. հայ բեմի վրա առաջին անգամ ներկայացվում են Շեքսպիրի պիեսներից «Մակրեթը» Կ. Պոլսում, «Վենետիկի վաճառականը» Թիֆլիսում: Հայ թատրոնի դարձացումը պահանջ էր գնում լուրջ գեղարվեստական պիեսների, մանավանդ Շեքսպիրի, որով հափշտակված էր հայ թատերասեր հասարակայնությունը: Շեքսպիրի գործերը մեծապես նպաստեցին հայ թատրոնի ծաղկմանը, և նրա հանճարը անբաժան կապված է մեր թատրոնի վերելքի պատմության հետ:

Այնուհետև դիսերտանտը խոսում է մի շարք թարգմանությունների մասին մինչև Հռվիզ: Խան Մասեհյանի հանդես գալը 1890-ական թվականների կեսերին: Դիսերտանտը արդարացի կերպով Շեքսպիրի հայ թարգմանությունների պատմությունը բաժանում է երկու շրջանի՝ նախարարհյան և մասեհյանյան: Նա դիսերտացիայի 50-ից մինչև 64 էջերը նվիրում է Մասեհյանի թարգմանությունների արժեքավորմանը:

Նախքան Մասեհյանը կատարված թարգմանությունների մասին խոսելը դիսերտանտը տեղին զնահատելով թարգմանիչ ուահվիրանների մեծ, կուլտուրական գործը, ցուց է տվել նրանց հայացումների թերությունները լեզվի, ոճի տեսակետներից, ըմբռնման սխալները, սակայն նրանք հանապարհ են Հարթել իսկական թարգմանչի երևան գալուն: Նախապատրաստական աշխատանք են կատարել նրանք, և մենք միշտ ի նկատի ունենալով ժամանակի լեզվական

Հնարավորությունները, իհարկե, միայն երախտագիտական պարտք ունենք նրանց հանդեպ:

Դիսերտանտը համառոտակի տալիս է Հ. Մասեհյանի կենսագրականը: Ներհուն թարգմանիչը խանդավառված էր իր գործով, անշահախնդիր տոգորված այն վեհ գաղափարով, որ իր նվիրված աշխատանքով նպաստում է մայրենի գրականության հառաջադիմությանը. զիտակից էր իր մեծ նպատակին, որին նվիրվեց ամբողջ 40 տարի ուսումնասիրելով Շեքսպիրը՝ նրա դարը, ժամանակի լեզուն, կարգալով բոլոր նշանավոր շեքսպիրագետներին և մոտիկ ծանոթանաւով Շեքսպիրի գերմանական, ֆրանսիական թարգմանություններին: Այսպես լավ դիմված նա թարգմանել է 12 պիես մեծագույն դրամատուրգից:

Դիսերտանտը մեծարում է Մասեհյանին՝ դասելով նրան հայ գրականության և կուլտուրայի առաջավոր մշակների շարքը: Դիսերտանտը մանրամասն կանգ է առնում «Համլետի» թարգմանության վրա, բազդատելով այն բնագրի և հայ նախընթաց թարգմանությունների հետ, նաև ոռու և ֆրանսերեն թարգմանությունների հետ.—և դտնում է՝ ապացուցելով, որ Մասեհյանի թարգմանությունը անհամեմատ կատարյալ է, անհամեմատ հարազատ բնագրին: Եվ միանգամայն գեղարվեստական և դիտական պահանջներին բավարարող: «Համլետի» թարգմանության մասին դիսերտանտը գրում է. «Մասեհյանի թարգմանության հարազատությունն այն աստիճան է, որ կարող է հիմք ծառացել Շեքսպիրի այլ լեզվով թարգմանությունը ստուգելու համար»:

Միանգամայն ճիշտ գնահատում:

Դիսերտանտը հիշատակում է նաև Շեքսպիրի սոնետների և «Աստղիկ ու Աղոնիս» պոեմայի թարգմանության մասին: Զի մոռանում նույնպես հիշատակել Շեքսպիրի պիեսներից կազմած ժողովրդական ընթերցանության գրքույցիները:

Շեքսպիրին սիրելը և հասկանալը մի ժողովրդի կուլտուրական դարձացման շափանիշն է. նրա լեզվական ճկու-

նության, կերպընկալության և բառերի հարստության աստիճանացուցը: Մի ժողովրդի գեղարվեստական ձաշակի և մեծ խոհերի հասունության վկայականը:

Հայ ժողովուրդը ձեռք է բերել հասունության այդ վկայականը:

Շեքսպիրի կանոնը կազմող ՅՇ պիեսներից հայերեն թարգմանված են 21 պիես, չհաշված սոնետները: Թարգմանված է նշանավոր երկերի մեծ մասը, որոնցից միքանիսը հրատարակված են 5—6 անգամ:

Այս թարգմանված երկերի համեմատական քանակով հայերս գրավում ենք երկրորդ տեղը Սովետական Միության մեջ ուստի մեծ ժողովրդից հետո. և առաջին տեղը Մերձավոր արևելքում,—եղբակացնում է դիսերտանտ Վ. Թերզիբաշյանը:

Դիսերտանտը մանրակրկիտ և բարեխիղճ աշխատանք է կատարել. պրապտել է Հայ գրականությունը, և՝ մամուլը, և գրական արխիվները—և պեղել է, լուս աշխարհ է հանել անուններ, թվականներ և փաստեր: Վերլուծան է հնարկել թարգմանիչների լեզուն, ոճը և առաջաբանները: Շեքսպիրի թարգմանությունների պատմության վերաբերմանը ընկեր Վահրամ Թերզիբաշյանի զործը շնորհակալ աշխատանք է, սպառիչ հետազոտություն, անհրաժեշտ ներդրում մեր շեքսպիրագիտության մեջ:

Շնորհիվ այս ամենի, և անկախ նրա նախընթաց բազմաթիվ հոդվածներից և գրքերից, դիսերտանտ Թերզիբաշյանը արժանի է ֆիլոլոգիական՝ <գիտությունների> թեկնածուի աստիճանի:

Սիրով առաջարկում եմ նրա թեկնածությունը:

Դիսերտացիայի թերությունները այնքան չնշին են, որ ավելորդ եմ համարում խոսել նրանց մասին:

Հնարավորությունները, իհարկե, միայն երախտագիտական պարտք ունենք նրանց հանդեպ:

Դիսերտանտը համառոտակի տալիս է Հ. Մասեհյանի կենսագրականը: Ներհուն թարգմանիչը խանդավառված էր իր գործով, անշահախնդիր տոգորված այն վեհ գաղափարով, որ իր նվիրված աշխատանքով նպաստում է մայրենի գրականության հառաջադիրությանը. դիտակից էր իր մեծ նպատակին, որին նվիրվեց ամբողջ 40 տարի ուսումնասիրելով Շեքսպիրը՝ նրա դարը, ժամանակի լեզուն, կարդալով բոլոր նշանավոր շեքսպիրագետներին և մոտիկ ծանոթանաւով Շեքսպիրի գերմանական, ֆրանսիական թարգմանություններին: Այսպես լավ զինված նա թարգմանել է 12 պիես մեծագույն գրամատուրգից:

Դիսերտանտը մեծարում է Մասեհյանին՝ դասելով նրան հայ գրականության և կուլտուրայի առաջավոր մշակների շարքը: Դիսերտանտը մանրամասն կանգ է առնում «Համետի» թարգմանության վրա, բազգատելով այն բնագրի և հայ նախընթաց թարգմանությունների հետ, նաև ոռու և ֆրանսերեն թարգմանությունների հետ.—և զտնում է՝ ապացուցելով, որ Մասեհյանի թարգմանությունը անհամեմատ կատարյալ է, անհամեմատ հարազատ բնագրին: Եվ միանգամայն գեղարվեստական և դիտական պահանջներին բավարարող: «Համետի» թարգմանության մասին դիսերտանտը գրում է. «Մասեհյանի թարգմանության հարազատությունն այն աստիճան է, որ կարող է հիմք ծառայել Շեքսպիրի այլ լեզվով թարգմանությունը ստուգելու համար»:

Միանգամայն ճիշտ գնահատում:

Դիսերտանտը հիշատակում է նաև Շեքսպիրի սոնետների և «Աստղիկ ու Աղոնիս» պոեմայի թարգմանության մասին: Չի մոռանում նույնպես հիշատակել Շեքսպիրի պիեսներից կազմած ժողովրդական ընթերցանության զբարքությունը:

Շեքսպիրին սիրելը և հասկանալը մի ժողովրդի կուլտուրական զարդարման շափանիշն է. նրա լեզվական ձկու-

նության, կերպընկալության և բառերի հարստության աստիճանացուցք: Մի ժողովրդի գեղարվեստական ձաշակի և մեծ խոհերի հասունության վկայականը:

Հայ ժողովուրդը ձեռք է բերել հասունության այդ վկայականը:

Շեքսպիրի կանոնը կազմող 37 պիհեներից հայերեն թարգմանված են 21 պիհես, չհաշված սոնետները: Թարգմանված է նշանավոր երկերի մեծ մասը, որոնցից մի քանիսը հրատարակված են 5—6 անգամ:

Այս թարգմանված երկերի համեմատական քանակով հայերս գրավում ենք երկրորդ տեղը Սովետական Միության մեջ ուստի մեծ ժողովրդից հետո. և առաջին տեղը Մերձավոր արևելքում,—հղբակացնում է դիսերտանտ Վ. Թերզիբաշշանը:

Դիսերտանտը մանրակրկիտ և բարեխիղճ աշխատանք է կատարել. պրապտել է Հայ գրականությունը, և՝ մամուլը, և՝ գրական արխիվները—և պեղել է, լույս աշխարհ է հանել անուններ, թվականներ և փաստեր: Վերլուծման է ենթարկել թարգմանիչների լիզուն, ոճը և ասացաբանները: Շեքսպիրի թարգմանությունների պատմության վիրաբերմանը ընկեր Վահրամ Թերզիբաշշանի գործը շնորհակալ աշխատանք է, սպասիլ հետազոտություն, անհրաժեշտ ներդրում մեր շեքսպիրագիտության մեջ:

Շնորհիվ այս ամենի, և անկախ նրա նախընթաց բաղմաթիվ հոդվածներից և գրքերից, դիսերտանտ Թերզիբաշշանը արժանի է ֆիլոլոգիական <գիտությունների> թեկնածուի աստիճանի:

Սիրով առաջարկում եմ նրա թեկնածությունը:

Դիսերտացիայի թերությունները այնքան չնշին են, որ ավելորդ եմ համարում խոսել նրանց մասին:

ԱՏ. ՊԵՒԲԸՆՎԱԿՈՒ ԵՐԿՈՒ ԴՐԱՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արտիստիկական ընկերության թատրոնում «նոր դրամայի ընկերությունը» դեկտեմբերի 7-ին ներկայացրեց Ստանիսլավ Պշիբբշևսկու «Երջանկության Համար» դրաման երեք գործողությամբ, և «Հյուրեր» դրամատիկական էպիլոգը մի գործողությամբ:

Ստ. Պշիբբշևսկին գրականության մեջ նոր գելմբ է. նա ծնվել է 1868 թվին լեռ ծնողներից, իր երկերը գրել է գերմաներեն լեզվով, միայն վերջերը ինքը վերածել է և՛ մայրենի լեզվի:

Նա իր շեշտված անհատականությամբ տօքեր, սիրելին գրականության մեջ, «նոր գեղեցկության» մեջ, ո՛չ միայն առաջնակարգ տեղ է գրավում, այլև հանդիսանում է զեկավար, ստեղծագործող. նրա գեղարվեստը չի ճանաչում ո՛չ մի նպատակ իրենից դուրս, այլ ինքն է իր նպատակը՝ ազատ և անկախ հասարակական պահանջներից, ժամանակից և տարածությունից դուրս. միակ արտահայտողը և վերստեղողը անմահ, հավերժական էության—մարդկային ոգու իր բոլոր արտահայտությունների մեջ՝ անկախ այն բոլորից՝ ինչ որ կոչվում է շար ու բարի, գեղեցիկ կամ տգեղ. այդպիսով, նա կանգնած է նիցշեական «շարոյ և բարոյ յայնկոյա»-ում,—վերստեղողը այն արտովուտ էության, որ իր համոզմունքով է՝ սերն ու մահը:

Սերն ու մահը—ահա՝ այն առանցքը, ինչպիս ինքն է ասում, որի շուրջը պտտվում է մարդկային կյանքը, և Պշի-

բԵշեսկու բոլոր երկերը՝ վեպերն ու դրամաները և արձակ պոեմները զանազան ձևերով շրջում են այդ կոսմիկական սկզբունքների շուրջը, լցնում են նրա բոլոր բովանդակ էռւթյունը, աշխարհայացքը:

Սերն է, սեսական սերը, այն տիեզերական-հավերժական, անխորտակելի, սոսկալի ուժը, որ երկաթի խարազանով մղում է ամբողջ կենդանական աշխարհը անփիվ դարերից ի վեր, ո՞չ մի վայրկյան կանգ շառնելով, մի ուժ, որից անհնար է խուսափել, որից ծնվում են ամեն տանշանքներն ու շարիքները, վշտերն ու հանցանքները, իսկ բարին ու հաճույքները ո՞չ այլ ինչ են, իթե ոչ ընդհատումն մի առ ժամ, տիեզերական այդ քաղցի, այդ անսահման ծարավի հուր տառապանքների... Սերը իր էռւթյամբ տանշանք է, իսկ հագեցումը նրա, բավականությունը՝ սոսկ վախճանը նրա, դադարումը։ Միայն հագեցումից հետո զալիս է հավիտենի կարոտը, որ ընտիր ոգիներին օրորում է երկրից բարձր երաղներով, մահվան-անմահության երազներով...

Նա ընդունում է հունական փիլիսոփայության այն միտքը, թե սեսերը նախաստեղծման շրջանում կազմել են մի ամբողջություն, միայն հետո բաժանվել են՝ իրար միանալու, մի լինելու անհանգելի, անդիմադրելի ձգտումով, և որքան խոշընդոտներ են առաջ զալիս այդ միացման դեմ, այնքան ավելի է տառապում մարդը, անհունորեն տառապում («De profundiis»). սերը—այդ տիեզերական կամքն է, որի առաջ բանականությունը չքանում է և ուղեղը հալվում՝ խոշտանգելով մարդու հոգին. և այդ ամենը ամենագագան բնության խաղն է, որի համար, երկի, հաճելի է, որ տառապեն և մեռնեն, նոր սերունդներ առաջ բերելու համար:

Իսկ կինը—դա ամենամեծ շարիքն է աշխարհի երեսին. միշնագարյանների նզովված սատանի աղջիկը, այն գեղեցիկ, կախարդիչ վամպիրը, որ ծծում է, քամում է մարդու արյունը, երշանկություն խոստանալով նրան՝ այդ դժբախ-

տին, որին հրապուրելով և հոշոտելով, ծծում է ուղն ու ծուծը, արյան վերջին ատումը՝ մի ուրիշ նոր դժբախտ ծնելու համար... Դեմոնիզմն է կնոջ էպությունը—նա այն կոշմարային լուծն է, որ ծանրացել է մարդու ուսերի վրա, և նրան գետնին տրորել, նրա միջն է այն տարերային ուժը, որի առաջ այրվում է մարդը երշանկության համար, իսկ երշանկություն չկա, որովհետեւ կնոջ սերը, նրա թունավոր համբուցըները Բուդդահի այն ազի ջուրն է, որից պատակած մարդը, եթե ամբողջ մի ծով խմե, ոչ միայն չի հաղենա, այլև ավելի սոսկալի կտառապի, կծարավի... Եվ միայն մաջն է, որ բերում է երշանկություն, անդորր և անվերջ, որ գուրգուրում է և հանգստացնում դարերի քաղցած և ծարավ ոպին:

Խոկ ֆիլիստերների երազած երշանկությունը այն է, ինչ որ «որդերի երշանկությունը արել տակ, աղբակույտի միջ»:

Իջարկե, այս «սեռական միստիցիզմի և տիեզերական ճակատագրի» վարդապետությունը նոր խոսք չէ. Շոպեհն-Հառերը իր «Սիրո մետաֆիզիկայի» մեջ այդ ամենը փիլիսոփայորեն հիմնավորած է. և առջասարակ Պշիբը ևսկին շատ է ազգված Շոպեհն-Հառերից և մանավանդ Նիցշերից, միայն շնորհիվ իր կախարդական—խորհրդավոր անհատականության, խոր զգացումների, զգոր ու թոփքավոր երեվակայության, ինքնուրույն և թարմ ոճի—նրա «Homo sapiens», «Սատանայի որդիները», «De profundis», «Սիրո և մահի պարը»՝ նոր գրականության անմահ և ամենատիպիկ էջերն են, որոնց մեջ, շնացելով իր շոշափած նյութին, չկա ոչ մի մոռասանյան պոտոգրաֆիկ տեսարան, ոչ մի էրոտիկական-բանալ ակնարկ, խոսքեր:

«Նոր գրամայի ընկերությունը» ներկայացրեց «Սիրո և մահի պարի» ցիկլից երկու կտոր, առաջինի՝ «Երշանկության համար» դրամայի նյութը հետեւալն է: Մլիցկին՝ ելենացի ամուսինը, սիրահարվում է մի ուրիշ աղջկա—Օլգային: Ելենան այդ մասին գեռ ողինչ չգիտե, նրան հայտնում է այդ մասին Մլիցկու ընկերը—Զշալսկին, որը նույնպես

սիրահարված է Օլգայի վրա, բայց որից մերժված է, և այժմ՝ վրեժ լուծելու համար Մլիցկուց և Օլգայից, լցնում է Ելենացի սիրտը դառնությամբ և մենակության, թողնվածության սոսկալի ուրվականներով։ Երբ զալիս է Օլգան Մլիցկու մոտ, Ելենան չի թողնում իր ամուսնուն զնալ Օլգայի հետ, և վերջինին դուրս է անում իր տանից, իսկ երբ Օլգան ուղում է հեռանալ՝ մի արհամարհական հայացք գցելով Մլիցկու վրա—Մլիցկին մղված հզոր սիրուց՝ վաղում է նրա հոտեց, Ելենան բռնում է նրան, բայց նա շպրտելով նրան գետին, անցնում է նրա վրայից և հետեւում իր նոր սիրուն—երջանկության համար...

Բայց աջա Զշարսկին՝ իր վրեժը լուծելու համար, մյուս օրը մտնում է Մլիցկու նոր տունը, և նրան, որը տառապում է խղճի խայթից, հայտնում է, թե Ելենան խեղդվեց և աջակերեն նրա դին այստեղ... և Մլիցկին, լսելով դուն բախումը՝ տենդային կերպով բռնում է դուռը, որպեսզի շթողնի դին բերելու, և խելագարվում է...

Պիեսը խոր տապավորություն է թողնում, լի հոգեկան խորին անալիգով. շատ հաջող խաղաց Ա. Զակուշնյակը (Զշարսկու դերում). Բուդկեհշը այս անգամ թույլ և դժգույն դուրս եկավ, բայց ընդհանրապես բավարար էր:

Երկրորդ դրաման—«Հյուրերը»—դա Պշիբը ևսկու ամենագեղարվեստական երկն է, ամենախորհրդագործ և ամենասիրվողիկը. Աղամը ապրում է իր կնոջ՝ Բելայի հետ մի դղյակում, բայց իրեն<ից> անբաժան, անմենինի ապրում է և՛ մի հյուր, որ նրան հետեւում է ամեն քայլափոխին, ամեն բռպե, և ո՛չ մի բան Աղամի հոգեկան աշխարհում անհայտ չէ այդ սոսկալի հյուրին, որից Աղամը ո՛չ մի հնարավորություն չունի աղատվելու, ուր էլ որ գնա, միայն մահը կարող է նրան աղատել այդ հյուրի ներկայությունից, որովհետև այդ հյուրը՝ իր խիզն է, իր ձակատագիրը. այդ հյուրից բացի, կան և՛ ուրիշ հյուրեր, և մի անծանոթ մարդ, որ եկել են այս երեկո Աղամի դղյակում պարելու...

Ամբողջ պիեսը շնչում է մահվան սարսափելի պոեզիացով. կյանքը անմիտ հոսանք է, մանր ու փոքր հանցանքների շարան, սերը տանջանք է և խարուսիկ, որով մարդիկ ուղում ին զարդարել կյանքի գժոխքը մի բոպե և ինքնամոռանալ, այնինչ հետո ավելի անհուն բացվելու է տառապանքի վիճը. երջանկության մի կաթիլը մի բոպե արբեցնում է մարդուն, և որպես թե նա գտնում է կյանքի մեջ ինչ-որ նպատակ, ողորմելի որդեր, փոշիներ ճակատագրի ձեռքում և մեծ, անհայտ խորհուրդներին խաղալիք, բայց և թվում է մարդուն, որ զեկը իր ձեռքումն է. միայն մահը կարող է փրկել այդ ոչնչությունից, մահն է բերում ցանկալի երջանկությունը և հանգիստը՝ զնա՞ մեռիր. և սոսկալի հյուրի ներշնչմանը Ազամը վճռականապես որոշում է ինքնառապահություն... Դրաման մահասարսուր, խորին տպավորություն է թողնում:

Աննման խաղաց Զակուշնյակը (Հյուրի գերը), ավելի քան առաջինը՝ հաջող անցավ այս պիեսը, բայց հասարակությունը, ինչպես նկատվում էր, շատ թիւ բան տարավ իր հետ այս պիեսներից...

ԲՐԱՅԻՆՈՒ. «ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ».
ՊԱՏՄԱԿԱՆ-ՀԵՐՈՍԱԿԱՆ ԴՐԱՄԱ

Թեման հայրենիքի պաշտպանությունն է: Սյուժեն՝ Անդրադարձակի հաղթական կոփվը բյուզանդակական հինգերորդ հարձակման դեմ:

Հեղինակը շատ ահեղերում հավատարիմ շի մնացել պատմական փաստերին և մանավանդ ժամանակի մտայնությանը, գաղափարներին: Դրանց զո՞ւ է բերել իր կոնցեպցիային: Իրավե, որ Բագրատունյաց իշխանության այդ շրջանում երկու հակամարտ հոսանքներ կային երկու քաղաքական դիրքավորումներ նախարարական տոհմերի մեջ. մեկը՝ գլոխավորությամբ Սյունյաց իշխան Վեստ Սարգիսի, Հակոված էր գեպի Բյուզանդիան և ուզում էր կործանել Բագրատունյաց պետությունը, Անին հանձնել բյուզանդական կայսրին՝ թե՛ պաշտպանվելու համար արարներից և օրենցօր զրացող սելչուկներից, և թե՛ մղված անձնական շահներից և կրբերից, իսկ մյուսը Բագրատունի զա՞յթ պաշտպանող նախարարներից՝ զլիսավորությամբ Պահլավունի Վահրամ սպարապետի. այս հոսանքին պատկանողները ուզում էին զենքով պաշտպանել աղքային անկախությունը, հողը: Հեղինակը պատմական ճշուաթյամբ ներկայացրել է Վ. Սարգիսին՝ նենդ, խորամանկ, շողոքորթ, զավադիր, որն իր այս հատկություններով կարողացել է իշխաններին լարել Սպարապետի և Գագիկի դեմ, նույնիսկ կարողացել է Գր. Մագիստրոսին զրոգընել Գագիկի դեմ, Պահլավունի այդ իշխանին, որ Գագիկի համ քաջարար կովել էր Բաթարների դեմ:

Դրան ընդդեմ՝ Վահրամ սպարապետը և Գագիկը ներկա-
յանում են շատ նսեմ, թուլ, անձեռներեց, կամազուրիկ: Գա-
գիկը՝ պոռոտախոս, ուղղոնցոր:

Մինչդեռ, ըստ մեր պատմագիրների, Գագիկ Հ-ը հայ
թագավորների շարքում խոշոր դեմքերից մեկն է՝ քաջ, անվե-
հեր, խելոք, զարգացած, ձեռներեց:

Հեղինակը պետության պաշտպանության <համար>
այս բռնկված պայքարի մեջ առաջնակարգ, վճռական դեր է
տալիս մի բռնու թուլացլացիներին՝ արհեստավոր ուամիկնե-
րին: Թոնդրակեցիք այդ ժամանակ արգեն խորտակված,
ոչնչացված էին հենց Գր. Մագիստրոսի զարգուրիկի չնշիչ
միջոցներով, ջարդերով: Հայրենիքի անկախության համար
կովող Գագիկը ներկայանում է մեղ իրքեւ թուլացլացիների՝
ուամիկների պաշտպան, «Նրանց ձեռներն արձակող», և նրանց
կամքով շարժվող: Պետության վուխը, զորքի վերին հրամա-
նատարը սեփական կամք շունեն, դեր շունեն, նախաձեռնու-
թյուն շունեն: Ընդունենք, որ Տնետորության համար է ասում
Գագիկը Վեստ Սարգսին, թե՝ «Բամիկը կկախի ձեղ»: Երբ
Վ. Սարգսիը ասում էր արքային, թե՝ «Եթե մեղավոր ենք ես
և կաթողիկոսը, կախիր մեղ»:

Իհարկե, այս բոլորը չի համապատասխանում պատմա-
կան իրողությանը:

Գր. Մագիստրոսը գանգատվում է, որ թուլացլացիք՝
ուամիկը ղենք է վերցնում մեր դեմ:

Գագիկը պատասխանում է.—«Զենք է վերցնում, ուրեմն
կապրինք»:

Ինչպես կարող է քաջ և կորովի Գագիկը ընդունել, որ
թուլացլացիք են փրկելու երկիրը, և ո՞չ թե ինքը, իր հավա-
տարիմ իշխանները, զորքը: Մագիստրոսը ինքնարդարանում է
ասելով, թե՝ «Բանտարկեցինք թուլացլացիներին, արհեստա-
վորներին, որովհետեւ նրանք քարոզում էին ժողովրդի մեջ»:
(Խոկ Նրանց շեֆը՝ Զենոնը քարոզում է պարզապես հակա-
պետական մտքեր, անհատապաշտական-անիշխանական մըտ-
քեր... «Ինչո՞ւ շինել բերդ, բուրգ, զնանք մեր արտերը վա-
րենք... Կընկնեն թագավորը, իշխանը, կայսերը, կմնա ու-

միկը): Գագիկը պատասխանում է. — «Իսկ հույները գալիս են... ո՞վ պիտի կռվի: Ե՞ս, դուք-ո՞չ: Արհեստավո՛րը, ուստի՛ կը...»:

Կամ թուլացնացու մեկի հետեւյալ արտահայտությունը - «Իշխաններ են, կիախչեն»:

Մի՞թե հեղինակը իրոք այն կարծիքին է, թե բոլոր իշխանները վախկուտ են, գավաճան են, փախչող են. բայց չէ՞ որ, թե՛ մեր պատմության, և թե՛ բոլոր ժողովուրդների պատմության մեջ անհամար են փաստերը, որ իշխանները կովեէ են հայրենիքի համար և մեռել են: Մամիկոնյանների հերոսական ընտանիքը գուրերի ընթացքում ինչըա՞ն անձնազո՞հ հերոսներ է տվել - Վարդան, Մուշեղ, Վահաններ. Բագրատունյաց տունը՝ Աշոտ, Սմբատ. Արծրունյաց տունը, զորօրինակ, սելչուկների գեր կովող և զոհվող Դերենիկ Արծրունին, Թաթուլ Վանանդեցի իշխանը, հենց Գր. Մագիստրոսի հայրը՝ Վասակ Պահլավունին թաթարների գեմ կովեց և ընկավ...

Հեղինակը թե՛ Սպարապետին և թե՛ Գագիկին փոխեփոխ ասել է տալիս. «Եթե ժողովուրդը չի ընդունում կոփվը (չի ուզում), սուրբ է նրա կամքը»: «Կամեցավ ժողովուրդը՝ կիրկվենք, չկամեցավ՝ մենք ոչինչ ենք».—«Թողե՞ք իրան-ժողովրդին: Նա դեմ կկանգնի արհավիրքին, նա մեղ էլ կաղատի»...

Իսկ զորքը, բանակը ժողովուրդը չէ՛, ի՞նչ է: Իսկ զեկավար...

Իհարկե, հեղինակը զիտե, որ ժողովուրդը (և կամ բանակը) առանց զեկավարի չի կարող պատերազմներ մզել, պատմական հեղաշրջումներ անել, ապստամբություններ առաջնորդել, և ուրեմն զեկավար է զարձրել անիշխանական, հակապետական թուլացների մի վարպետի: Հարց է ծագում. այդ ինչպե՞ս է, որ փորձված, հարդված Սպարապետը, որ չորս անգամ, նույն Անիի պարիսպների տակ, զորքի գլուխն անցած՝ հաղթել է նույն թշնամուն և վանել, կամ Բագրատունյաց մեծաշոշակ տօհմի ժառանգը, քաջ Գագիկը շպիտի կարողանան ժողովրդին, բանակին ոգեսրել և տանել պատերազմի, այլ մի խումբ թուլացների շեֆը՝ Զենոնը:

Երբեք համոզիլ չէ, որ նրանք ձեռքիրը ծալեն և սպասեն պասսիվ կերպով հետեւելու Ձենոնին:

Հեղինակը իր հակապատմական կոնցեպցիայի հաջողության համար շատ է նսեմացնում դեկավար իշխանների դերը, սակայն, Հայաստան արշավող արաբներն ու մոնղոլները շատ լավ ու ճիշտ էին ըմբռնել մեր նախարարների դերը. նրանք ամենից առաջ ոչնչացրին մեր նախարարական տները, և ապա ժողովուրդը մնաց շատ դյուրին ստրկացող տարր:

Հեղինակը պատմական իրականության վրա նայում է «պատմաբան» Պոկրովսկիի ակնոցներով և անցյալ իրերին պարագրում է ներկայի ըմբռնումները, եթե միայն այդպես են ներկայի մտքերը:

Արքայամայրը, հակառակ Հեղինակին, շատ ճիշտ է ըմբռնել Գագիկի դերը. նա ստիպում է որդուն՝ Գագիկին անցնել զորքի գլուխը, իր կոչման համաձայն, բայց Գագիկը, երևի Հեղինակի հասկացողության համակիր, սպասում է, որ Ձենոնը գլխավորի շարժումը և փրկե նաև իրան:

Վեստ Սարգիսը խիստ պրիմիտիվ, խորամանկ միջոցներով իշխանների մի մասին զրգում է Գագիկի դեմ: Գագիկը այդ գիտե, գիտե և Սպարապետը. Վասականուշը հայտնել է արքայամորը իր եղբար զավադբությունների մասին, և արքայամայրն ու Սպարապետը պահանջում են Գագիկից, որ ոչնչացնեն այդ ազգագավերին, բայց Գագիկը փիլիսոփայելով, ձեռք չի զարկում նրանց՝ գոնե չեղոքացնելու, և եթե անում է՝ շատ ուշացած:

Յ-րդ տեսարանը, այսինքն պանդոկի և հրապարակի, հաջող է: Գորգի և Մանուկի սիրո ընդհարումը, կերպասի առևտուրը, մրցումը սիրո ախոյանների մեջ: Գաղաքացիների զրուցները, եռուղենք հրապարակում, եկեղեցականների պրովոկացիան: Բախումները: Ինչպես երկու ախոյանները՝ Գորգն ու Մանուկը, Ձենոնին ազատելու համար, մի հայացքով հասկանում են իրար, և հաշտված վազում են Ձենոնին ձերբաղատելու:

Սրտաշարժ է պառավ եղիասի տեսարանը, և նույնպես դադիր պատկերը:

Շատ հաղթակալ է տարված հետեւյալ գրությունը. — Գաղիկի
թագադրման զանգահարումն է. Հենց այդ զանգահարման
միջոցին Գաղիկն իբրև թե արդեն թագավոր օծված՝ մտնում
է Վեստ Սարգսի մոտ, միջնարերդը. մինչդեռ տարեգիրները
վկայում են, որ փառավոր հանդեսներով է օծվել նա թագա-
վոր, այնպես որ այդ շքեղ հանդեսը համարվում է հայկական
երկրի վրա վերջին ճոխ, մեծաշուր հանդեսը: Կարծում եմ,
որ մի կերպ պիտի ակնարկվեր դրա մասին, զգացվեր այդ:
Եվ առջասարակ, Գաղիկը և արքայամայրը շեն ներկայաց-
ված իրենց արքայական շքեղության մեջ՝ թիկնապահներով,
նամեթշաններով:

Հեղինակը հանդես է բերում Այծեմնիկին, իբրև խրա-
խուսչի և պատերազմիկի, մինչդեռ հայկական այդ ժաննա
Դ'Արքը երեացել է ուղիղ մի դար հետո՝ 1130 թվին, Ֆաթլունի
դեմ պատերազմելիս:

Հեղինակը Անիի պանդոկի մասին նոր դարերի պատկե-
րացում ունի, ուր մարդիկ սուրճ են խուսում և նարգիլե քաշում:
Սուրճը XI դարում գործածության մեջ չէր. առաջ հարեցների
մոտ է գործածվել, հետո Ասիայում. Սովորան Սելիմն է Եղիպ-
տոսից մուծել Ասիա՝ 1500 թվականների սկզբներում, իսկ
«սուրճ» բառը շինվել է Վենետիկի Մխիթարյան վարդապետ-
ների կողմից XIX դարում: Առանց թամբակուի նարգիլե չկա.
իսկ թամբակուն Ամերիկայի գյուտից հետո է, XV—XVI
դարերում. իսկ նարգիլեի գործածությունը եկել է Հնդկաս-
տանից շատ ավելի ուշ ժամանակներում: Իջարկե, սրանք
երկրորդական մոմենտներ են:

Ի միջի այլոց ասենք. — Սպարապետը ասում է, թե 60
տարի է կոիկ է մղում, մինչդեռ Հեղինակը ներկայացնում է
նրան 70 տարեկան: 10 տարեկան հասակում դժվար թե կոիկ
մղեր:

Հեղինակը լեզուն ոճավորելու համար կիրառել է արխա-
իկ բառեր, որոնք շատ տեղին են, օրինակի համար. — զինա-
հար, եղուկ, ի բաց, տարածամ, զետ, պարհակ, ուռշ (վոշ),
ստամբակ. բայց միևնույն ժամանակ անտեղի բառեր. վերջ-

նամուտ, աման-աման, Համ(Հըմ, ևս-ի փոխարեն): Կիրառել
է ստիլիզացիայի նպատակով քերականական հին ձեռն:
Սրանք լավ են:

Մեր կարծիքով Հապճեպության դրոշմ կա ամբողջ երկի
մրա, և այսպիսով այս երկից ստանում ենք կինոսցենարիայի
տպավորություն:

Առաջարկում ենք մտքերի ուշադիր փոխանակություն:
այս գործի վերաբերմամբ:

1939

«ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ»։ ԴՐԱՄԱ,
5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ես այն տեսակետին եմ, որ պատմական անցյալը պատկերելու գեպքում պետք է զոնե էական փաստերը և հերոսները ճշգրտորեն ներկայացնել։ Փոփոխություններ կարելի է անհերքորդական և երրորդական անձերի և անցքերի մեջ, բայց երբեք չխեղաթյուրել ձակատազրական փաստերը։ Հեղինակը վահան Մամիկոնյանի պատմությունը շուրջ է տվել, զլիսի վրա է կանգնեցրել։ Ստեղծել է նրա համար նոր ձակատագիր Մեղ հայտնի է, որ Վահանը հարազատ որդին է Հմայակ Մամիկոնյանի և Զվիկի։ Մեր պատմության մեջ Հմայակը սուրբ է կոշշվում, իսկ Զվիկը ժամանակի անվանի, ազնիվ, կրթված, վեհողի կանանց առաջին շարքումն է։ Հեղինակը խեղզել է տալիս Մամիկոնյանի զարմին և նրա տեղը զնում է բարապանի երեխային, Աշխենի և Փառնավագի։

Բոլոր ազնիվ շնորհներով օժաված Զվիկը այդ «ոճրագործությունը» ծածկելու համար, անխողձորեն կտրել է տալիս Աշխենի լեզուն։

Ի՞նչ «ոճրագործություն» է, եթե դայակը անգիտակից է խեղզել՝ քնով ընկնելով, ոմիր չէ այդ, այլ դժբախտություն։

Երբ կարգում ես Հեղինակին, չի պարզվում, թե ինչպե՞ս խեղզեց երեխան։ Թվում է թե Զվիկը՝ մայրն է խեղզել։ Որովհետեւ մոր վիշտը, սուզը, հուսահատական ցավը չի դացվում. տեսնում ենք՝ շար, սառնասիրտ դատող մի կին։

Այս ֆիկցիան հեղինակը նրա՛ համար է արել, որպեսզի ցույց տա, թե ուամիկից ծնվածը միայն կարող է կռվել ուամիկի շահերի համար: Մինչդեռ Վահանը՝ անդիտակից, թե ինքը ուամիկից սերված՝ անձնվեր կռվում է հայ աշխարհի, հայ ժողովրդի պաշտպանության և շահերի համար, և երբ գաղտնիքը բացվում է, Վահանի ուժի, կամքի, էության և գործի վրա բան չի ավելացնում: Պատմական իրերի մեջ քմահան այլանդակում:

Հեղինակը իր այս թեզով հակասում է իրեն իսկ: Դուրս է դալիս, որ իշխանական արյուն ունեցողն էլ կարող է սիրել ժողովրդին և հայրենիքը, և կռվել է դրանց համար, ո՞չ թե ազնվականների: Մամիկոնյանների ընտանիքը IV դարից սկսած մինչև իրենց տոհմի հանգչիլը, մոտ 1000 տարի, շարունակ անդավաճան կռվել են հայ երկրի համար և սպանվել են կամ նահատակվել:

Մեկ շի կարող համոզել Ծահանգուխտի երկույթը: Իբրև թե նա Վահանի եղբոր՝ Վասակի կինն է, որ եկել է Պարսկաստանից՝ լրտեսելու Թերողի օգտին:

Ինչպե՞ս է, որ նրան չեն ճանաչում ո՞չ Զվիկը, ո՞չ Վահանը: Ընդունենք, որ Վասակը Պարսկաստանումն է ամուսնացել և իր մայրն ու եղբայրը հարսին չեն տեսել, բայց ինչքա՞ն շուտ, առանց ստուգելու, ընդունում են նրան իրենց տանը և ամեն բանի մեջ հավատում նրան: Նա Գ. Սյունիի աղջիկն է, Վահանի թշնամու, ժողովրդի դավաճանի: Վահանը, որ սպարապետ է, կենտրոնական անձն, ինչպե՞ս է, որ նրա շրջապատից մեկը չե գտնվում, որ ճանաչե այդ ծպոյալ կնոշը, լրտեսին, կազմակերպողին:

Ծինծու է, հերյուրանք, բռնազրուիկ:

Հեղինակը գրելու շնորհք ունի, կառուցելու և դիալոգներ տալու, թեև լեզուն փայլուն չէ, և կոլորիտ շտվող. պատմական ստիլի մասին հասկացողություն, զգայություն չունի՝ ո՞չ կենցաղի, ո՞չ բառերի: Իշխանները և իշխանութիները գործ են ածում՝ բալաս, բալա ջան, հեշ, սաղական, թալան, հորդա. Արտաշ (կրծատված. Արտաշես):

Հեղինակից սովորում ենք, որ իշխանները ծիրանի ան կրում, և կաթողիկոսները շամբիլներ ունեն Վ դարում: Նույն պես սովորում ենք, որ Սփինքսը հարցեր է տալիս Եղիպառ սում և ո՞չ Հունատանում, նաև այն, որ Աղեքսանդրիան Եղիպառում չէ, որովհետեւ «Հմայակը Աթենքից գնացել է Բյուզանդիա, այնտեղից Աղեքսանդրիա, ապա մի ոտքը քցելով, հասել է Եղիպառոս»:

Չմոռանանք ասել, որ, բարերախտարար, Շահանդուխտար մերկացվում է ժամանակին. Եթե ոչ, մի քիչ ուշ, ամբողջ իշխանական տունը իր հայուքերով պիտի մեռներ, որովհետն Շահանդուխտը հանդիսավոր ճաշի կերակուրները թունավորել էր:

Մեր նոր դրամատուրգների մեջ մասսայական թունավորման սրբումը բավական հաճախակի է. օրինակ՝ «Կարմիրն ու սեր» և արգեն ժանոթ «Գոշ» պիեսի մեջ:

Պիեսում շատ ձգձգված տեղեր կան. անտեղի դիալոգներ, անվերջ հարց ու պատասխաններ: Շատ երկար է հանելուկների շարանը,— և, ի դեպ, թե՛ հանելուկները, թե՛ հատ ու կտոս քայլակ ոտանավորները Վ դարի ծնունդ շեն, այլ շատ նոր ժամանակների:

Հեղինակը, եթե հավատարիմ մնար պատմությանը, իր պիեսը կշահիր, և ինչ-ինչ փոփոխություններով և կրծատումներով հանձնարարելի գործ կլիներ:

Ներկա ձեի մեջ ես հրաժարվում եմ հանձնարարել մրցանակարաշխման:

Է. ՌՈՍՏԱՆԻ «ՍԻՐԱՆՈ ԴՋ ԲԵՐԺԸՐԱԿ»-Ը

«Սիրանո գը Բերժըրակ» շափածո պիեսը շոշափում է մի հետաքրքրական թեմա.—դա XVII դարի ֆեոդալական Ֆըրանսիայի սնանկացած հասարակարդի ցայտուն պատկերն է: Պիեսում, հանձին Սիրանոյի կերպարի, մենք տեսնում ենք ճշմարտության, աղնվության, անձնվեր սիրո և հայրենասիրության համար պայքարողին, աղնվականության և հոգեվորականության անհաշտ թշնամուն, գրականության և արվեստի մեջ դիրք գրավող անտաղանդ մարդկանց դիմակը պատուղին: Սիրանոն, բացի այս, XVII դարի ֆեոդալական Ֆրանսիայի նեխված բարքերը հանդուզն կերպով խարազանող մի անձնավորություն է՝ ոռմանտիկ-հերոսական: Այսպիսով, պիեսում արծարծված գաղափարները ուսանելի և դաստիարակիչ են սովորական հանդիսատեսի համար, և զուր չե, որ անվանի քննադատներ և զրոյներ, ինչպես մեր մեծատաղանդ Մ. Գորկին, բարձր են գնահատել այս զործը:

«Սիրանո»-ն գրված է գրամատիկական փայլուն վարպետությամբ. զործողությունները բեմական են, ինտրիգը շատ ճարպիկ հյուսած և դրավիչ: Ոտանավորը հնչուն, թեթև և ոիթմիկ: Լեզուն հանդիսանում է ֆրանսիական լեզվի ծաղիկը՝ անուշաբույր և գեղեցիկ, պարզ և ճկուն: Ստիլի զարմանալի խտացում: Երկը թաթախված է պայծառ, զվարթ հումորով: Զափաղանց հարուստ է աֆորիզմներով, թևավոր խոսքերով, զմայլելի սրամտությամբ և սրախոսություններով:

Շնորհիվ այս հատկությունների և ոռմանտիկ-հերոսա-

կան տրամադրության ու զաղափարական նպատակասլաց բովանդակության, «Սիրանո»-ն դարձել է ֆրանսիական ժողովրդի ամենասովորելի բանաստեղծական գործերից մեկը և գրեթե կես դար է նա մնում է ֆրանսիական բեմի վրա, նույնը և ուրիշ ժողովուրդների համար:

«Սիրանո»-ի թարգմանությունը ոճի, լեզվի, աֆորիզմների, սրախոսությունների տեսակետից և իրեն շափածո գեղարվեստական երկ, չափազանց գժվարին գործ է, ինչ ոչ անկարելի, սակայն, Արման Կոթիկյանը չաշողել է Հաղթաշարել գժվարությունները և տվել է մեզ մի օրակավոր գործ, որ արժանի է զավասանքի և գրական գնահատանքի: Զափրթեթիւնն է, գրեթե ոչ մի բռնահանգի չանդիպեցի ես: Համեմատելով ուստական թարգմանությունների հետ, շատ և շատ բարձր է նրանցից, հարազատ է և լրիվ:

Ավելացնենք, որ շատ ավելի հեշտ է մի արձակ կամ մի այլ շափածո երկ թարգմանել (հենց նույն Ռոստունի մյուս գործերից), քան «Սիրանո զը Բերժըրակը»: Թարգմանիչը այս գործի վրա աշխատել է ազնվությամբ, սիրով և բարեխրդականությամբ: Եթե հրատարակվի առանձին գրքով, կդառնա մեր ընթերցողների սիրելի գրքերից մեկը:

«Սիրանո»-ն թարգմանված է գրեթե բոլոր կուլտուրական ժողովուրդների լեզուներով, և անշուշտ, պատիվ կարող է բերել մեզ նրա հայերեն թարգմանությունն ունենալ: Այդ մի բաց էր, որ կլցվի: Պիեսի բեմագրությունը, անկասկած, կարող է հարստացնել մեր թատրոնների ուսուերտուարը՝ նկատի ունենալով նրա բեմական և գրական անհերքելի արժանիքները:

Ի միջի այլոց պետք է ասել, որ է. Ռոստունը իր ծագումով հայ է, հորական պապի կողմից նա թոռն է նապոլեոնի մամլյուկ զորավար Ռոստունի (Ռոստամի), որը երեանցի հայ է եղել՝ գաղթած Նգիպտոս, ինչպես վկայում է ֆրանսիացի պատմիչ Գ. Դյօլօրիե-ն՝ «Հնիեանու արմանե», էջ 63, Տիֆլուս, 1856 թ.»:

ԾԵՔՍՊԻՐՅԱՆ ՖԵՍՏԻՎԱԼԸ

Վ. Շեքսպիրի ծննդյան 380-ամյակին նվիրված վեցերորդ համամիութենական հերթական գիտա-հետազոտական կոնֆերանսը և թատրոնական ֆեստիվալը Երևանում հանդիսացավ մեր թատերասեր հասարակության վառ հետաքրքրության կիղակետը:

Շեքսպիրը համաշխարհային գրականության մեծագույն անոններից մեկն է և գրամառուրդիայի բարձր գագաթներից ամենապայծառը, ամենամարդկայինը:

Շեքսպիրի հանճարը իր փառաճեղ հայրենիքց օվկիանոսի պես ծայր է առել, ծավալվել և տարածվել է աշխարհի շորս կողմերով և նրա ոսկե ալիքը հասել է հեռավոր Արարատի լանջերին և գտել է հարազատ մի եղերք—հայ ժողովրդի սիրտն ու հոգին, միտքն ու ճաշակը: Հայ ժողովուրդը այնքան է նրան սիրել ու մեծաբել, և գարճել է նրան իր անփոխարինելին, ազգայինը, հարազատը:

Իմ տպավորությունների մասին զեկուցումների նկատմամբ հետեւյալը կարող եմ ասել:

Շեքսպիրագետ պրոֆ. Մորոզովի և վերածննդի էպոխայի արվեստագետ պրոֆ. Զիվելեզյանի, այս խոշոր մասնագետների զեկուցումները ցուց տվին սովետական շեքսպիրագիտության տեսությունները, որոնք նոր լույսի տակ վերհանեցին Շեքսպիրին, որպիս վերածննդի, հումանիզմի գաղափարների մունետիկի, լավագույն ապագայի համար մարտնչողի, անհատական և հասարակական աղատության ուահվիրացի:

Պրոֆ. երաժշտագետ Ս. Աղամյանի զեկուցումը՝ «Շեքսպիրյան պոետիկայի սկզբունքները երաժշտության մեջ», արժանի է մեծ գնահատանքի, փիլիսոփայական և գիտական խորին հմտություն հայտ բերեց նա մի նյութի հանդեպ, որը շատ նորություններ ուներ և մղում էր խորհրդածությունների:

Մեր թատերագետները և մեր գրականագետները՝ և. Քալանթար, Ս. Հարությունյան, Ս. Մելիքսեթյան, պրոֆեսոր Հ. Գյուլիքմիսյան, Վ. Թերզիքաչյան, շատ բարեխիղճ, լուրջ և շնորհակալ աշխատանք էին տեսել «Շեքսպիրը հայ բնմում» թեմայի վերաբերյալ:

Առանձին ուշագրության արժանի էին Վ. Թերզիքաչյանի «Շեքսպիրի երկերն հայերն թարգմանությունները» և Ս. Մելիքսեթյանի «Շեքսպիրյան կերպարները Պետրոս Աղամյանի կատարմամբ» զեկուցումները: Թերզիքաչյանը հայտնարերեց հայ գրականության մեջ Շեքսպիրի անվան առաջին անգամ հիշատակման թվականը և նրա երկերի ամենահին թարգմանական փորձերը մինչև մեր օրերը: Վեր հանեց թարգմանիչների մի ամբողջ խումբ և արժանի գնահատանքը տվեց ամենահաջող և բեղուն թարգմանչի՝ Հովհաննես խան Մասհայանի երախառավոր գործին: Լրիվ և սպառիչ աշխատանք՝ կատարված զեկուցողի կողմից:

Ս. Մելիքսեթյանի զեկուցը եղավ լեզվի և բովանդակության տեսակետից ամենաայլունը և միաժամանակ ամենաաջակցիչը, մի արժեքավոր, մնայուն մոնողրաֆիկ ուսումնասիրություն:

Ս. Մելիքսեթյանի հետ միասին մեր զեկուցողները պատվուի դուրս եկան իրենց հանձն առած գործից: Նրանք ոգեկուցեցին Պետրոս Աղամյանին, այդ անղուգական հանձարին: Նրանք հայելացրին մեր աշքերի առաջ մեծ Աղամյանի կյանքըն ու գործը՝ այնքան գեղեցիկ, այնքան ներշնչող: Ստեղծեցին մի սրտագին մթնոլորտ, ուր զգում էիր Աղամյանին, տեսնում էիր նրա հավերժացնող և ստեղծագործ ներկայությունը հայ բնմի վրա, հայ բեմական արվեստի մեջ: Աղամյանի ոգեկումը լրացրեց թատրոնի սրահում կազմակերպ-

ված ցուցահանդեսը, որի էքսպոնատները տեղափոխեցին մեզ Աղամյանի Հանձնարուվ փառավորված մեր թատրոնի այդ հոյակապ շրջանը: Ցուցահանդեսում ներկայացրած նոր նկարների միջից իրեն արվեստի իսկական գործ կնշենք նկարիչներ: Քոչարի՛ Շեքսպիրի պատկերը, զեղեցիկ կոնցեպցիա՝ Շեքսպիրը Հայկական տարերի մեջ, Հայաստանի պետածի վրա, բարակեն ֆակտուրալի իլյուզիա:

Թատրոնական ֆեստիվալում մեր տաղանդավոր դերակատարները՝ Ռ. Վարդանյանը, Վ. Վաղարշանը, Հ. Ներսիսյանը, Գ. Զանիբեկյանը ցուց տվին մի անգամ ևս, որ նրանք Հավատարիս են Աղամյանի տրադիցիաներին և ի վեճակի են զարգացնելու և բարձրացնելու մեր արվեստը:

Ազրեցանական բնմի Օթելոն, շնորհիվ երիտասարդ դրամատուրգ Ա. Զեյնալովի կատարման, Հայտ բերեց արեվիլյան զգացություններ, նոր և յուրատեսակ Լավ էին Յաղոն (Թագին) և Գեղդեմոնան (Զ. Տերյան):

Շեքսպիրյան ֆեստիվալը Հայ թատրոնի պատմության մեջ մի խոշոր իրադարձություն էր: Տեղի ունեցած հմտալից դեկուցումները ամագ արտիստների փորձը կհարստացնեն ու երիտասարդներին կտան ներշնչում և ուսուցում՝ ձեռք բերելու Համար բնմական բարձր կուլտուրա:

Մեր կարծիքով՝ Երևանյան այս ֆեստիվալը որոշակի Հաջողությամբ կարողացավ իրականացնել իրեն առաջադրած խնդիրները:

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԴԵՐԱՍԱՆՈՒՅՆԻՆ

1910—11 թթ. Կովկասի Հայ բեմի վրա երեաց այն ժամանակ մեծ հույսեր ներշնչող, շնորհալի քնարական թովչանուրվ փայլող մեր Արուսյակը:

Մեզ՝ ժամանակակիցներիս, նա գրավեց մեղմանուշ ձայնով, իր պայծառ, որոշ ասոգանությամբ, մաքոր հայերինով, իր արվեստի թարմ գեղեցկությամբ: Նա եկալ Պոլսից, ուր այնքան մեծ և փառավոր ճանապարհ էր անցել Հայ թատրոնը, ուր հանդես էր եկալ մեծանուն Հայ գերասան-գերասանուհիների մի քանի սերունդ: Հանճարեղ Ազամյան, Ֆասուլյաճյաններ, Հրաչյա, Սիրանուշ և գարծյալ ուրիշ, հիշատակի արժանի շատ անուններ:

Վաղ պատանեկությունից Արուս Ռոկանյանը շնչել էր իր նախորդների և ժամանակակիցների բարձր արվեստի մթնութառում, կրթվել էր նրանց նուրբ ճաշակի իրականացումներվ և այդ գասահարակությամբ Կովկաս դալով, ամենայն իրավամբ, մեր բեմական արվեստին՝ հաղորդեց արևմուտքի և վրապական շունչը, ըմբռնումները, պլաստիկ ձևերը: Նա դրանով իսկ մերձեցնում էր նույնքան հարուստ, կոլորիտային փառավոր արհելահայ ռեալիստական թատրոնն արևմտահայ թատերական իրականությանը:

Իր 30-ամյա բեղմնավոր գործունեության շրջանում մեր տաղանդավոր արախտառւհին կերտել է երկու հարյուրի հասնող բեմական կերպարներ: Թեև արտասահմանում գտնվելու տարիներին ևս դժբախտաբար անկարող եղա ականատես

Արնելու նրա վերելքին, սակայն Եվրոպայում ևս Արուս Ոսկանցանի արվեստն իր գրվատական արձագանքն էր գտնում: Գաղութահայությունը հրճվում էր, լսելով, որ Հայ թատրոնը գոյություն ունի, չնայած նրան կաշկանդող ցարական շղթաներին, և պահպանվում է, ներկայացնելով Համամարդկային և ազգային դրամատուրգիայի խոշոր ստեղծագործությունները՝ Սոֆոկլես, Եթոսպիր, Մոլիեր, Շիլլեր, Հառլամուման, Իբսեն, Օստրովսկի, Գորկի, Պարոնյան, Սունդուկյան, Շիրվանզադե:

Գաղութահայությունը հրճվում էր նամանավանդ այս իրողությամբ, որ կային բարձր արվեստը մարմնավորող մեծ արտիստներ՝ Սիրանուչշ, Արելյան, Փափազյան, ինչպես նաև մեր Հորելյար Արուս Ոսկանյանը:

Արուս Ոսկանյանին ես տեսել եմ Սալոմեի, Ռառւակնդայնի, Գեղգեմոնայի, Մարգարիտի, Նորայի, Կրուշինինայի, Սոնայի և այլ դերերում: Զգիտեմ, արգյոր իմ տեսած գերակատարումները բավակա՞ն են Հորելյարի արվեստը լիովին գնահատելու համար: Թվում է ինձ, սակայն, որ նույնիսկ այս թվարկությամբ Արուս Ոսկանյանը մարմնավորել է մարդկային մեծ կրքեր, խարակտերներ, տագնապալից ապրումներ, խորունկ հոգեբանություններ: Նրա կատարումը փոխարինում է իրականության, միշտ պահելով խոհականի և հուզականի ներդաշնակ դրսևորման ոիթմը:

Արուս Ոսկանյանի տաղանդի բազմազան գույներն ու երանդները խանդավառել են գիտող հասարակությանը, արթնացնելով և վառ պահելով նրա մեջ գեղեցիկի, աղնվագույնի սերը և ձգուումները: Դեռևս թարմ է նրա բաղմավաստակ ստեղծագործ կարողությունը: Հանդիսատեսը, որ տասնյակ տարիներ վայելել է նրա արվեստի հաճուցքը, միշտ նույն հուզմունքով պիտի ողջունե նրա յուրաքանչյուր նոր ստեղծագործական հաղթանակը:

ԱՆՁՈՒՎԱԿԱՆ ԱՐՈՒՍ ՌԱԿԱՆՅԱՆԻՆ

Ինչպես որ բնության գեղեցկությունները մարմնացել են Զեր մեջ, այնպիս էլ Գեղարվեստի շնորհներն ու հրաշքը Զեր միջոցով առարկայացել են Հայկական բեմի վրա:

1927

Բ Ա, Ռ Ի Ծ Ա, Ն Ա, Պ Ա, Ռ Հ

Դարձյալ մի քանի օր, և դուք, հայ արվեստի ու գրականության տասնօրյակի մասնակիցներդ, Մոսկվայում ցուց կտաք, թե հայ ժողովուրդն ինչ հոգենոր կուլտուրայի տեր է այսօր:

Աշխարհին ցուց կտաք այսօրվա գեղարվեստական կուլտուրան մեր հինավուրց ժողովրդի, որ անհնարին կորովով մաքառել է զարեր՝ պահպանելու համար իր ինքնուրուցնությունը, լեզուն, մշակույթը, ողին, ժողովուրդ, որին պատմությունը վիճակել էր իր մշակույթն ստեղծել արհավիրքների մեջ, զենքի, շառաչի ժխորում, անվերջանալի եղենների մեջ: Եվ դարավոր մաքառումի հնիքը գրումված է մեր ժողովրդի բովանդակ հոգենոր կուլտուրայի վրա՝ Սասնա ծոերի անմահ էպոսը, Խորենացի, Եղիշե, Արովյան, Կոմիտաս...

...Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անզամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնուհետ մեր աշխարհումն էլ քաջության շատ զործեր կան արված՝ զրելու և հիշատակելու արժանի, — երախտավոր պատմահայր Խորենացու՝ հինգերորդ դարում ասած այս խոսքի հաստատումը եղավ հայ ժողովրդի կյանքը նաև այդ դարից ի վեր, մեկ ու կես հաղարամյակ:

Եվ մեր օրերում, երբ հայ ժողովուրդը վստահ ու համարձակ իր բախտը մեկընդիշատ կապել է սոցիալիստական հասարակությանը և կառուցում, շենացնում է իր հինավուրց երկիրը, մենք կարող ենք կրկնել քերթողահայր Խորենացու

Խոսքը: Հիրավի, մեր ժողովուրդն այսօր անում է գրվելու և հիշատակության արժանի գործեր բոլոր ասպարեզներում, նաև հոգեոր կուլտուրայի ասպարեզում:

Մեր արվեստագետները՝ երաժիշտներ, գրողներ, նկարիչներ, դերասաններ, երգիչներ՝ իրենց մեծ նախորդների տրագիֆիաներով զարգացնում են մեր հայրենաշունչ կուլտուրան, նոր ժամանակների, նոր հասարակության պահանջների համեմատ: Ահա՝ այդ կուլտուրան է, որ պիտի ներկայանա տասնօրյակի ընթացքում:

Կասկած չունեմ, որ բոլորդ էլ հրճվանքի մեջ եք այդ առթիվ, ուրախ եք ներկայացնելու հայ գեղարվեստը: Դա, հիրավի, մեծ պատիվ է: Թատիվ է իսկապես լինել հայ մեծ արվեստագետների ժառանգորդը՝ Սայաթ-Նովա, Աղամյան, Սունդուկյանց, Սուրենյանց, Կոմիտաս, Պապայան, Աբելյան...

Մաղթում եմ, որ դուք հանդես գաք այդ պատվի խորին պիտակցությամբ:

Գիտցեք, որ այդ մեծ պատիվը մեծ էլ պարտք է գնում ձեզ վրա՝ արժանի լինել այն կուլտուրային, որին պատկանում եք, լինել նույնքան հայրենանվեր, վարքի մեջ՝ անաշառ, ժողովրդին ծառայելու մեջ՝ անձնվեր, նույնքան վսիմ ու աղնիվ, որքան ձեր մեծ նախորդները:

Մաղթում եմ, որ վառ ու բորբոք պահեք հայրենական ազնիվ կուլտուրայի ջանք, այն կուլտուրայի, որ ընդդեմ բոլոր արհավիրների, ժողովուրդը պահեց, և սսոխն անկարող եղավ խլել նրանից:

Կուլտուրան մնաց անկողոսպանի: Եվ դա պահեց ժողովրդին: Ժողովուրդն էլ պահեց իր կուլտուրան: Եվ նրանք, ձեռք-ձեռքի, աշխարհակործան հողմերի միջով եկան հասան սոցիալիստական պետականության, մի դարաշրջանի, որ ողոված է լենինի լույսով:

Ահա՝ անհնարին դժվարությամբ ժողովրդի պահպանած, որքաղործած հոգեոր կուլտուրայի պահանձացումը պիտի լինի տասնօրյակը:

Լա՛վ զիտցեք, որ ձեր հանդիսատեսը պիտի լինեն ոչ

<ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

...Հայ արվեստը, անցնելով օտար բռնակալների ավերիչ
արշավանքներից, հրից ու սրից, մեր ժողովուրդը հրդեհների
և մոխիրների միջից փրկել, պահպանել է ու մեզ է հասցրել
այդ արվեստի թանկագին նշխարները, որոնցով այսօր պար-
ծենում ենք մենք: Մեր արվեստի այդ կոթողները պահպանե-
լով իրենց գեղարվեստական ներգործության ուժը, այսօր
հանդիսանում են այն հիմքը, որի վրա զարգանում և բար-
գավաճում է Սովետական Հայաստանի սոցիալիստական
արվեստը:

Ուսումնասիրել այդ արվեստը, վեր հանել նրա բազմա-
դարյան պատմությունը, ցուց տալ ամբողջ աշխարհին,
մշակել նրա օգտագործման և այսօրվա սոցիալիստական ար-
վեստի զարգացմանը ծառայեցնելու հետ կապված հարցերը՝
հանդիսանում է մեր՝ գիտությունների ակադեմիայի առաջ-
նահերթ պարտականությունը:

ԱՍՈՒՅԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Մարդ ամեն բանի մեջ գեղեցիկն է որոնում, և գեղեցիկն է գտնում. ամեն բանի մեջ գեղեցիկություն. վերջիվերջո գեղեցիկն է լինելու մեր կրտսը: Գեղեցիկ մարդ, գեղեցիկ կյանք, գեղեցիկ կրոն, գեղեցիկ բարոյականություն, գեղեցիկ հասարակական կտրմ...

Եթե մի բարոյականություն գեղեցիկ չէ, նա բարոյական չէ:

Եթե մի երևույթ, մի վարմունք գեղեցիկ չէ, նա բարոյական չէ...

Պետք է ապրել գեղեցիկ, մտածել, զգալ գեղեցիկ, Հագնել, գնալ գեղեցիկ, ուտել, խմել, քնել գեղեցիկ, մեռնել գեղեցիկ... Ամեն բան գեղեցիկ, գեղեցիկ...

Ճշմարտությունը եթե գեղեցիկ չէ, նա ճշմարտություն չէ, իսկ ինչ որ գեղեցիկ է՝ նա ճշմարիտ է:

Գեղեցիկությունը կատարելություն է և ընդհակառակը:

* * *

Արվեստը պիտի արտահայտե արվեստագետի Հոգին, իրերի Հոգին, մարդու Հոգին: Նա պիտի մեկնաբանե պատկերներով՝ մեր ներաշխարհը: Նա պիտի թարգմանե բնությունը:

Նա պետք է տա ո՞չ թե իրականությունը, այլ նրա զգայությունը, զգացումը և պատրանքը:

Ո՞չ թե, օրինակ, նկարի մեջ երկաթուղու արագությունը

միայն Մոսկվան ու մոսկվացին, այլ մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդները, այլև աշխարհի մյուս ժողովուրդները, այլև երկրագնդի վրա սփռված հայ ժողովրդի զավակները: Այդպես է, քանի որ Մոսկվան այսօր տեսանելի է մեր մոլորակի բոլոր ժայրերից:

Դաժան եղավ ու անսագորույն հայ ժողովրդի պատմական ճակատագիրը: Սովորական թուրքիան հայ ժողովրդի ազգային աղատագրական պայրարք, ձգտումները խեղդեց անլուր ջարդերով, և բյուրազոր հայություն, հալածական ու հայրենազուրկի, ապաստան գտավ աշխարհի չորս բոլորի: Եվ ամեն մի հայրենասեր հայ, կրելով իր մեծագին զանձը՝ հայրենասիրական ողին, ուր էլ որ լինի, կարուտ աշքերով նայում է իր հայրենիքին՝ Խորհրդացին Հայաստանին:

Հայ գեղարվեստի տասնօրյակը՝ Համամիութենական այդ հանդեսը, տոն սիտի լինի և՛ նրանց համար, մեր սփյուռքի հայության համար: Ի՞նչ մեծ հպարտություն և սփոփանք պիտի գտնեն նրանք, տեսնելով, թե հայ ժողովուրդն ի՞նչ գուրգուրանքով է պահպանել մեր պանծալի նախնիների ժառանգությունը, ի՞նչ նոր արժեքներ է ավելացրել արդեն ստեղծված գանձերին:

Մազթում եմ, որ տասնօրյա հանդեսին ձեզ մշտական ուղեկից լինի և՛ այդ պիտակցությունը:

Հիշեցե՛ք իմ խորքերը, որ ես իմ փորձի ու տարիների իրավունքով, մազթում եմ ձեզ՝ փառքով կատարեցեք ձեր ազնիվ գործը և ես հպարտ կլինեմ ձեզանով:

Թո՛ղ աշխարհը տեսնի, որ Խորհրդացին Հայաստանում հավերժանում է մեր մեսրոպատառ զրականությունը, մեր հայրենաշունչ գեղարվեստը:

Բոլոր սրտով մազթում եմ ձեզ բարի հանապարհ և բարի վերադարձ, իմ սիրելի հարազատներ, զավակներ:

տաւ, կամ հոգմի, կամ գետի, այլ նրա զգայությունը, այսինքն՝
զգանք մենք արագությունը:

Պատրանք և իրականություն։ Արվեստը իրականության
պատրանքն է։ Օրինակ, Օթելլոն Շեքսպիրի, մենք իլյուզիոնի
միջոցով գնում ենք և տեսնում իրականությունը—մարդու
հոգին, նախանձ, վրհծ, հուսահատություն, կրքիր։

* * *

Մարդն է բնության խմաստը, և գեղեցիկն է ձշմարտու-
թյան թաղը, կատարը։

* * *

Գեղեցկությունը Պլատոնի իդեաների թագուհին է։

* * *

Գեղեցկությունը, գեղարվեստը ինքնամոռացություն է
բերում, մոռացության պահեր, երշանկացնում է։

* * *

Գեղարվեստն է՝ բնությունը գումարած մարդը։

Մարդը և բնությունը—միասին։ Բնությունը, առավել՝
մարդը։

* * *

Բնությունը խորհուրդ է, արվեստը՝ մեկնիչ, մեկնաբան
(արվեստագետը, բանաստեղծը)։

* * *

Արվեստ, գեղարվեստ կնշանակե ուղղել, սրբագրել, կա-
տարելագործել բնությունը և իրերը... ոչ թե կապկել, կրկնել...

* * *

Արվեստն ավելի ձշմարիտ է, քան իրականությունը,
որովհետև նա ստեղծված է բանաստեղծի հոգու մեջ։

* * *

Գեղարվեստը մեր ներաշխարհի կատարելությունների
դրսնորումն է։

* * *

Բանաստեղծը, արվեստագետը իր սրտի աշքով կտեսնէ

ու կղզա աշխարհի իրերը, երևոյթները, երևոյթների հոգին,
ներքին, հավերժական անփոփի կյանքը:

* * *

Իդեալը միայն արվեստի մեջ է մարմնանում և երեք՝
կյանքում, իրականում: Նա կարող է միայն արվեստի մեջ
իրականանալ:

* * *

Մեծ արվեստագետները մեծ մարդարեներ են:

* * *

Պիտի խմած լինես ամբողջ կուլտուրան, որ արվեստա-
գետ լինես:

* * *

Անձնական վշտի և հրճվանքի միջոցով ներկայացնել
Հավաքականը՝ ահա արվեստը:

* * *

Ամեն դար իր արվեստն ունի, դարի հետ կապված:

* * *

Արվեստը, գրականությունը իր ցոլքը նետում է կյանքի
վրա:

* * *

Արվեստը կրոնի պես բան է. նա ընդունակ է մոռացնել
տալու կյանքը և հաղթելու մացը. միայն պիտի նրան սիրես
ու նվիրվես:

* * *

Եթե չլիներ արվեստագետի աշքը, մարդիկ շատ բան չեին
կարող տեսնել, կամ տեսած լինել:

* * *

Աստվածների ամենամեծ բարիքը, որ տված է մարդ-
կանց՝ դա շափի զգացումն է (Հին հույները):

* * *

Գեղեցկությունը պետք չէ վերլուծել, տարրալուծել, պետք
է ամբողջի մեջ առնել, որովհետև ամբողջն է գեղեցիկ. ման-
րամասները դավաճանում են:

* * *

Արվեստի հոգին անկեղծությունն է:

* * *

Գեղարվեստը, պոեզիան, մուլիկան ճիշտ որ մոռացություն են բերում, ինքնամոռացման և աշխարհամոռացման պահեր են ստեղծում, ծածկում են, այլափոխում են տպեղ, գեշ իրականությունը: Ստեղծել են Հրեշտակներ, որովհետեւ մարդու հոգին ուզում է, որ տեսնի կանայք մարուր, զերծ ֆիզիկական-ֆիզիոլոգիկ պետքերից: Պոեզիայի մեջ մարդը, կինը բանաստեղծականացած է, մահը միստիկանացած, իբրև անցում գեպի անմահություն հոգու:

Սերը պլատոնացած, դարձած անկիրք, աներկրային:

Արվեստը սրբագրում է, ուղղում է, բյուրեղացնում է իրը, մարդը, նրա մարմինը...

* * *

Իղձը, երևակայությունը, պոեզիան, արվեստը գեղեցկացնում են չոր, մերկ, դաժան իրականությունը՝ դիակը, զերեղմանը, մահը: Ուկեզօծում են, զարդարում:

* * *

Խելացի են ֆրանսիացի գրողները, նկարիչները, բայց նրանց պակասում է զգացականը, կիրքը, տարերայինը, նախնական նյութը՝ matière le primière ընազդականը, այն, որ ունեն հին իտալացիք՝ մարմնի, արյունի հուզականի թափը, ուժը, ուժնությունը: Մշակույթ ունին, զաղափարներ, մտածումներ, զարգացած են, զրանով կարելի է բացատրել matière le primière-ի պակասը:

* * *

Մարդն այնքան մեծ է, որքան մեծ են նրա երազները: Արվեստը երազի իրականացումն է: Իրականությունը անցնող կյանքն է, արվեստն է հավերժականը, ճշմարիտը*:

* Ասուլիթ նվիրված է գերասանուհի Ռուզան Վարդանյանին՝ «Երազական և սիրելի Ռուզանին» վերնագրով: Գրված է 1945 թ. երեսնում:

* * *

Ամեն մի ստեղծագործություն անհատական կնիք ունի. անհատն է, որ մեն-մենակ ստեղծում է, գրում, նկարում, քանդակում, համարում: Դրա համար էլ երեխա ստեղծելը երկու հայրով չի լինի, այլ՝ մի երկու հայրով, ինչպես և երկու հեղինակով ստեղծումները, վիճում են:

* * *

Գեղարվեստը (նկար, մուլիկ, շենք, արձան) մարդկային մտքի, զգացումի իրականացած ձևն է: Ինչպես որ էներգիան նյութ է դառնում, այնպես էլ նա, մեր հոգին, նյութ է դառնում, առարկայանում, իր դառնում, իրանում:

* * *

Ո՞չ մի բան այնպես չի նպաստում արվեստին, ինչքան հանգստությունը: Հանդիսա, անդորր, խաղաղ, անվրդով:

* * *

Մենք պիտի եվրոպանանք, բայց Արևելքի ոգով, բայց Արևելքի արելք մեր հոգում:

* * *

Երբեմն տեսնում ես արվեստի իրեր՝ ձեռքով շինած, ոչ թե ձուլած, մեքենայացած—վաղաներ, բրոնզե, պղնձե, ոսկե անոթներ, ու դարմանում ես, թե ինչպես են կլորացրել, նուրբ ձևեր տվել. խելքե-մտքե դուրս գեղեցիկ, անբացատրելի ձևավորումներ,—և միայն մի բացատրություն ունես՝ շինողը հրաշագործ է, նրա ձեռքը՝ կախարդական, ո՞չ մարդկային: Արվեստը հրաշք է, արվեստագործ՝ հրաշագործ:

* * *

<...> Անշուշտ, մեքենան պիտի աղդե արվեստի վրա՝ ճարտարապետության, մուլիկայի, նկարչության, արձանագործության, գեղարվեստի, գրականության վրա, ինչպես աղդում է պեյզաժը, ֆլորան, ֆաունան, կիոնան...

* * *

Զեա արվեստ առանց արհեստի և չկա հանձար առանց աշխատանքի, աշխատասիրության, ջանքի:

* * *

Արքեստը համախ դառնում է արվեստ՝ Հավիտենական արժեքներով, ամեն տեղ և ամեն ժամանակ գնահատված, գեղեցիկ, Հուղիչ:

* * *

Գորգը (խալին) ո՞չ այլ ինչ է, եթե ոչ դաշտերի, ծաղկած մարգերի պատկերը, վերարտադրությունը:

* * *

Արվեստի (պլաստիկ և խոսքի) միջոցով են երեան ելնում նախանշանները նոր ընկերական կյանքի հեղաշրջումների. Հասարակական կարգի նոր ձևերի և այլն: Օրինակ, երբ ֆուտուրիզմը եկավ (ասում էր մեկը ինձ), ես նախազգացի, որ գալու են մեծ փոփոխություններ, հեղափոխություններ, չին կուլտուրացի, չին իրավակարգի դեմ... Պիտի կարողանալ զեղարվեստի մեջ և այսօր նախատեսել գալիքը. թարնված են նրանք արվեստի մեջ, որովհետև արահստաները ունեն մեծ ինտուիցիոն, մարզարեական աշք, տեսնող են, հեռազգացող, օդի մեջ՝ անտեսանելի բացիլների պես ցրված՝ մտքերի և զգացումների ընդունող՝ ուղիոկայան:

* * *

Մենք գիտությունից պահանջում ենք ճշմարիտը. նա տալիս է մեզ միայն ճշմարիտի պատրանքը: Հենց մարդուն էլ այս է պետք զիտությունից, ինչպես և արվեստից:

* * *

Արվեստը ժողովրդական արվեստի վսեմացումն է:

Գրական լիրիկան—ժողովրդական երգի վսեմացումն է: Եյդուս է ե՛ երաժշտության, նկարչության, ուստի, ճարտարապետության մեջ:

* * *

Հունաստանը—Հոմիերոս, զիցարանությունը, առասպելները, որոնց նման չկան գեղեցիկները (Հավասարը չկան) ամբողջ աշխարհի մեջ, ազգերի մեջ, բայ Մարքսի, մարդկության մանկությունն է, չընալ, գեղեցիկ մանկության աշխարհը:

* * *

Ասում են, թե արվեստը հայրենիք չունի: Այս ճշմարիտէ, սակայն ամեն հայրենիք իր արվեստն ունի. ամեն մի ժողովուրդ իր սեփական, ուրույն արվեստը: Հայ ժողովուրդն ունի իր ուրույն արվեստը՝ գրականություն, նկարչություն, երգ, ճարտարապետություն, բաղմագարյան և մեծ արժեքներ, և իր պատվավոր տեղը հին և նոր ժողովուրդների արվեստների մեջ:

* * *

Գեղարվեստ, բանաստեղծություն, ամեն հոգեկան ստեղծագործություն զուտ ազգային են, ինչպես որ անհատական են. միայն հայը կարող էր ստեղծել այս տեսակ Մայր տաճար (Անի), դա հայի ողին է՝ մարմին առած, ձևու ու ոճ ստացած, այդ կերպ և ոչ ուրիշ կերպ: Մեռած քարը հայն այլ կերպ է կենդանացնում, հույնը՝ այլ, ուսւը՝ այլ:

Գեղարվեստը ազգի հոգու գրսնորումն է, մի՛ քանդիք, մի՛ ոչնչացրեք այդ. դա ամենամեծ ոճիրն է արեի տակ՝ սպանել մի ազգի ողին. թողե՛ք նա իր ոճով հասկանա աստղերի երգը, և դրանով է, որ մարդկությունը կհարստանա և աշխարհը կդառնա իսկական գեղարվեստի թանգարան...

* * *

Արարատի ստվերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգերով ու ճարտարապետությամբ սիերճախոս կերպով ցուցը է տալիս աշխարհին, որ ինքը գեմք ունի, իր ձեզ ունի, իր սեփական-անհատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհի, նրա իրերի և նրա խորհուրդների: Ի՞նչ կա ավելի բարձր, քան մի ազգի մշակույթը, նրա հոգու գրսնորումը:

* * *

Միջին դարում վրացիների մոտ զարգացավ ասպետական պոեզիան, ումանտիկան, հայերի մեջ՝ կրոնական երգը, միստիկան, և ճարտարապետությունը, և զիդակտիկական փիլիսոփայությունը, առակներ, գրուցներ...

* * *

Մի ազգի ոճը, երգը, արվեստը, նրա կրոնը, հավատա-

լիքները, սովորուցիչները, ավանդույթները, պատմությունը, լեզուն, խոսքը—բոլորը՝ միասին՝ <կազմում են> մի երկիր, նրա հողն ու ջուրը՝ ոճավորում են, իմաստավորում, բանական դարձնում, ոսկի մշուշով, ոսկեղօծ շղարշով՝ պատում, աղամանդյա փոշիներով ցոլացնում, դարձնում այդ երկիրը հայրենիք, նվիրական, սիրելի, ըղձալի, նրա համար մեռնելը՝ քաղցր, վեհ, անմահություն:

* * *

Ճանաչել մի ժողովրդի պատմությունը, հայրենիքը, նրա արվեստը, երգը՝ կնշանակե տեսնել, շոշափել նրա հոգին, և երբ տեսար և ճանաչեցիր, անպատճառ կսիրես նրան, նրա հոգին ու սիրտը:

* * *

Արվեստը ինքը ազգությունն է, ազգն է. տարրեր ազգեր՝ տարրեր արվեստներ. տարրեր արվեստներ՝ տարրեր ազգեր:

* * *

Տեսա վրացի ժողովրդի սիրտը՝ նրա արվեստը:

Արվեստը՝ երգ, պար, նկար, ճարտարապետություն... նրա սիրտն ու հոգին են:

* * *

Ասում են, թե արվեստի զլուխ-գործոցները ազգում են ինչպես ընության ուժը: Եվ ճշմարիտ է, որ արվեստի մեծ ուժերը ունեն այն շարժողությունը, որ մեզ բարձրացնում են: Արվեստի մեծ ուժերը մեր մեջ լուցնում են մեր ժամանակավոր անհատականության շաղակրատանքը, նրա վրա իշխելով. նրանք մեր մեջ զարթնեցնում են մեր փոքրության, շնչինության զգայությունը, և այսպիսով առժամանակ աղատում են մեր ուսերը ժանր բեռից:

Երբ մենք իշնում ենք լեռներից, մենք մի վայրկյան լավ ենք լինում, այսպես ենք զգում զլուխ-գործոցներին հաճախելուց հետո. նրանք մեզ հեռացնում են մեզնից: Արվեստի էությունը պիտի լինի՝ մեզ բարձրացնե, վսիմին տանի:

* * *

Խառը ոճը (թե՛ նկարչության, թե՛ ճարտարապետության, թե՛ գրականության մեջ) նման է բորբոքված, հիվանդ ուղեղի զառանցանքի, կամ տենգային, երեակայության ու տեսիլ-ների:

Օրինակ՝ Հրեշտային պատկերներ, կարմիր ու սոկի ծովեր, սոկի կարասներ՝ օձեղեն զլխով, կիներ՝ Հրեշտային զլուխներով, երկա՛ր-երկա՛ր ոտքեր, ձեռքեր, մեծ, Հրեղեն բազմաթիվ աշքեր՝ մի զլխի վրա:

* * *

<...>Խորհրդային արվեստը մարդու և հասարակության ապրումների, պայքարների, ձգումների և բնության մեծածավալ կյանքի խորապես զգացված համադրությունն է, և ոչ մտածին գրական սպեկտորներ:

Ստեղծվում է մի նոր, առողջ աշխարհազգացում—զարդացած կուլտուրայի ներդաշնակ կենակցումը բնության հետ: Նրացած, բարձրագույն կուլտուրայի միջոցով հասնել բնության խորունկ զգացությանը, հասնել կյանքի և երջանկության նախնական ամենամարուր ակունքներին:

ԸՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻ

(էջ 13)

Գրել է 1926 թ., Վենետիկում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Հայրենիքաց ամսագիր», Բոստոն, 1926, օգոստոս, № 10, էջ 16—17, Սրվ-Մովսիսյան ստորագրությամբ:

ՀԱՅԱ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(էջ 15)

Գրել է 1942 թ. նոյեմբերի 2-ին, Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Առվետական գրականություն», Եր., 1942, սեպտեմբեր-հոկտեմբեր № 9—10, էջ 41: «Հատընտիրում» (Եր., 1943, էջ 104—105) լույս է տեսել «Զոն հայ ճարտարապետությանը» խորագրով:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

(էջ 17)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Հորիզոն», Թիֆլիս, 1911, մայիսի 6, № 95:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

(էջ 22)

Գրել է 1934 թ. ապրիլի 12-ին, Փարիզում: Առաջին անգամ տպագրվել է՝ «ՀՕԿ», Փարիզ, 1934, № 4, էջ 216—223: Կրտատպված է՝ «Հայրենիքաց ամսագիր», Բոստոն, 1934, № 6716, Հունիսի 9, № 6717, Հունիսի 10: Ինքնագիրչ գտնվում է՝ ԳԱԲ, Խաչակրանի փողոց, № 64:

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 32)

Գրել է 1936 թ., փետրվարի 26-ին, Փարիզում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Ապագա» օրաթերթ, Փարիզ, 1936, մարտի 1, № 90: Ժողովածուներում առաջին անգամ տպագրվել է՝ «Երկրի ժողովածու», հա, 4, Երևան, 1951, էջ 66—69:

Ա. ԹԱՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

(էջ 37)

Ժողովածուի մեջ տեղադրված այս և հետագա բոլոր ասուլիչները քաղաքած ևն բանաստեղծի անտիպ նամակներից, «Հիշատակարանից», ծոցատևութերից, ինչպես նաև տպագրված հոդվածներից:

ՀԱՌԱՎՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՐԹԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ

(էջ 39)

Արտասաննվել է Երևանում, 1955 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Դրական թերթ», Եր., 1955, հունիսի 12, № 22:

Ա.ԹԵՇԵՔՈՒՄ

(էջ 59)

30-ական թվականների վերջերին Ավ. Խաչակրանը ծրագրել է գրել՝ «Ճարտարապետական Հրաշալիքներ, գեղարվեստի Հրաշալիքներ-պատկերներ, արձաններ, վենետիկ, Ֆլորենցիա, Խալեննա, Հռոմ, Նևապոլ, Փարիզ, Մյունխեն, Վեգրե, Բայմե (Մեմե), Շատրե և այլն: Անի, Երևութ, Հռիփսիմե, և այլն, և այլն»: Գրված է աշակերտական մի տեսրի շատիկի վրա: Սկսել է «Աթենքը» («1936 թվի Հնկուեմբերին զնացի Սթենք...») հոդվածը, մինչև «Ներկայիս փիլիսոփայութեան հոսանքները՝ սկեպտիցիզմը...» և այլն: Այս համաձար առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական արվեստ», Եր., 1958, № 10, էջ 53—54: Աթենքին վերաբերող մյուս մտքերն ու գրառուները քաղված են տարրեր ձեռագրերից: Ինքնազիրը զանգված է՝ ԴԱԾ, Խաչակրանի ֆոնդ, № 121:

ՎԵԶՐԵԼԵ

(էջ 68)

Գրել է 1954 թ., «Իմ օրագրից» Էնթավերնագրով: Տպագրվել է՝ «Ակոսա, լիոն, 1936, մայիսի 7:

ԵՐԱ.ՃՇՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄՈՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 75)

Գրել է 1949 թ., Երևանում, Կոմիտասի ծննդյան 80-ամյակի առթիվ՝
Տպագրվել է՝ «Գրական թերթ», Եր., 1949, № 35, սեպտեմբերի 2:

ՀԱՍՎԱԾՆԵՐ ԵՎ ՄՐԱԳԲԱՅԻՆ ՆՇՈՒՄՆԵՐ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄՈՀ
ՀԻՇԱՏԱԿԻՆ» ՀՈՒՇԵՐԻ ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(էջ 79)

Տպագրվում է առաջին անգամ: Խնքնագիրը գտնվում է՝ ԳԱՅԹ, Իսահակյանի ֆոնդ, № 20:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՈՎ

(էջ 85)

Գրել է 1943 թ., Երևանում, Ալ. Սպենդիարովի մահվան 15-ամյակի առթիվ: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական գրականություն և արվեստ», Եր., 1943, № 4—5, էջ 63—64: Հուշերի ինքնագիրը գտնվում է՝ ԳԱՅԹ, Երաժշտական բաժին, ֆոնդ 3—2624, «Հուշեր մեծ կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանի մասին» խորագրով:

ՈՒՄՍՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 90)

Գրել է 1950 թ. Ռ. Մելիքյանի մահվան 15-ամյակի առթիվ: Ընդարձակ մեջբերումներով օգտագործված է Գ. Գյողակյանի «Ռոմանոս Մելիքյան. կյանքը և ստեղծագործությունը» (Եր., 1960) մենագրության մեջ: Առաջին անգամ, ամբողջությամբ, տպագրվել է՝ «Գրական թերթ», Եր., 1973, ապրիլի 20, № 17: Հրապարակումը՝ երաժշտագետ Քն. Գրիգորյանի: Բնագիրը չի հայտնաբերված. մեքենագրված պատճենը գտնվում է Ալ. Թագեկոսյանի, նաև՝ Քն. Գրիգորյանի մոտ:

ԲԱՆԱՍԵՂԾ-ԵՐԳԻՉ ՇԵՐԱՄԻ ԱՆՄՈՒՍ. ՀԻՇԱՏԱԿԻՆ

(էջ 94)

Գրել է 1948 թ., Երևանում, որպես «Շերամ» ժողովածուի (Եր., 1948) առաջարան, էջ 5—6: Տպագրվել է նաև՝ «Սովետական Հայաստան» ամսագիր, Եր., 1948, հունիս, № 7, էջ 37—38:

<ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՏԱՄՆՈՐՅԱԿԻ ԱՌԹԻՆ>

(էջ 97)

Գրել է 1939 թ., Երևանում:

ԴԵԿԱԴԱՅԻ ԶԱՐԴԵՐԻՑ ՄԵԽԸ

(էջ 100)

Տպագրվել է՝ «Խորհրդային Հայաստան», Եր., 1939, Հոկտեմբերի 2,
№ 229, «Բանվոր», Լենինական, 1939, Հոկտեմբերի 14:

Դ. ՇՈՍՏԱԿՈՎԻՉԻ Ա 7 ԱՐՄՅՈՒՆԱՅԻ ԿԱՍՏՐՄԱՆ Ա.Օ.ԹԻԱԾ

(էջ 101)

Գրել է 1942 թ., Հուլիսի 12-ին, Երևանում, Դ. ՇՈՍՏԱԿՈՎԻՉԻ Շ-րդ
արմֆոնիայի կատարման առթիվ: Հազորդվել է Երևանի ուղիոյով: Առաջին
անգամ տպագրվել է ոստիքեն՝ «Խորհրդատորնայա գաղետա», Մոսկվա,
1966, № 113: Հայերեն տպագրվել է՝ «Գրական թերթ», Եր., 1966, սեպտեմ-
բերի 30: Բնագիրը զտնվում է Մոսկվայում, Ալբերտ Գասպարյանի մոտ:

ԿԵՐՊԱՐՎԵՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՍՐԵՆՔ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՋԱՋԱՅԻՆ
ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍՈՒՄ

(էջ 111)

Գրել է 1924 թ., Լույս է տեսել՝ «Հայրենիք», Բոստոն, 1924, օգոստոսի
5, № 3728:

ԱԱՐՅԱՆՔ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱԲՃԵՆ Է

(էջ 116)

Գրել է 1955 թ., Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետա-
կան արվեստ», Եր., 1955, Հունիս, № 1, էջ 9—10:

ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ

(էջ 120)

Գրել է 1940 թ., Երևանում, նկարչի մահվան 15-ամյակի առթիվ:
Առաջին անգամ տպագրվել է՝ «Գրական թերթ», Եր., 1940, օգոստոսի 30,
№ 27:

ԽՈՀ Ա.ԲՈՎՅԱՆԻ ԱՐՋԱՆԻ ՄՈՏ

(էջ 124)

Գրել է 1955 թ. Խ. Արովյանի ծննդյան 150-ամյակի առթիվ: Առաջին
անգամ տպագրվել է՝ «Սովետական արվեստ», Եր., 1955, Հոկտեմբեր,
№ 5, էջ 4—5:

<ՄՈՒՆԱԾ. ԼԻԶԱ. ԶՈՒՌՈՒՄ>

(էջ 126)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Երևկոյան Երևան», 1975 թ., 28 հուլիսի:
Ավ. Խաչակրանի արխիվից քաղել և հրապարակել է Աբաս Խաչակրանը:

ԹԱՏՐՈՆ ԵՎ ԳՐԱՄԱՍՈՒՐԳԻԱ

«ՀԱՆՐԻ ՆԱՎԱՐԱՑԻ»

(էջ 137)

Գրել է 1911 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Հորիզոն», Թիֆլիս,
1911, հունվարի 22, № 14, Ավ. Իս. ստորագրությամբ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆ

(էջ 139)

Հավանաբար գրել է 20-ական թթ. սկզբներին (21—24 թթ.), Վենետիկում:
Առաջին անգամ տպագրվել է՝ «Երևկոյան Երևան», 1964, ապրիլի
11, № 87:

ՄԱՍԵՀՅԱՆ

(էջ 142)

Հավանաբար հատված է շավարտված հուշագրությունից: Գրության
թվականն անհայտ է:

ՍԻՐԵԼԻ ՀՈԹԵԼՅԱՐԻՆ <ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇՅԱՆ>

(էջ 143)

Գրել է 1944 թ., Երևանում, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վ. Վաղարշյանի ծննդյան 50-ամյակին գրական-բեմական գործունեության 30-ամյակի առթիվ:
Տպագրվել է՝ «Սովետական Հայաստան», Եր., 1944, ապրիլի 5, № 68:

(էջ 146)

Գրված է իրեկ ընդդիմախոսություն զրականագետ Վահրամ Թերզիրաշչյանի «Եկեղեցի երկրի հայերևն թարգմանությունների մասին» թեկնածուական դիսերտացիայի: Պաշտպանությունը կայացել է Երևանում, 1945 թ. Հունիսին: Լույս է տեսնում առաջին անգամ:

Ա. ՊԵՏԵՂԾԵՎՈՒԹԻ ԵՐԿՐՈ ԳՐԱՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(էջ 150)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Երկրո», Թիֆլիս, 1906 թ., դեկտեմբերի
17, № 64.

ԲԲԱԲԲՈՒ. «ԵՐԿՐՈ ՀԱՅՐԵՆԻ»: ՊԱՏՄԱԿԱՆ-ՀԵՐԱՍԱԿԱՆ ԳՐԱՄԱ

(էջ 155)

Գրել է Երևանում, 1939 թ. դեկտեմբերի 27-ին: Գրված է իրեկ կարծիք Ք. Գեմբիրյանի «Երկրի Հայրենի» դրամայի մասին, որը մրցանակաւաշխատթան է ներկայացվել «Բարպիոն» ծածկանունով: Խնդնագիրը գտնում է՝ ԳԱԹ, Խաչակրանի ֆոնդ, № 130: Տպագրվում է առաջին անգամ:

«ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿԻՆՅԱՆ». ԳՐԱՄԱ, 5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(էջ 161)

Գրել է 1939 թ. Հունվարի 5-ին, Երևանում: Խնդնագիրը գտնվում է՝ ԳԱԹ, Խաչակրանի ֆոնդ, № 141: Տպագրվում է առաջին անգամ:

Է. ՌՈՍՏԱՆԻ «ՍԻՐԱՆՈ ԴՐ ԲԵՐԺԸՐԱԿԱՐ»

(էջ 164)

Գրել է 1949 թ. Հունվարի 30-ին, Երևանում: Սկզբնապես եղել է Հանձնարարական՝ Հայպետհրատ Ներկայացնելու համար, ապա տպագրվել է թարգմանության հետ որպես առաջարան (էղմոն Խոստան: «Սիրանո զը Բերժըրակ», թարգմ. Արման Կոթիկյանի, Եր., Հայպետհրատ, 1951):

ՇԵՐՍՊԻՐՅԱՆ ՖԵՍՏԻՎԱԼ

(էջ 166)

Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական Հայաստան», Եր., 1944,
մայիսի 5, № 90:

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԳԵՐԱՍԱՆՈՒԶԻՒՆ

(էջ 169)

Գրել է 1941 թ., Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Խորհրդա-
յին Հայաստան», Եր., փետրվարի 2, № 27:

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԱՐՈՒՍ ՌՍԿԱՆՅԱՆԻՆ

(էջ 171)

Գրել է 1927 թ., Երևանում: Տպագրվել է՝ «Չոների ալբոմ», Եր., ՀԲՀ,
1958, էջ 27:

ԹԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ

(էջ 172)

Գրել է 1956 թ., Երևանում: Տպագրվել է՝ «Սովետական արվեստ», Եր.,
1956, մայիս, № 5, էջ 3—4, «Գրական թերթ», Եր., 1956, մայիսի 16:

<ՀԱՅ ԱՐԱԵՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>

(էջ 175)

Գրության թվականն անհայտ է: Տպագրվում է առաջին անգամ:

Ա. Ն Վ. Ա. Խ Ա. Յ Ա. Կ

- Արելլան Հովհ. 138, 170, 173
 Արովյան Խ. 124, 125, 172
 Աղամյան Ա. 167
 Աղամյան Պ. 167—169, 173
 Աղամյան (օրիորդ) 138
 Աթենաս 60, 61
 Աթիլա 71
 Ալիսանյան Ի. 91
 Ալփ-Արսլան 56
 Աղայան Ղ. 121, 122
 Այծեմնիկ 159
 Աշխեն 161
 Աշոտ Բագրատոսի 157
 Ապլա 106
 Ապոլոն 61
 Առաքելլան Ա. 111, 115
 Ավետյան Գ. 138
 Արամազդ 60
 Արիստոկլես 61
 Արիստոտել 61
 Արմենյան Ա. 138
- Բաշինչաղյան Գ. 120—123
 Բասմաջյան Կ. 21, 22
 Բեթհովեն Լ. 106
 Բիղե Ժ. 85
 Բաժենի Վ. 72
 Բրամս Ի. 85
 Բրանդես Գ. 98
 Բրյուսով Վ. 98
 Բուդդա 152
 Բուդդիկի 153
- Գաղիկ 56, 155—159
 Գամառ-Գամիպա 113
 Գինովյարե 106
 Գյոթե Վ. 140, 142
 Գյուլիբանյան Հ. 167
 Գորգ 158
 Գորկի Մ. 98, 164, 170
 Գրիգոր Մագիստրոս 155—157
 Գրիգոր Սյունի 162
 Գունո Շ. 85
- Գանիք Ա. 131
 Գևանծույ 137
 Գը Գիզ 137, 138
 Գելակրուա Է. 132
 Գելութենես 59, 61, 65
 Գերենիկ Արծունի 157
 Գյուլորե Գ. 165
 Գորե Գ. 131
 Գուրյան-Արմենյան 137, 138
 Գեկրել 137
- Եղիաս 158
 Եղիշե 172
- Զակուշնյակ Ա. 153, 154
 Զարիֆյան Հ. 138
 Զեյնալով Ա. 168
 Զենոն 156—158
 Զիմել 117
 Զորյան Բ. 133
 Զես 60, 61
- Էմին Մ. 146

- Թագեկոսյան Ե. 111, 119, 132
 Թաղիկ 168
 Թաթուլ Վանանդեցի 157
 Թամանյան Ալ. 31—38, 40, 87,
 88, 92, 119
 Թավրիզյան Մ. 101
 Թեսոս 59, 61
 Թէրպիհաշյան Վ. 146—149, 167
 Թէրեմեղյան Ռ. 80
 Թէրեմնողյան Փ. 80, 91, 111, 132
 Թորամանյան Թ. 15, 17—31, 34,
 37, 121
 Թումանյան Հովհ. 120—122
- Ժաննա դ'Աբկ 159
 Իբսեն Հ. 170
 Իկիռոս 33
 Ինձիկյան Ա. 8, 9
 Իսահակյան Ակ. 5—8
 Իսահակյան Իսահակ 106, 133
 Լենին Վ. Ի. 144, 173
 Լեռնարդո դա Վինչի 126—128, 132
 Լեռնկալալո 85
 Լեռնյան Գ. 123
- Խայտի 94
 Խաչարյան Ա. 98—100, 107
- Կամարիտ 138
 Կատերին Պը Մեդիչի 137, 138
 Կատրամիդե 56
 Կարա-Մուրդա Ք. 97
 Կարապետյան Ե. 25
 Կարլոս IX 137, 138
 Կոմիկյան Ա. 165
 Կոմիտաս 8, 47, 57, 75—84, 87,
 91, 98, 121, 123, 172, 173
 Կոնդակով 18
- Հակոբ 105
- Հարությունյան Կ. 107
 Հարությունյան Ս. 167
 Հարությունյան 138
 Հառովտիման 170
 Հերա 61
 Հմայակ Մամիկոնյան 161
 Հոմեռոս 181
 Հովհաննիսյան Հովհ. 95
 Հրաչյա 169
- Զվիկ 161, 162
- Ղազարյան Գ. 98
- Մալուկ 94
 Մանուկ 158
 Մանուկյան Ա. 98
 Մառ Ն. 18, 19, 24, 25, 141
 Մասենցյան Հովհ. 139—142, 147,
 148, 167
 Մարգարիտ 137, 138
 Մարք Կ. 181
 Մելիքյան Ռ. 32, 33, 87, 90—
 93, 98
 Մելիքյան Ա. 98
 Մելիքսեթյան Ա. 167
 Մեսրոպ Մաշտոց 57
 Մերեժկովսկի Գ. 65
 Միքայել վարդապետ 24, 25
 Միքելանջելո 130
 Միթթարյաններ 147, 159
 Միթթար Գոշ 48
 Մոմիկ 139, 170
 Մոլիս 130, 131
 Մովսես Խորենացի 172
 Մորոզով 166
 Մուշեղ Մամիկոնյան 157
- Նալբանդյան Մ. 113
 Նապուեն Բ. 165
 Նարագգին 139
 Նավարացի Հանրի 137, 138

- Ներսես Շնորհալի 57
 Ներսիսյան Հ. 168
 Նիցշ Ֆ. 152

 Շահանդուստ 162, 163
 Շահամաթունի 138
 Շերամ 94—96
 Շեքսպիր Վ. 139—142, 146—149,
 166—168, 170, 177
 Շիլեր Ֆ. 170
 Շիրվանզագի Ա. 170
 Շէկբել Ա. 141
 Շոպեննատեր Ա. 152
 Շոպեն Ֆ. 106
 Շոստակովիչ Գ. 101, 102

 Պոկանյան Ա. 169—171

 Պայծառ 94
 Պապայան 173
 Պաւոս 49
 Պարոնյան Հ. 170
 Պերիկլես 65
 Պերող 162
 Պէտոս 28, 57, 59, 65, 105, 177
 Պշիրըշևսկի Ստ. 150—154
 Պոկրովսկի 158

 Ջամալի 94
 Ջանիբեկյան Գ. 168
 Ջիվանի 94
 Ջիվելեղյան Ա. 166
 Ջոկոնդա մոննա լիդա 126—128

 Բասին Ժ. 146
 Բողեն Օ. 132, 133
 Բոլան Բ. 98
 Բոստան Է. 164—165
 Բուստեմ 165

 Մահակ Պարթև 57
 Մայաթ-Նովա 123, 173
- Մարգիս կաթողիկոս 56
 Մարյան Մ. 8, 33, 93, 111—119
 Մերաստին Զ. 129
 Մէլիմ 159
 Միսակ տե՛ս Խսահակյան Խսա-
 հակ
 Միրանուլ 169, 170
 Մժբատ Բազրատունի 56, 157
 Մոկրատև 59, 61, 65
 Մոփոկլես 170
 Մովեդիարով Ա. 8, 32, 33, 85—
 89, 92, 98, 106
 Մտեփանյան Հ. 98
 Մտեփանյան Վ. 25
 Մուլթանով 18
 Մունդուկյան Գ. 170, 173
 Մուրենյանց Վ. 111, 112, 173
- Վագներ Բ. 85, 106
 Վահան Մամիկոնյան 161, 162
 Վահրամ Պահլամունի 155—159
 Վաղարշյան Վ. 143—145, 168
 Վասականուշ 158
 Վասակ Մամիկոնյան 162
 Վասակ Պահլամունի 157
 Վարդան Մամիկոնյան 157
 Վարդանյան Բ. 168, 179
 Վաստ Մարգիս 155, 156, 158,
 159
 Վերդի Զ. 85
 Վրույր Ա. 24, 25, 121
- Տագոր Բ. 142
 Տասոս Տ. 131
 Տարագրոս 111, 112
 Տեմելյան Ա. 147
 Տեր-Մարոքյան Ա. 124, 125
 Տեր-Մինասյան Ե. 79
 Տերյան Զ. 168
 Տիգրանյան Ա. 98
 Տիգրանյան Ա. 146
 Տորշելո 71

<i>Տրդատ</i>	27	<i>Օղանեղաշվիլի</i>	Ա.	86
<i>Տուղթիլ</i>	56	<i>Օլգենբուրգ</i>		18
<i>Փառնավազ</i>	161	<i>Օհանչանյան</i>	Կ.	42
<i>Փափաղյան</i>	Վ.	<i>Օմար Խայամ</i>		142
<i>Փափաղյան</i>	Վրթ.	<i>Օստրովսկի</i>	Ա.	170
		<i>Օրբելի</i>	Հ.	24
<i>Քալանթար</i>	Լ.	<i>Յաթլուն</i>		159
<i>Քոչար</i>	Ե.	<i>Յասովյաններ</i>		169
<i>Քրիստոս</i>	69	<i>Յիղիաս</i>		61
		<i>Յիղայի</i>		94

Հիրվեսոցի Տ. , Ե. 1977

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խ Մ Բ Ա Գ Բ Ի Կ Ո Ղ Մ Ի Ծ	5
---------------------------	---	---	---	---	---	---	---	---	---

ՇԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա.Ծի	13
Հայ ճարտարապետությունը	15
Ճարտարապետ Թորոս Թորամանյան	17
Ճարտարապետ Թորոս Թորամանյան	22
Անգողական Թամանյանի հիշատակին	32
Ա. Թամանյանի մասին	37
<Խոսք Հայաստանի սովորական ճարտարապետների երրորդ համագումարին>	39
Ասույթներ հայ ճարտարապետության մասին	42
Արեներում	59
Վեզըլի	68
Ասույթներ ճարտարապետության մասին	70

ԵՐԱԺԾՈՒԹՅՈՒՆ

Կոմիտասի անման հիշատակին	75
Հասովածներ և ծրագրային հմուշներ «Կոմիտասի անման հիշատակին» հուշերի սևագրությունից	79
Սկիբասներ Սպէնիդիարով	85
Ռոմանոս Մելիքյանի հիշատակին	90
Բանաստեղծ-երգիչ Շերամի անմոռաց հիշատակին	94
<Հայ արվեստի տանօրյակի առթիվ>	97
Դեկադայի զարդերից մեկը	100
Դ՝ Շատակովիչի № 7 սիմֆոնիայի կատարման առթիվ	101
Ասույթներ երաժշտության մասին	103

ԿԵՐՊԱՐՎԵՍ

Հայաստանի Ակադեմիաը Վենետիկի միջազգային պատկերահան-դնուում	111
Սարյանը ամրող աշխարհինն է	116
Մարտիրոս Սարյանի մասին	118

Գևորգ Բաշինչապյան	120
Խոնի Արթուրանի արձանի մոտ	124
<Մոնենա Լիզա Զոկոնդա>	126
Ասույթներ կերպարվեստի մասին	129
ԹԱՏՐՈՆ ԵՎ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ,							
«Հանրի Նավարացի»	137
Հովհաննես Մատենյան	139
Մասենյան	142
Սիրելի նորելլարին <Վաղարշ Վաղարշյան>	143
Վ. Թերգիրաշյանի դիմերտացիան	146
Սո. Պշիբըշևոյն երկու դրամաների մասին	150
Քրարինն. «Երկիր Հայրենիք». պատմական-հերոսական դրամա	155
«Վահան Մամիկոնյան». դրամա, 5 գործողություն	161
Է. Ռոստուսի «Սիրանո դը Բերժըրակ»-ը	164
Ծերպիդրյան Գևանդիվալը	166
Տաղանդավոր դերասանութիւն	169
Անգույնական Սրուս Ռուբենյանին	171
Բարի ճանապարհ	172
<Հայ արվեստի ոսումնասիրության մասին>	175
Ասույթներ արվեստի մասին	176
Ծանոթագրություններ	185
Անվանացանկ	194

ԱՎԵՏԻՔ ԻՍԱԿԱԿՅԱՆ
ԱՎԵՏԻՔ ԻՍԱԱԿՅԱՆ

ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ


Տպագրություն է Հայկական ՍՍՀ Գ.Ա.
արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ս. Հ. Շաղամբան
Գևորգիևստական խմբագիր
Հ. Ա. Գործակալյան
Նկարչական ձևավորումը
I. Ա. Սադոյանի
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. Զաքարյան
Սրբագրիչ
Է. Ա. Սոխիկյան

Վ.Յ. 04377	Պատվեր 211	Հրատ. 4551	Տպաքանակ 7000
Հանձնված է շարվածքի 15/III 1977 թ.: Ստորագրված է տպագրության, 4/VIII 1977 թ.: Տպագրական 12,5 մամուլ+4 ներդիր, հրատ. 6,67 մա- մուլ, պալման. 10,92 մամուլ: Թույլ № 1, 84×108 ^{1/32} , գինը 60 կրպ.:			

Հայկական ՍՍՀ Գ.Ա. հրատարակչություն, Երևան-19,
Բարեկամության, 24 գ.:

Издательство АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24 г.
Հայկական ՍՍՀ Գ.Ա. հրատարակչության Էջմիածնի տպարան



ЦЕНА

АТ

58786